դուքյան բնույթը որոշելու համար միանգամայն անբավարար։ Այդպիսի նյութը քիչ է տալիս հուսալու, որ հիվանդի վրա կատարված հետազոտությունը՝ հատուկ հետազոտությունը կոգնի պատկերն այնքան ցայտուն կերպով նկարագրելու, որ նպատակը՝ դիագնոզի որոշումը՝ իրագործված կլինի։ Վերջապես, լինում են դեպքեր, երբ ամենայն ճշտությամբ արված հետազոտությունը որևէ փոփոխություն միանգամայն չի նշում։ Նման չբջագրությունների մեջ համառ հատուկ հետազոտությունն էլ չափազանց մշուշապատ ապացույցներ է տալիս միայն, որոնց նկատմամբ զգվաբանում ես ասել, թե որտեղից, որ օրգանի կողմից են գալիս դրանք։ Այդպիսի վիճակի մեջ է ընկնում երբեմն քիչըչիչ օրգաններից խրոնիկ հիվանդությունների ժամանակ, խրոնիկ վիրուսներ ինֆեկցիաների դեպքում և այլն։ Հիվանդի վրա կատարված ուշագիր դիտողությունը, կրկնակի հետազոտությունները և, վերջապես, այս կամ այն սպեցիֆիկ մեթոդների գործադրությունը նման դեպքերում երբեմն խոշոր ծառայություն են մատուցում, քիչըչի համար ուղիղ ճանապարհ են ցույց տալիս, հասցնելով նրան հենց այն անցնկությունները, որոնք բացակայել են դիագնոզը որոշելու պրոցեսում։

Կենդանու Habitus-ի բնորոշումով սկսում է ընդհանուր հետազոտությունը։ Habitus ասելով հասկանում են հիվանդի վիճակը հետազոտության միջոցին ըստ մարմնակազմի, դիրքության վիճակի, մարմնի դիրքի՝ տարածության մեջ, խառնվածքի և բնավորության։

Հիվանդի և նրա վիճակի մասին առաջին տպավորությունն ստանդնելով, Habitus-ը առհասարակ կարևոր նշանակություն ունի, մի շարք մանրամասների նկատմամբ տալով այնպիսի անցնկություններ, որոնք կարևոր են առհասարակ ամեն տեսակ հիվանդության դեպքում։ Որոշ դեպքերում այդ ամբողջները հիվանդության դեկավարող և ամենատատանոտեղ սիմպտոմներն են հանդիսանում։

Նկ. 1. Շան կմախքը (ըստ Stang-ի)։

Մարմնակազմը բնորոշում են գլխավորապես ոսկրապանգվածի և մկանային համակարգի զարգացման աստիճանի համեմատությունը և բացառիկ դեպքերում մեր, որինակ, մարմնակազմի մանրամասնությունները թնորոշելիս քիչըչիչը հետևողական է լինում չափազանց պարզական պարզունակ դիտելու։

Նայած ոսկրների և մկանային հյուսվածքի գանգվածին, տարբերում են լավ կամ վատ մարմնակազմ։ Լավ մարմնակազմը մատնիչություն, ուժի և ամրության ապավորություն է թողնում։ Լավ մարմնակազմը թնու-

քյունը նչում է լոյն հոդերով ամուր կաթ ատքերով և մինամուղ մասերի մկաններով։ կրծքի վանդակը լոյն է ու խորը, կողերը սեպ. յան, միջկողային մեծ տարածություններով, քիկունքը՝ կարճ. վակ ու կարճ մեջքն անցնում է մասերի ու լոյն գավակի, խուլոր, երքնին ծանր դյութը պահվում է մատա, ծանր ու կարճ վզի վրա։ Լավ մարմնակազմի գնպում կարելի է հուսալ, որ քոչքերն ու սերքը լավ զարգացած լինեն, ազնիվոդը բավականալուն տարողություն ունենա։ Լավ մարմնակազմ ունեցող կենդանին մարմնով կայունություն է ցուցաբերում այլևայլ վնասակար ազդեցություններին հանդիպ, իսկ հիվանդանալիս այդպիսի կենդանիները ամենադիմացկունն են լինում և առողջացման ավելի մեծ տոկոս են տալիս։ Եվ մեկն որպես բացառություն կարելի է նշել մի քանի հիվանդություններ, ինչպես օրինակ, ձիերի ոնվմատիկ հիմոգլոբինեմիան, Morbus maculosus-ը, ծննդաբերական պարեզը, տավարի ացետոնեմիան, որոնք առավելապես ընտրում են լավ մարմնակազմով ամուր ու լավ սնված կենդանիներ։

Նիհար մարմնակազմ ունեցող կենդանիները քուշլ, վախտ, անզոր, կողքերից, կարծես, տափակ լինեն։ Տափակ կրծքով ու երկար քիկունքով, երկար մկիքով ու բաց պատափոսերով երկար ու նեղ մարմինը պրված է լինում բարակ ու երկար ոտքերի վրա, քևքև, ընր, գոնիկ գլուխը բարակ, երկար ու ճկուն վզի վրա է պահվում։

Նկ. 2. Հորքի ախխոր

Վատ մարմնակազմով ամուր տավարը հաճախ տուբերկուլյոզի զոհ է դառնում, հորքերն առանձնապես հնդուստրիայով են վարակվում պարատիֆով, դիզենտերիայով, ձիերն արագ մաշվում են և մահանում կատարային պնևմոնիաներից, սրվելուց խրոնիկ էմֆիզեմից և սրտի հիվանդություններից։ Վատ կազմված շները հաճախ այլասերակվում են ոսկրերով կամ մահանում ժանաթախտի հետևանքով։

Աղատավոր մարմնակազմը երքնին ասկրակազմի կամ հյուծիչ թոքոնիկ ծանր հիվանդությունների հետևանք է լինում, ինչպես օրինակ՝ ոսկրային կմախքի ամենատուբ փոփոխությունները առնչ են ունենում մատաղաշների ոսկրախից, կովերի ոստեոմալացիայից և խոշերի հոդային ռևմատիզմից։

նշանակությունը այլանգակումներ նկատվում են ախտահան struma-ի, ոչնուզների և այլ ախտահարությունների ժամանակ։

Սեռգմոն վիճակը պատկերացում է տալիս մեզ նյութափոխանակության բարձրանալ մասին։ Այստեղ նույնպես, ինչպես և մարմնակազմը դնահատելիս չպետք է սկսել մանրամասնություններից, որոնք հետազոտում ենթաբաժնիքների մեջ նեղ կարգաբանության (կլասիֆիկացիայի) մեջ են մտնում։ Սնուցման վիճակը որոշում են եղրագծերով՝ նրանց փափկությամբ, կլորությամբ կամ, ընդհակառակը, կոպիտ անկյունավորությամբ։ Հարկ եղած դեպքում օգտվում են շոշափումով, պարզելով ենթամաշկային բջիջանքի հաղեցման աստիճանը ճարպով, նրա պնդությունը, ծավալն ու ավելի խոր մասերի (մկաններ) առաձգականությունը։ Իհարկե, ամենաճիշտ միջոցը կշռելն է, որ չպետք է անտեսել գիտական աշխատանքում, ինչպես նաև խոշոնիկ հիվանդությունների քերապիայում և այլն։ Քնակտ և փորձառու աչքի համար սյտակը էլ ավելորդ են դորձիքները, քանի որ, օրինակ, 400 կգ ընդհանուր քաշում սխալն արտահայտվում է 3—5—10 կգ։

Սնուցման լավ վիճակում գտնվող կենդանին ախորժելի տպավորություն է թողնում փափկությամբ, նրբությամբ և եղրագծերի կլորությամբ, ոսկրները խոր ծածկված են առաձգական, պինդ ու չարժուն մաշկի տակ, ոսկրային ելուստները հարթված են, ոսկրափոսերը ճարպով ծածկված։ Վատ սնված կենդանիների եղրագծերը սուր արտահայտություն ունեն, անկյունավոր են, իրանի ոսկրները ցցված են, գլուխն աչքերն ելուստներով ու խոր փոսերով, կոզերը կարճլի է հաշվվել, փշոտն ելուստները բարձր կատար են կազմում, փորը քաշված է, ամորթուքի հատվածը խորացած է, անուսը (որբանը) խիստ ներս է քաշված։

Նկ. 3. Շան հյուծվածություն (ըստ Stang-ի)։

Պատշաճ սնուցումը վատահելի երաշխիք է տալիս, որ էնեբոլիայի ծախսը կատարելապես հավասարակշռվում է նրա մուտքով։ Այն դեպքում, երբ սահմանային պրոցեսները գերակշռում են դիսիմիլյացիայի պրոցեսներին,—անդամների ավելցուկը կուտակվում է հարթային հյուսվածքներում (պահեստատեղերում)։ Մեծ քանակություններով ճարպ կուտակվում առանձնապես նախատրամադիր են ծանր ցեղերի ձիերը, անդրակի շները, կատուները և մանավանդ խոզերը, որի հետևանքով երբեմն որոշ օրգան-

Նրբի ֆունկցիաների ծանր խանգարումներ են զարգանում։ Այդպիսի դեպքերում տեղի է ունենում Հարպակալում։

Մահացու ամենից հաճախ խանգարումներ հայտարերվում են այլ, անատոմիական հիմունքով, որը կրկնում է հյուծման և հանում է որի ամենադարձը առաջնանը կախեքսիա անունն է ստացել։ Դրա պատճառն են լինում այլևայլ խանգարումները՝ ախորժակի կորուստը, փսխումը, մարսողության և ներծծման խախտումները ապիտոզում, երկարատև լուծերը, նյութափոխանակության պրոցեսների ուժեղացումը բջիջներին քայքայումով անդի ժամանակավոր նյութերի կորուստը մեզի միջոցով, արյունակ՝ դիկոզուրիան շաքարախիտության ժամանակ, ազոտեմիան երիկամների անդի ժամանակ, բյուրեղուրիաները հեմոպոետիկ պրոցեսների հիվանդության ժամանակ, էրիտրոցիտների քայքայումը արյունազրկության ժամանակ։



Նկ. 4. Վարիս խոնկոր

Այլևայլ ապրելակերպերի հետևանքով կենդանիները երբեմն չափազանց արագ են նիհարում և 3—5 օրում կատարյալ կմախք դառնում։ Այդ նիհարումը է ձիերի վրա ինֆեկցիոն անեմիայի սուր ձևի, ինֆեկցիոն էնցեֆալոմիելիտի, սուր խլամախի ժամանակ, բոլոր կենդանիների կատաղության դեպքում, հորթերի ու խոճկորների մեջ պարատիֆի և ապիտոզի յուծի ժամանակ։ Մահացու, նիհարության ամենադարձ առաջանները խրոնիկ ինֆեկցիոն և ինվազիոն հիվանդությունների՝ տուբերկուլյոզի ու պարատուբերկուլյոզի, խրոնիկ խլամախի, պերոսլապոզի, խրոնիկ ինֆեկցիոն անեմիայի, դիկոկոկոզուղի, ֆասցիոլոզի և ալ. հարանների բուսային հիվանդություններ են լինում։ Նիհարությունը երբեմն նկատվում է առանձին օրգանների վրա անգամ ընդհանուր պրոցեսների պայմաններում։ Այսպես պետք է նշել մկանային խմբերի ատրոֆիաները հոդերի անկինդոզի ժամանակ, գոմակի ատրոֆիաները ճյուղած պարոտիդիանների ժամանակ, massetter—նրբինը՝ n. trigminus-ի պարալիզի դեպքում և այլն։

Մարմնի դիրքը տարածության մեջ։ Անասնաբուժին միևնույնն է հիվանդներին ուսումնասիրել, պետք է հետազոտել այլևայլ կեցվածքներում, մարմնի այլևայլ դիրքերում տարածության մեջ։ Հետազոտելիս ամենահարմարն է հանդիսանում կանգնած դիրքը, որը երաշխավորում է համապատասխան բոլոր մանրամասնությունների անթերի կիրառումը։ Մանր կենդանիները հատուկ հետազոտում են պառկած դրությամբ կամ ու-

գանք վրա են նստեցնում։ Մոլոր կենդանիների նկատմամբ հետապնդումը որոշ ժամանակը երբեմն պահանջում են, որ կենդանին դիտավորյալ ընթացքի մղի շարժողության մեջ։ Առողջ կենդանիները երբ իրենց կամքին են ենթարկված, հնչուկներով կարող են իրենց մարմնի դիրքը փոխել իրենց կամքի համեմատ, տալով նրան այն կեցվածքները (պոզանները), որոնք համապատասխանում են նրա կամային իմպուլսներին։ Ի տարբերություն այդ տեսակ կ ա մ ա վ ո ր դ ի ր ք ե ր ի, չինում են նաև հ ա ր կ ա դ ր յ ա լ դ ի ր ք ե ր։ Երբ կենդանին հարկադրված է չինում պահպանել այն կեցվածքը, որն առաջ է բերել հիվանդագին պրոցեսը, հնարավորություն չունենալով իր կամքով փոխել այն։ Դրդապատճառ են չինում ուշագնացությունը, այս կամ այն ցավերը, դյուրագրությունը, քունքությունը, գուցե քիչ երկյուղը, մկանային կամ նեվրալին պարալիզները (անդամալուծություններ)։ Սակայն, հարկադրյալ դիրքերը և մանավանդ պատված դրությունը վերլուծելիս, չպետք է աչքաթող անել, որ կենդանիները համաձայն ուղղակի ցանկության չեն անում անցքից բարձրանալու, որևէ՝ կեր ուտելուց հետո, ծանր աշխատանքից հետո, չոր եղանակին, սաստիկ սառնարյունության հետևանքով և այլն։ Համոզվելու համար, քե կենդանին իրոք է վիճակի չէ անցից բարձրանալու, անհրաժեշտ է չինում այլևայլ հարկադրիչ միջոցների դիմելու—կանչել, ականջներին..պամակին քիքե խփել, մարակով չրխկացնել, համեղ կեր ցույց տալ և այլն։ Եվ այն դեպքերում միայն, երբ չնայած ազդեցության բոլոր միջոցներին և բարձրանալ փորձելիս մատնած ոգնության, դիրքի փոփոխումն անկարելի է չինում՝ հարկադրյալ են ճանաչում այն։ Հարկադրյալ դիրքերը չափազանց արժեքավոր նշան են հանդիսանում, պարզորոշ բնորոշելով քե հիվանդագին պրոցեսը և քե հիվանդի վիճակը։

Ք ի ո ւ հ ա ր կ ա դ ր յ ա լ պ ա տ կ ա ծ դ ի ր ք՝ ռևմատիկ ու ճնշոտիկ հեմոպլոբինեմիայի, տետանուսի վիրջին չրջանի, քնջինկցիոն ճնշեֆալոմիելիտի լեքտրդիական ձևի, ոչնուզնդի խոտորնակ ախտահարությունների և ուշագնացության հետ կապված բոլոր հիվանդությունների կլինիկական պատկերի մեջ է մտնում։ Մոլոր եղջերավոր անասունների մեջ այս դիրքը բնորոշ է հետևյալ հիվանդությունների համար՝ կոլիկի պատված մեալը ծննդատիպությունից առաջ ու նրանից հետո, ծննդաբերական պարեզը, տետանուսի վիրջին չրջանը և տրանսպորտային հիվանդությունը։ Մանր եղջերավոր անասունը, խոզերն ու մանկիկները առհասարակ ծանր, մանավանդ անդրացին պրոցեսների ժամանակ, ավելի շատ պատկած են լինում սրանց անկյուն մտած (չինրը), ցամքարի մեջ խոր քաշված (խոզերը)։ Եքե նրանց փորձում են բարձրացնել, նրանք վիզ են կենում, ականջ ու քիչը մի քանի քայլ են անում և նորից մխճում դիրքում պատկում։ Այդպիսով, եքե հարկադրյալ պատկած դիրքը խոշոր կենդանիների համար կենսաբանական սիմպտոմ է հանդիսանում սահմանափակ քիչով հիվանդությունների համար, բնորոշելով տատապանքի բնույթը, ապա մանրների մեջ շատ հաճախ է նկատվում և հիվանդի վիճակն է նրանցավորում միայն։

Հ ա ր կ ա դ ր յ ա լ կ ա ն գ ն ա ծ դիրքը առավելապես ձիերի մեջ է նկատվում և բնորոշում է անասուն, պլևրիտ, ձիերի պլևրոպնևմո-

Նախ, ձանձ ընչաքցության հետ կապված բոլոր հիվանդությունները, ինչպես նաև ուղեղային մի շարք հիվանդություններ։

Մարմնի նկարագրման պերքերից յուրաքանչյուրը. քե կամավորը և քե հարկադրյալը, կարող է լինել՝ ա) բնական և բ) ոչ ֆիզիոլոգիական։ Վերջինիս մի քանի հիվանդությունների ամենաշահատելի սիմպտոմներից մեկն է հանդիսանում, ակամայից իր վրա ուշադրությունն գրավելով իր արտաքինությամբ և արվեստականությամբ։ Առանձնապես բնորոշ է մարմնի պերքը անասնաուժի ժամանակ։ Այս դեպքում ձիերը կանգնած են լինում ոտքերը տարածած, այնի պես, վիզն ու պոչերը ձգած, քիկնոցքն ուղիղ ու լարված, ականջները հետ քաշած և պոչը բարձրացրած։ Մանր անձնային հիվանդությունների ժամանակ նրանք պահում են իրենց պչուկն անդուլ կամ բնական և կանգնած են լինում կիսատաց աչքերով, ամեն քա-



Նկ. 3. Ձիասանուտ

նին անուսերքը։ Ինֆեկցիան հնցնֆալոմիելիտի ընթացքի ամեն և ուռատանուտի ժամանակ ձիերը պահած են լինում տարածված, վիզն ու պչուկը ձգած, քիչ որում գնալի վիզ պարծած կոշիկ ոտքերը մեռում են ազում, առանց գնանքին դիպչելու։

Հ ա բ կ ա պ բ յ ա յ շ ա բ ժ ո ւ մ ն ե ր ը ձիու պաթոլոգիական լուրջ նշանակություն ունեն և չափազանց քազմատեսակ են լինում։ Դրանց են պատկանում՝ ա) անեպատակ քափառումը, բ) մարզարանային շարժումները, գ) ժամացույցի սլաքի շարժումները, դ) շարժումը գնալի առաջ, ե) շարժումը գնալի հետ, ձանձ կենդանիները, քաշի դրանցից, ունենում են գլանաձև շարժումներ։ Դրանք քարդ, երբեմն լավ համակարգված, չափազանց միակերպ շարժումներ են, որոնք առաջ են գալիս սխալարանային պրոցեսի ազդեցությունից, համապատասխան կենա-

բաններէն դրդուման հնանալէն։ Պարզ որ դիտողի համար քիչ մը, որ հարկադրական շարժումները արտաքին ազդեցութիւններէն հետ փոխադարձ կապ չունեն, նրանք իրենք ակամայ կամ հարկադրական շարժումների ստորակարգութիւն են կազմում։

Ա ն ն պ ա տ ա կ Ք ա փ ա ռ ո ւ մ ը սովորաբար նկատում է գանգուղեղի անատոմիկ ամուսնութիւնների և ֆունկցիոնալ խանգարումների գնդքում։ Բոլոր հիմնադրութեան, մէջքի էնցեֆալիտի (ամբողջական և՛ փրանսիական), բնիկների էնցեֆալոմիելիտի, խոշոր նեղքերավոր անատոմիկ ուսումնասիրութեան, գեներալ ժամանակ՝ կենդանիները ժամերով քայլատում են, անցնելով մի տեղից մյուսը քիչ որ չշարժած վիճակում, ըստ որում շարժումները վատ են համակարգված, կենդանիները ընկնում են, պայքում, արգելքներ չեն նկատում, պատերի, մուրքերի վրա են բարձրանում, մեխանամայն անատարբեր մնալով արտաքին դրգռիչներին, քացատութեամբ, դուցեն մի, լողութեան։ Այդ շարժումները ունեն ու ևոանդուն են լինում և հիշեցնում են ձիու քայլերը գնդի տուն, գնալի իր մըտրուկն շոռալիլու։ Անգամ արգելքներն անզոր են երբեմն շարժումը դադարեցնելու, փոխելով միայն նրա ձևը։ Իր ճանապարհին պատի առաջ կանգնելիս, մի վոտ ընկնելիս, կզդի պատկած, կենդանին չի գադարում իր անգում ստվորութեան գործած "շարժումներն անելուց։



Նկ. 6. Գլխի ձգված վիճակը փորձնգիի ժամանակ

Մ ա ր գ ա ր ա ն ա յ ի ն շ ա ր ժ ո ւ մ ն ե ր ը մեծ մասամբ լավ համակարգված շարժումներ են չրջագծով, որոշ ուղղութեամբ, ընդ որում չրջանի տրամագիծը կամ անփոփոխ է մնում կամ հետզհետե փոքրանում է։ Առաջին գնդքում կենդանիները իրենց ընդունած ուղղութեամբ երբեմն ժամերով են մնում գալիս։ Չրջանի տրամագիծը փոքրանալիս մարգարանային շարժումները վնիր են ածվում ժամացույցի սլաքի շարժումներին, որոնք հանգիստ անպատանչի անկումով են վերջանում։ Դրանք առաջարար ուղեղիկի համապատասխան կենտրոնի, thalamus opticus-ի, մեծ ուղեղի հանգույցների (գանգլիների) ախտահարութեան կամ ուշադնացութեան կամ նեղպանգային ճնշման բարձրացման հետ կապված հիմնադրութեունների ժամանակ զգալուն անցնալատրների մեխանամանի արտաքսման հետևանք են։

Ճ ա մ ա ց ո ւ յ ց ի ս լ ա ք ի շ ա ր ժ ո ւ մ ն ե ր ը ամենից հաճախ տեղի են ունենում ժամացույցի սլաքի պատչամի, երբեմն՝ հակառակ ուղղութեամբ։ Մա—կենդանու ամրողջ մարմնի պատչան է իր որևէ տարի, որպես մի անշարժ կետի շուրջը։ Ժամացույցի սլաքի շարժումներ

նկատվում են n. vestibularis-ի պարկիկի և ուղեղիկի սխտահարչության ժամանակ։ Փորձնականորեն կարելի է առաջ բերել thalamus opticus-ի, nucleus ruber-ի և երկրորդ ոսկևի մասը քայքայելով։



Նկ. 7. Ձգաուժը գնալ առաջ՝ ուղեղային հիվանդությունների ժամանակ (բուա Մակարովի)։

Դ ի պ ք ա ռ ա ջ ո ւ ղ ղ վ ա ծ շ ա ր ժ ո ւ մ ն ե ր ը նկատվում են ինքնիկյուն էնցեֆալոմիելիտի և զրգռման հետ կապված ուղեղի բորբոքման, նեոպլազմատիկ կամ պարազիտար բնույթի այլ հիվանդությունների, ինչպես նաև փորացավի ծանր ձևերի ժամանակ։ Այս դեպքում հիվանդները ցուցաբերում են հաճառ, երբեմն անզսպելի ձգտում գնալ առաջ, որը մեզմացնել կամ դադարեցնել չի հաջողվում։ Շարժումները սովորաբար չոտպորական են և ոչ միշտ են խիստ համակարգված։ Վերջույթների հանախ խանգվում են, նկատվում է հետույքի երերում, գայլում, երբեմն անկում կամ անգամ մարմնի տապալում։ Փոխհարաբերությունները անգործությունը կարող է լինել ծանրակի կամ մարմնի, corpus striatus-ի, ինչպես նաև ոչքի ցանցենու հիվանդության։

Դ ի պ ք հ ե տ ա ռ ա ջ ո ւ ղ ղ վ ա ծ շ ա ր ժ ո ւ մ ն ե ր ը հիվանդու համար երբեմն չարժանաւորի մեկ հնարավոր ձևն է լինում։ Նկատվում է այն ասիակ, ինքնիկյուն էնցեֆալոմիելիտի և ցերեբրաստենիայ ժամանակ ժամանակ և սովորաբար կապված է լինում ծանրակի հոնտարանության և քիչնայի մկանների ընդարձակ հետ։ Հետևի վերջույթների մարմնում, դրսից հետ ընկնելու և համակարգման խանգարման հետևանքով, գնալ հետ ուղղված չարժումը վերջանում է հիվանդու անկամայ կամ անգամ տապալումով։ Շարժողության այս ձևը պարզ նախանձանքն հաջողվում է առաջ բերել ուղեղիկը հետացնելուց հետո։

Գլանաձև չարժումները հանախ նկատվում են մանր հիվանդների՝ չնչի, հաստների և մանուկների քոչուների մեջ։ Այս դեպքում հիվանդ-

նեն պատվում է իր նրկար առանցքի շուրջը։ Հաճախ սահմանափակվում է այդ միմյանց մի կամ անգամ կես շրջապտույտով, այլ դեպքերում շարժումը շարունակվում է այնքան, մինչև նրանց հանապարհին որևէ արգելք չհանդիպեցնի։ Դրանք ամվորապես կապված են n· vestibularis-ի, ուղեղիկի առանցքի կամ նրանց շրջապատող մասերի միակողմանի ախտահարումների հետ։

Խառնվածքը (темперамент) որոշում են արտաքին գրգռիչների դեմ ցուցաբերած ռեակցիայի արագությամբ ու նրա ատրճանով։ Զոփանիչ է հանդիսանում այդերի արտահայտությունը, պատասխան-շարժումները, որինակ՝ ականջների խազը և կենդանու ամբողջ վարքը։ Տարբերում են ժիր ու քունած խառնվածք։

Ժիր միերն այդքի են ընկնում արագ ըմբռնելու ընդունակությամբ՝ նրանք միշտ ուշադիր են, ուշի ուշով հետևում են իրենց շրջապատին, պատասխանելով ականջի խազով, հայացքի փոփոխությամբ, դեմքի արտահայտությամբ արտաքին աշխարհից ստացած ապավորություններին, աշխատանքից առաջ, կերից առաջ անհամբերություն են արտահայտում, շտապելով ուտում են, նրանց շարժումները նուռնուռ են և ուժեղ,— դրանք ամենաարժեքավոր աշխատողներն են համարյա յուրաքանչյուր անասունությունում։

Սակայն ուր արտահայտված ժիր խառնվածքը միաժամանակ ունի նաև որոշ անհարմարություններ, իակ երբեմն կենդանուն աշխատանքի համար միանգամայն անպետք են դարձնում։ Ժիր խառնվածքով օժտված միերը հաճախ չափազանց դյուրագրգիռ են, անհնազանդ, համառ, չար, երկչոտ, հաճախ ձգտում են կապը կտրելու և կարում էլ են, վիրավորելով մարդկանց, կենդանիներին, կոտրատելով շինատրքը և այլն։

Մառնարյան (Ֆլեգմատիկ) խառնվածքն արտահայտվում է միանգամայն հակադիր հատկություններով։ Կենդանին դանդ է լինում, չափազանց քունած, ամամաչարժ ու բութ։

Ընտրական համար խառնվածքը նշանակություն ունի այն առումով, որ նանր հիվանդությունների ժամանակ կենդանու վարքի վրա ուժ կերպով է այն անդրադառնում։ Ատաթիկ ցավի դեպքում առանձնապես անհրաժեշտ է ժիր խառնվածքի ունր կենդանիների համար և, բնդհակառակը, Ֆլեգմատիկներին այնքան էլ չեն անհանգստացնում։ Եվ հակառակը, անդարձին նանր հիվանդությունների ժամանակ ժիր միերը առաջին հայացքից նանր հիվանդի տպավորություն չեն թողնում, ավելի հեշտ են պահպանում իրենց սխորժակն ու քարմությունը, մինչդեռ Ֆլեգմատիկները նույն պայմաններում միանգամայն անտարբեր են դեպի իրենց շրջապատը և անհետաքրքիր են թվում։ Այդպիսով, որոշողը դիտողությունը, անհրաժեշտ է հաշվի առնել նաև խառնվածքի առանձնահատկությունները։

Կոնստիտուցիա (բնակազմություն)։ Անատոմա-ժուքյան մեջ կոնստիտուցիան հասկանում են որպես հյուսվածքների, օրգանների և ամբողջ օրգանիզմի կազմության այս կամ այն առանձնահատուկ բոլոր ապրելությունների կամպլեքսը՝ վերաբերյալ ապրելությունների դեմ ժլմոդ պայքարում։ Այդ ընդհանուր կազմությունը չափազանց տարբեր է յուրաքանչյուր առանձին հյուսվածքի կազմության և յուրաքանչյուր առան-

Ձեռ պրպիռի բնութիւն առնչութեամբ և, այդպիսով, ամեն դեպքում մշտական մնալու իրաւունք չի ներկայացնում։

Կարակուլ ցեղի ոչխարը չափազանց կայուն է համարվում, քանի որ նա հնչուն իրաւունքով է հաշվում Միջին Ասիայի դաժան պայմաններին՝ ջրի պակասութեան, արևադարձային չորի, ազգատիկ կերի հետ, և, ընդհակառակը, խոնավ կլիմայի և առատ կանաչ բուսականութեան պայմաններում փոխանցելիս, նա սկսում է ընտելանում կլիմային և հաճախ մահանում է ստամոքս-աղիքային տրակտի բորբոքումից, պնևմոնիայից և այլն։

Կոնստիտուցիան դնահատելիս պետք է հիշել, որ օրգանիզմի ժառանգական առանձնահատկութիւնների հետ միասին, որ հնչում է չափելի ու դնահատելը, պատկ նշանակութիւն ունեն հիւսվածքների գուտ կենսաքանական հատկութիւնները, որոնք որոշվում են լաբորատոր հետազոտութեան միջոցներով, և բացի դրանից սպրմային պլազմայի հատկութիւնները, նրա գենետիկական կառուցվածքը, որը դրսում է բջջին գարգանալու հնդ նրան արվող ազդութեամբ։

Կոնստիտուցիան, այդպիսով, մեր դրոշմն է դնում ամբողջ օրգանիզմի վրա, անդրադառնալով ոչ միայն անհատի ժառանգութեան, այլև նրա բնախառական ռեակցիաների անհատական բնութիւն վրա (Բոգոմոլեց)։ Թերապեմ համար այս դեպքում առանձնապես կարևոր է ռեակցիան հիվանդոգին այլևայլ ֆակտորների ազդեցութեան հանդեպ։ Այս տեսակետից դեռ Հ ի պ ո կ ր ա տ ի ժամանակներից սկսրեալում են ուժեղ և թույլ կոնստիտուցիա։ Ուժեղ կոնստիտուցիա ունեցող կենդանիները հնչուն իրաւունքով են հաշվում բարեխառնութեան, օդի բարձրացած խոնավութեան, ցուրտ ու մինչանցիկ քամիների հետ, պրկանքներին լավ են դիմանում՝ քաղցի, աստիճ չորվածութեան և մի շարք ինֆեկցիոն հիվանդութիւնների նկատմամբ պակաս զգայունակ են լինում, նակ վարակիչ հիւանդութեամբ հեշտությամբ չեն հիվանդանում։ Թույլ կոնստիտուցիայի տեր կենդանիները այդ տեսակետից միանշանակ հակապիր պատկերն են ներկայացնում։

Կոնստիտուցիոնալ տիպերին ավելի շատ ուշադրութիւն դարձնելու անհրաժեշտութիւնը, որ կարելի լինեք ընտրութեան ճանապարհով անասնապահութեան տեսակետից, աչքի ընկնող տեսակների ստեղծել։ Բժշկական գրականութեան մեջ լայն տարածում է գտել դրանցից Սիգոյի (Sigaud) կլասիֆիկացիան, որը չորս հիմնական տիպ է տարբերում՝ տեսպիկտատոր, մկանային, դիգեստիվ և ուղեղային։ Այս կլասիֆիկացիան կենդանիների վրա փորձնական ճանապարհով չեն պատկվել, քանի որ մի տեսակի սահմաններում օրինակ, տավարի մեջ, բավականաչափ բնորոշ առանձնահատկութիւններ գտնել չի հաջողվում։ Դրիմանալով, այդպիսով, էմպիրիկ ճանապարհով կենդանիների նկատմամբ, այս կլասիֆիկացիան, որպես քառանդամ, բացի դրանից անհարմար է նաև վարչական չափերը կատարելիս։

Այդ տեսակետից ավելի հասուն է հանդիսանում Կրետչմերի (Kretschmer) կլասիֆիկացիան, որը երեք հիմնական տիպ է տարբերում՝ 1) աստենիկ, 2) աթլետիկ (մկանային) և 3) պիկնոտիկ։

Ձիերի կոնստիտուցիոնալ տիպերի ուսումնասիրության վրա շատ աշխատանք դրած Ջայկովը հետևյալ բնութագիրն է տալիս դրանց.

Ա ա մ ն ի կ տիպի համար բնորոշ են՝ երկար կրծքավանդակ, երկար վիզ, քնքուշ գլուխ՝ համեմատաբար քիչ զարգացած ատոքին ծնոտով ու ծամոզական մկաններով և նեղ քաշված փոր։ Լավ զարգացած,

Նկ. 8. Ասիական տիպ

բավականին մեծ քաշք աչքի է ընկնում միջերկրիկացին շորակյացական հյուսվածքի քիչ զարգացումով։ Մենամասամբ մատիկ սիրտը մարմնի ընդհանուր քաշի համեմատությամբ, նշանակալից չափով մեծ է, քան ուրիշ տիպերինը։ Ներշնատատ անոքնևրի ցանցը լավ է զարգացած։ Լյարդը համեմատաբար մեծ չէ։ Բարակ ոտիքներն ավելի կարճ են, քան մյուս տիպերինը։ Այս տիպի ներկայացուցիչներ են հանդիսանում արաբական և անգլիական արշավամիները, ինչպես նաև ամերիկական ու օրլով-ամերիկական վարդուն ձիերը։

Պ ի կ ն ո տ ի կ տիպը համար բնորոշ են՝ կարճ կրծքավանդակ, մատիկ գավակ լյանպիր մակլոքներով, մատիկ գլուխ՝ ատոքին զարգացած ատոքին ծնոտով ու ծամոզական մկաններով, կարճ վիզ ու մեծամասամբ փոր։ Այս կենդանիները աչքի են ընկնում մեծ ուժով, բայց արագաշարժությամբ չեն։ Այս բնութագրին են համապատասխանում արգենները, պերշերոնները, մատամբ ծանր հրետանային ձիերը։

Մ կ ա ն ա յ ի ն տիպը միջին տեղն է բռնում վերև նկարա-

պըրվան երկու տիպերի մէջէն։ Այս տիպի լավագոյն ներկայացուցիչներն են ժարպոյան ու Տանը մէնտանները (խառնուրդները), ինչպես նաև դուժակալչին ու լավ մարմնակազմով օժտված կոլանահոապչին մէները, որոնք այլեւ են ընկնում լավ զարգացած մկաններով, ամուր կմախքով, բավարար ուժով ու շարժունակութեամբ։

Նկ. 9. Պինչոաթկ տիպ։

Ջայգիվի կատարած հատակի (բաբմրուքյան), բրանի երկարության, կրծքի պարագծի (քիսակներին հետևելով) և գառատակի պարագծի չափումները ժարլիացիան վիճակագրության մեթոդով մշակված վերջ ընդհանրի*) հանեցին, հետևյալ տուեալներ։

---

*) Հիմնական ընդհանրները՝

I ընդհանր—բրանի քնք երկարությունը, բարձրությունը։

II ընդհանր — ժասսիվություն (Բյօ). $\frac{\text{կուրծ}}{\text{բարձրությունը}}$

III ընդհանր— կրծքի ծավալը՝ կենդանի քաշին (նիկոլյոյ)՝

$$\frac{\text{կուրծ}}{\text{կրծքի պարագիծը քիսակների հետևում}}$$

IV ընդհանր — կրծքալայնության՝ $\frac{\text{կրծքի լայնությունը քիսակների հետևում}}{\text{կրծքի խորությունը}}$

V ընդհանր — գառատակի պարագիծը՝ բարձրությունը (Մոգավեյ)՝

$$X = \frac{100 \cdot \text{գառատակի պարագիծը}}{\text{բարձրությունը}}$$

VI ընդհանր — կրծքախորության՝ $\frac{\text{բարձրությունը}}{\text{կրծքի խորությունը}}$

«Մկանային սիպի ձիերի պրոֆիլը սովորաբար մինչև գոգին մոտիկ է անցավորվում, մինչդեռ պիկնոմիկներինը՝ մինչև գոգից բարձր է անցնում և միայն վերջում վար է իջնում։ Առաձգիկների համապատասխան պրոֆիլը, ընդհակառակը, մինչև գոգի տակով է անցնում, վերջում վեր է բարձրանում» (Զայցևի)։ Մակայն տարբերությունը հիմնական կոնստուցիոնալ սիպերի մինչև միայն մարմնի կառուցվածքի պուտ ձևաբանական առանձնահատկություններով չի տարբերվում։ Այդ տարբերություններն ավելի խոր են, անդրադառնալով նաև հիմնական սիստեմների ֆունկցիայի վրա։ Ըստ Զևերնորուցկու, կոնստիտուցիոնալ սիպի և արյանիմի ֆունկցիոնալ ղորության միջև որոշ տևական հարաբերակցություն գոյություն ունի։ Այսպես, առաձգիկների քոքերի շնչական տարողությունը ավելի բարձր է, քան պիկնոմիկներինը, արյան ընդունակը, ընդհակառակը, փոքր ցածր է, կալցիումի և միլաքիվի պարունակությունը նույնպես, նշանակալից չափով ցածր է։



Նկ. 10. Մկանային սիպ։

Նշանակալից տարբերություններ են հաստատված աշխուհների նաև ոչխարանքանական հնոտոտուքյան ժամանակ։ Վարպան ձիերի էրիթրոցիտների և հեմոգլոբինի քանակությունն ավելի բարձր է, քան բնանկիր ու քանոզ ձիերինը (ըստ Զայցևի)։ Վարպան ձիերի էրիթրոցիտների տրամագիծը, նրանց մակերեսն ու ծավալը նույնպես ավելի է, քան բնանկիրներինը։

Այդպիսով, կենդանու էքստերյերը անբաժ կապ ունի նրա ներքին առանձնահատկություններին (ինտերյերին) հետ։ Այդ հնարավորություն է տալիս կոնստիտուցիոնալ առանձնահատկությունները օգտագործել ոչ միայն կենդանու աշխատունակությունն ու արդյունավետությունը գնահատելիս, այլև բիրապատիկ անասնաբուծ։

ՄԱՇԿԻ ՀԻՏԱԶՈՏՈՒԹԻՒՆԸ

Մաշկի հետազոտութիւնն ընդհանուր հետազոտութեան խիստ կարեւոր մասն է, քանի որ մաշկին վրայ, ինչպես հայելու մէջ, անդրադառնում են բազմաթիւ ոչ միայն տուր, այլև խորունկ պրոցեսները, առաջ բերելով մի շարք փոփոխութիւններ, որոնք հնչուն ութեամբ են հայտնաբերում պիտի ներկայ։ Ներկայիս ամենից էական դեր են խաղում կլինիկական պատկերում, հետազոտութեամբ ձեռք բերված բոլոր նշանների ու սիմպտոմների մէջ ամենից քննուչ հանգիստանալով, ուստի և դիագնոզ դնելիս վճռական դեր են խաղում, օրինակ՝ մաշկի խոցերը—խլամոկ ժամանակ, այուսացները—Morbus maculosus-ի ժամանակ, մաշկի էմֆիզեմը—խլխլան պալարի (սիմպտոմատիկ կարբունկուլի) դեպքում և այլն։ Ուրիշները վճռականում են ընդհանուր նշանների շարքին, որոնք միայն երանգում են հիմնական պիտին, ասենք բնորոշելու այն, օրինակ՝ մաշկի առաձգականության կորուստը, ուշացած ապաքինումները։ Վերջապես, երբորդները, հնչուն ութեամբ հաղորդում է կապել որոշ օրգանների հիմնական հետ, որ հետազոտում խնամքով կատարված հետազոտութեամբ բացվում է, օրինակ՝ մաշկի ցիանոզը պնեմոնիաների ժամանակ, կոլլապսալ այուսացները, արտի հիմնական ութեանից առաջացած այուսացները և այլն։ Մաշկի փոփոխութիւններին առանձնապես խոշոր նշանակութիւն են տալիս այն դեպքերում, երբ մաշկը առաջիններից մեկն է լինում, որ ազդանշում է, տալով այն էական նշանները, որոնք առանձնապես (արժեքավոր են) դնահատելի են վարակիչ հիմնական ութեանների ժամանակ, օրինակ՝ պնդնախտը—մեծ պիրոպլազմոզի և բաբեսիոզների ենթախումբը—այն դեպքում, ցանը՝ շների ժանտախտի, զարկի, ոչխարների մաշկի ժամանակ, բծերը՝ խոզերի կարմրուկի ու ժանտախտի դեպքերում և այլն։

Մաշկային հետազոտութեան մեթոդիկան շատ պարզ է և սահմանափակվում է դիտում, իսկ երբեմն նաև չափվում գործադրելով։ Շատուկ մեթոդներից երբեմն անհրաժեշտ է լինում միկրոսկոպի ուսումնական դիտելու։

Հետազոտութիւնը երկու բաժին ունի։

I. Մաշկի բնախոսական հատկութիւնները հետևյալ կարգով՝ բուրդը, մաշկի ջերմութիւնը, մաշկի խոցութիւնը, առաձգականութիւնը, հոտն ու գույնը։

II. Մաշկի պաթոլոգիկ փոփոխութիւնները՝ ա) մաշկի ուռուցքները, բ) մաշկի ցանը և գ) մաշկի ամրոզութեան խախտումը։

ՄԱՇԿԻ ԲՆԱԽՈՍԱԿԱՆ ՀԱՏԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Բուրդը։ Ընտանի կենդանիների մաշկը ծածկված է խիստ քրտով, որի կաթիլների վրա ուժ կերպով անդրադառնում են տյեսնվող հիմնական պրոցեսները։ Ի հարկե, պաթոլոգիկ փոփոխութիւնների մեջ կոմպետենտ լինելու համար անհրաժեշտ է պատկերացում ունենալ նորմայի և այն գործոնների մասին, որոնք բուրդի վրա ազդեցութիւն են գործում. այս մանրամասն դնահատման համար անհրաժեշտ է փորձառութեան մեթոդով որոշ չափանիշ ստեղծել։ Առողջ մեծերի բուրդը փափուկ է, հարթ, փայլուն ու պինդ

նատածը։ Բացի մշտական և ժամանակավոր այլևայլ գործոններից—կեղեք, կլեմայից—խոշոր նշանակություն ունեն պահպանման ու կերակրման պայմանները և դրանց միջև մաշկի խնամքը։ Մեռուցման վիճակի և բրդի հատկությունների միջև եղած կապը վաղուց է վեր ընդգծում են պրակտիկները։ Վատ սնված, աշխատանքով չարչարված ձիերի բուրդը անմաքուր պահպանման ու անբավարար կերակրման դեպքում կորցնում է իր փայլը, միլա դղրդված է լինում, հաճախ կպած, ավելի երկարում է, մաշկի վրա կիպ չի պառկում և հեշտությամբ պոկվում է։

Մեծ քվով անասուն ու ձի պահելիս բրդի վիճակը, այդպիսով, լավ քննարկելի է տալիս այն մասին, թե ինչպիսի հոգատարությամբ և ապահով կենդանին մարզուց։

Այդ փոփոխություններն առանձնապես սուր արտահայտված են լինում որոշ հիվանդությունների ժամանակ։ Երբեմն բավական է մի հայացք պղնձ կենդանու վրա, որ նրա բրդի վիճակը՝ դղրդված, կոպիտ, փայլ—

Նկ 11. Ձիու քոս (քոս Strongy-ի)։

ղուրկ, պոկվող բուրդը՝ ինչ որ խանգարումի կասկած պարզելուն։ Նախ և առաջ պետք է նշել խրոնիկ ընթացք ունեցող քե, ինֆեկցիոն և քե ոչորտային հիվանդությունները, որոնք կապված են անզատությունների հետ, ինչպես օրինակ՝ խլախտը, ձիերի ինֆեկցիոն անեմիան, տուբերկուլյոզը, պարատուբերկուլյոզը, տալմարի փոսցիոլյոզը, ատամբոս—ակիքային որակի կասորները և փորլուծի հետ կապված բոլոր հիվանդությունները։

Սուր ինֆեկցիոն պրոցեսները, եթե մեկայն նրանք բարձր ջերմով են ընթանում և անզատությունների հանգեցնում են պարմանափորում, համապես բրդի փոփոխություններով են ուղեկցվում, որոնք, ինչ է, ամբողջ էլ սուր արտահայտություն չեն ունենում։ Այդպես են, օրինակ, ձիերի տարափոխիկ պնևմոնիաները, գիշամախտը, Morbus maculosus-ը, պի-

*տարբերվում, ինքնկցման անեմիան, խոշոր եղջերավոր անասունների պե-
բեզոնեմիայի և այլն։*

*Անդամասպան խանգարումներն հետ կապված հիվանդություններ
համար չափազանց սխեմատիսկ է ս ւ շ ա գ ա ծ մ ա գ ա ի ն ք յ ո ւ ն ը։ Հիվանդ կենդանիներին երկար ժամանակով պահպա-
նում են ձմեռվա երկար բուդը, որը մարմնի վրա աշքի է ընկ-
նում ցեղատիպերի նման։ Դրա նման մի բան նկատվում է նաև
այլ աշխարհներ, երբ ձմեռվա առաջ բուդն ուշանում է։ Ի հարկե, բա-
ցի այլևայլ պաթոլոգիկ պրոցեսներից, նման փոփոխությունները կարող
են կենդանիների անուշման, պահպանման ու չահագործման սխալներից
հետևանք լինել։*

*Մազի ու մաշկի մեջ կապը խախտելիս երբեմն մազը խոշոր չափով
թափվում է՝ բուդը մնալով և թափվում։ Բացի մազաթափություն
չբջանակներից, խոշոր բջջաթափություն ունեցող հիվանդություն
վերջում առաջացող կենդանիների վրա, որպիսի՝ ձիերի պլեբոպնեմոնիա-
յի ու պբէոպի, Morbus maculosus-ի, խոզերի ժանտախտ ժամանակ։
Մի քանում բան է նկատվում գառիկով (մկնդեղ), անդիկով, եղջերասուն-
կով տված ունեցող խրոնիկ թունավորումների ժամանակ։ Մշտական բջջա-
թափություն նկատվում է այնհատև խրոնիկ հիվանդություններ՝ տա-
վարի ֆոլիկուլոզի, պիկոկոկոզուլոզի, խրոնիկ պիրոպլազմոզի, ձիերի
խրոնիկ ինֆեկցիոն անեմիայի, խոզերի Ֆիննոզի ու սկոբրուտի ժամանակ։*

*Մասամբական բջջաթափություն հետևանքն է լինում մաշկի որոշ հատ-
վածների կամ նրա համարյա ամբողջ մակերևույթի կնդուքյունը (ալոպեցիա)։
Ամհամանախտ (անգայլին) ալոպեցիաները առվորաբար մաշկի պարզապես
հիվանդություններին հետևանք են լինում, քանի որում նրանցից մի քանիսը
բորբոքական փոփոխություններով են ուղեկցվում։ Բացի դրանից, որն ըն-
տանի բույր անասուն կենդանիների մեջ կնդուքյամբ է բնորոշվում, ան-
հրաժեշտ է նշել շների սկոբրիոզը, herpes tonsurans-ը, favus-ը, ինչպես
նաև բոլոր կաթնասուններին վիրամաշկային պարազիտներին՝ ոջիլներին,
լվերին, տզերին։*

*Բ ր զ ի ա լ ո պ ե ս ի ա ն — բնախտական երևույթ է ծեր կեն-
դանիների համար։ Սպիտակ մազերը հայտնվելը հաճախ ծեր ձիերի ու
շների վրա է նկատվում։ Կարճ ժամանակաշրջանում արագ ալևորումը ան-
հատական պաթոլոգիկ նշան է։ Այդ երբեմն հանդիպում է համատարած խոզերի
ու շների ժանտախտի, ավելի սակավ՝ ձիերի տարափոխիկ պլեբոպնեմո-
նիայի և ինֆեկցիոն անեմիայի ժամանակ։*

*Մ ա զ ե ր ի հ ա մ ա ռ ո ւ մ ը՝ երբ որոշ հատվածներում մազերը
կարծես խուտուտ են լինում, նկատվում է երբեմն ձիերի վրա herpes
tonsurans-ի դեպքում։ Այն դեպքերում, երբ մեռացած մասի ծայրը վրձինի
պես ճզճզոտում է, մաստոյական ախտահարության ժամանակ խառնված
բորդի ապակրությունն է առաջանում (trichorrhexis nodosa)։*

*Մաշկի ֆիզիոլոգիան։ Մաշկի տարբեր հատվածների ջերմու-
թյունը խոշոր տատանումներ է ցուցաբերում ջերմության ժուռքի,
արտաքին՝ արյունատար անոթների ցանցի խտության և ջերմարձակման
առնչությամբ։ Ձիերի մաշկի ջերմությունը որոշելու համար ամենից ա-
վելի պիտանի են ականջները, ոտքերը, կրծքի կոմնական մակերևույթները,*

խոզերինը՝ դունչը, ականջները, տավարինը՝ եղջյուրների հիմքը, ականջները ու ոտքերը, շներինը՝ քթի ծայրը։ Ճաք բրդով կամ երկար մազերով (ճակատի մազափունջը, թաշը) լավ պաշտպանված տեղերում, ինչպես նաև այն հատվածներում, ուր մաշկի մակերեսները շոշափվում են (ոտնուկ), ջերմությանն զգայիորեն բարձր է լինում, քան բաց տեղերում (կրծքի ու փորի կողմնակի մակերեսները, ոտքերը և այլն)։ Մակայն վճռոշ հանգամանքն այստեղ—արյունատար անոթների ցանցի խտությունն է։ Այնպիսի տեղամասերում, ինչպես օրինակ, քթի շուրջը, շրթունքները, ականջները, դանդը, որոնք բաց են, մաշկը նշանակալից չափով ավելի տաք է, քան ուրիշ, անհամեմատ ավելի լավ պաշտպանված շատ տեղերում։

Հետազոտությանն մեկ մեթոդը շոշափումն է։ Մաշկի ջերմաչափումը բացառիկ տակով դեպքերում են կատարում միայն։ Շոշափելով ձեռքով մարմնի մակերևույթ տեղամասերը պատկերացում են ստանում ջերմության և նրա տատանումների մասին։ Զգիտակցող պրիմիտիվ լինելով, անմտամիանալիով այս եղանակը փորձված պրակտիկի ձեռքում կատարելագործ արդյունքներ է բերեն և արդյունքները հատուկ ջերմաչափերով ստուգելիս, ընդհանուր գծերով հաստատվում են։ Այս մի անգամ և ընդմիշտ է, մի կողմից, փորձառության խոշոր նշանակությունն անառարկելի ապացուցում է, մյուսից՝ մարդու նուրբ զգայարանի խիստ զարգացած զգայունությունը։ Քանի որքան մեծ են ջերմության տատանումները տաքացող կենդանիների մարմնի մակերևույթին, ցույց են տալիս մի շարք հատուկ աշխատություններ. այդպես, Կոլբն ավելացնելով, ձիու ջերմությունը կրծքի պատի վրա 35,2° է, կապանքի վրա՝ 13—15° և սրտի միջին ակոսում՝ 11,5°։ Փոքրիկ փոփոխությունները վրիպում են ընդհանրապես զգայի աչքից։

Որոնք պաթոլոգիկ նշաններ են դիահատվում նորմայի սուբ չհզումները մեջ, որոնք արդեն հասկած չեն առաջ բերում իրենց ծագման վերաբերյալ։ Սրանց կարգին են պատկանում ջերմության սուբ անկումը, նշանակալից բարձրացումը և, վերջապես, հոմատրպական (հոմոյոպիկ) օրգանների՝ ականջների, ոտքերի՝ ջերմության անհամաչափությունը։

Մաշկի ջերմության ընդհանուր վայրկյանը է՝ ջերմության in recto անկումի և արտաշնչվող օդի հոսանքի առնչման հապաղությամբ, մոտավոր կոլլապտի ահեղ սիմպտոմ է համարվում։ Բացի դրանից, մաշկի ջերմության վայրկյանը նկատում են ուշադրության հետ կապված բոլոր հիվանդությունների ժամանակ՝ ձիերի ինֆեկցիան հնձելիս ժամանակ և չժամանակ, տավարի ծննդաբերական անդի և ացետոնեմիայի, արյան ատամ կորատի ժամանակ և անդի սկզբնական շրջանում (ամանավանդ տավարի)։

Մաշկի որոշ անգամատների համեմատական ջերմաչափումներ նկատում են տարածված պատահիկների դեպքում։ Ականջի սուբ ատենում նկատվում է սրտի քուլության և անեմիաների ժամանակ։

Ջերմության ընդհանուր բարձրացումը, երբ մաշկը շոշափելիս տաք է լինում, նկատում են անդի, ջերմահարության, վնասվածքային անհանգստության, ինչպես օրինակ, փորացավի, պրպիոի հետ կապված հիվանդությունների ժամանակ, ինչպես նաև

որոնք պոլիտեխնիկական սուր ուժեղացման դեպքում։ Նիստ սրոշակի առաջամասով առճամանափակվում բարձրացումներով մաշկով ծածկված արգանակներ և հյուսվածքներ՝ պլեքսայք, ջոպանք, ուղեղապատառակներ հիվանդացման մասին են ազդանշում։

Համաչափ տեղամասերը ու գույգ օրգաններ մաշկի ջերմոտության տարբերությունները ախտաբանական ֆոկուսների գոյության մասին են վկայում։ Ցնդող ժամանակ, մանավանդ խոշոր ելքերատոր անատոմիաների ու մեծերի վրա, համարեա հայտարերում են, որ չոչոփելիա մի ակամայից տաք է լինում, մինչդեռ ջյուռը, առաջուց պես պաղ։ Մինչևայն բանը համարեա նկատում են տալարքի ելքերությունների հետ համեմատած վրա։

Մաշկի թացությունը։ *Մաշկը չոչոփելիա, մանավանդ մեծերով ու բացով ծածկված տեղամասերում, ձեռքը յուրահատուկ թացությունն է պատճառում, որն առաջ է գալիս շնորհիվ քրտնքի մշտական գոլորշիացման չոչոփվող մակերեսից։ Արտաքին բարձր ջերմության, լարվածության հետևանքով քրտնաբաժանումն ուժեղանալու դեպքում գոլորշիացումը բավական չի լինում ամբողջ անկրնաբ (քրտինքը) հեռացնելու համար,—քրտինքը կաթիլում է բերքը և կաթիլներով ձևով հավաքվում է մաշկի մակերևույթին՝ հիմնականում քրտնում է։ Ձեռ. վրա քրտնքի ամենաառատ տեղերն են ոտքերի ներբանը, վիզը, անուկները, ամոթոցքի հատվածը, ականջները, աչքերն ու բերանախոռչը։ Այն տեղերում, ուր չկում է լինում, օրինակ, մաշկի հատկերի վրա՝ ընտանքի տակ, քրտինքն արագ ապրատակ վերածում է գոլորշու, որը չորանալով բերքը կպցնում է, գործնականում այն կոչում ու ժանեկապատ։ Քոչոր եղջերատոր անատոմիական քրտնումն ավելի տակավ է նկատվում և առճամանափակ է լինում, պակաս խոնավությամբ քրտնելով, քան ձեռ։*

Երբ քրտինքը երևան է գալիս մակերեսային անոթների արյամբ ազատատարում։ Հետևանքով մթնոլորտայն առաջ մաշկի երևույթ—այն առոն է լինում և անուրախ տեղուցիկ։ Սառը քրտինքի արտաքինությունը՝ հիմնականում համարյա անհատական վիճակի նշան է և նկատվում է ծնոտ տատանոցի և պնդոցի պատասխանքի դեպքում, կոլլապսի վիճակում, ինֆեկցիոն հիվանդությունների վերջին շրջանում և այլն։

Պաճուճական միջոցներից անհրաժեշտ է նշել մաշկի քրտնումն ու շորությունը։

Տարբերում են ընդհանուր քրտնում և առճամանափակ կամ տեղային։

Ընդհանուր քրտնումը նկատվում է համեմատ տեղային տեղերի տատանոցի, տատանոցի ցայտերով ընթացող հիվանդությունների դեպքում (ձիերը հիմնականում, փորացավ), տանը շնչարգելությունների, արյան շրջանառության խանգարումներով ուղեկցվող սրտի հիվանդություններին, էնդոկրինային օրգանների՝ անատանուհի, էպիլեպսիայի ժամանակ։ Գետը և նշել կրիտիկական (ճգնաժամային) քրտնումը մարմնի կենսունակության շրջանում, տարափոխիկ պնևմոնիայի, դիզենտերիայի, թոքախիկ տենդի ժամանակ, ինչպես նաև քրտնումը ազդեցիների, պիլոկարպինի և ատրոպինի պրեպարատների գործադրից հետո։

Տեղային քրտնումը արտահայտվում է մաշկի միայն որոշ տեղամասերի քացությամբ։ Ամենից հաճախ կապակցում են

այն պերիֆերիկ ներվերի տրավմատիկ վնասվածքներով կամ ողնուղեղի բորբոքական հիվանդություններով։ Առատ քրտնաթորումը կրծքի կողմնակի պատերի վրա առաջանում է միայն լայնացման դեպքում՝ առաջի պատռվածքի ծանր ախտահարման։

Մաշկի հորդությունը (անհիդրոզ) քրտնագոյացման ամբողջական դադարումն է կամ կտրուկ պակասումը հյուծման (մանավանդ ծեր կենդանիների) դեպքում, երիկամների, ապենդիցիտի մեծ քանակությամբ ջուր կորցնելիս, կամ մշտական փսխումի հետևանքով, ինչպես նաև անդների ժամանակ։ Առանձին ուշադրության արժանի է տավարի քրտնահոտությունը, խոզի դեպքի և շան քրի դեղձերի անկրկնելի հոտությունը, որ կենդանու վատ ինքնազգացողության հետևանք է։ Հիշված անդերի մշտական քայլ ու առաջ մաշկը ծանր հիվանդությունների ժամանակ միանգամայն չորանում ու տաքանում է, հաճախ կեղևակալում ու ճաքճքվում է։ Քոչոր հղիների վրա անասունի վիճակը որոշելիս նշանակություն ունի առանձին կաթիլների մեծությունը, ինչպես նաև այն արագությունը, որով հայտնվում են այդ կաթիլները քրտահյութին շոշափով սրբելուց հետո։



Նկ. 18. Քիս գոնդուբյան (բաս Stang-ի)

Մաշկի առաձգականությունը։ Երիտասարդ և առողջ, լավ սնված կենդանիների մաշկը ալքի է ընկնում բարձր առաձգականությամբ. եթե վարձես հավաքել ու ծալք անել, նա անմիջապես կուղղվի և իր նախկին տեսքը կընդունի։ Երբ ննջամաշկային բջիջները բավականին պարզացած է լինում, առաձգական մաշկը մարմնին հպարտում է այն ախտածնի կլորությունը և եղրագծերին այն ճերմակությունը ու ավարտվածությունը, որով ալքի է ընկնում փայփայած ու կուշտ կենդանին։ Մշտական բարվածության այդ վիճակը հետևանք է՝ ա) մեծաքանակ քրտնության՝ արյան ու ավիշի կուտակման մաշկի անոթներում և մեջհյուսվածքային ճնգքերում (մաշկի տուրգորը), բ) մաշկի առաձգական ու մկանային ապրանքի հատկության, ինչպես նաև գ) ընդհանուր ներվային առնության վիճակի։ Մաշկի տուրգորը նվազելիս նրա առաձգականությունը նշանակալից չափով բվում է—դառնում է կաշու, չոր և ոչ առաձգական, դժվարությամբ ծալք է հավաքվում, որը դանդաղ, երբեմն ½—½ րոպեի ընթացքում է ուղղվում։ Այդ առանձնապես սուր է արտահայտված աստիճանի վրա։ Նման արագ զարգացող անոմալիաներ հաճախ են նկատվում ծանր յուծի, առատ (արյունհոսությունների) արյունազեղումների, ասենջոլեցի փսխումի և, վերջապես, կոլլապսի ժամանակ։ Կենդանու վիճակի

քարկոծման հետ մաշկին առանում է իր նախկին տուրգորը և նորից առաձգական է դառնում։

Երանիկ հիվանդությունների ժամանակ տուրգորի իջեցման և ներմաշկային բջիջների ատրոֆիայի հետ միասամանակ տեղի է ունենում նաև մաշկի առաձգական ատրճանի ատրոֆիա, որի հետևանքն են լինում ամենալի կոչուն խանգարումները։ Մաշկը կորցնում ապագած է դառնում, տակավ-ճաշած, ծալք հավաքելիս, որ ամեն ինչքան ուշ ամեն անգամ չի հարթվում, բնորոշ ճաղ է ստանում։ Նման փոփոխությունները նկատվում են ապրանքի էխինոկոկոզի, լեղաքարային, տուբերկուլոզի առաձգայնացիայի և պարուսուբերկուլոզի ժամանակ։

Ատեղծման բարձր աստիճանն է առաձգականության կատարյալ հատատոր, որը նկատվում է հենց մաշկի խրտնիկ բորբոքման, օրինակ՝ քոսի, անաբիտոզի, ձղձղման էկզեմայի ժամանակ և այլ դեպքերում։ Էլաստիկ թելերի ու ներմաշկային բջիջների ատրոֆիայի հետ միասին խրտնիկ գրգռման ուշնկցվում է շարակցական հյուսվածքի պերսճումով, հետագա հնճոտացումով ու վերջին չերտի հղկվածացումով։ Այդ տեսակի փոփոխություններ անվերադարձների պրոցես են պատկերացնում և բուժման չեն ենթարկվում։

Մաշկի հոտը։ Մաշկաճարպի, քրտինքի և անջատվող էպիդերմիսի քայքայման մշտական պրոցեսները, որ ցնդող նյութերի գոյացության հետ են կապված, բնական կենդանիների մաշկին, յուրաքանչյուր տեսակի համար տվեցիկի հոտ են հաղորդում։ Այդ հոտի բնականոնությունը (տատանությունը) բորբոքման դեմ բիմում է, մաշկի խնամքի, մաքրման, կենդանու քոզոցման ատելության։

Որոշ պաթոլոգիկ պրոցեսում տեսք է ձեռք մաշկի համար խորթ հոտեր, ինչպես նաև նրանց չափազանց աստիճանները։ Դրանց են վերաբերում՝ ացետոնի սխտորձելի հոտը՝ ատլարի ացետոնեմիայի ժամանակ, անասիսի—քաղցրահոտ հոտը հոտքերի ապիտակ լուծի ու պուտրեֆիկ ժամանակ, պիսկի հոտը՝ շների շատ ապրատի հիվանդության և ոչխարների պանդրնատին ծագիկի դեպքում, քաղցրահոտ սրճան անասիսի հոտը՝ շների ժանտախտի ծանր ձևերի ժամանակ, մկնի հոտը՝ շների ու նապների մերսիմիմուլոզի պատահական դեպքում և, վերջապես, շշմեցնող պտրշահոտ հոտերը մաշկի պանդրնների ժամանակ։

Մաշկի զույնը։ Ոչխարների, ապիտակ խոզերի, ապիտակ շների ու կատուների, ինչպես նաև քաշուների մաշկը միանգամայն պարկ է մաշկի պիգմենտից և նույնը վերաբերում է։ Այդ հնարավորությունն է տալիս նկատելու նրան վրա պաթոլոգիական ամենաբնական փոփոխությունները, որոնք չբիզապատ սրճան գանգակի և հատկությունների փոփոխությունների հետևանք են հանդիսանում։ Ատեղծվելիս մաշկը ձեռ մատերը խիտ պիգմենտավորված է և մուգ-գորշագույն պատ ներկված, բայց հետագայում ապիտակ և նախշուն կենդանիները, ապիտակ նշանների տեղերում։ Այդպիսի պիգմենտներում հիվանդության պրոցեսի համար հյուսվածքների պաթոլոգիական բնորոշ փոփոխությունները նկատվում են, անհրաժեշտ է լինում վերտանել տեսանելի լորձաթաղանթների վրա։ Դրանց պատկանող խանգարումներից խոշոր նշանակություն ունեն հետևյալները՝ մաշկի կարմրացումը, պաշտոնը ու գիանոզը ու գնդիացումը։

Ընտանի կենդանիների մաշկի կաթմրացումը մշտապես տեղի ունեցող է լինում, տարածվելով որոշ տեղամասերի վրա միայն։ Իրենց ծագումով նրանք լինում են հեմորագիկ և հիպերեմիկ։ Կաթմրացման բնույթի որոշումը խոշոր դիֆերենտիկ նշանակություն ունի, քանի որ այն քույլ է տալիս իրենց հետ կապված հիվանդությունները տեղեկանալու։ Հեմորագիկ կաթմրացումները մաշկի մեջ, նրա երկու կամ ենթամաշկային բջիջների մեջ տեղի ունեցած արյունազեղումի հետևանք է։ Դրանք հաճախ տեղի են ունենում հեմորագիկ պիտեզի այլևայլ հիվանդությունների ժամանակ և միաժամանակ նկատվում է հեմորագիաների հետ տեղեկանքի լորձաթաղանթների վրա։ Իրենց ձևով ու տարածումով հեմորագիկ կաթմրացումները լինում են մերթ կետավոր, մերթ պուլավոր (ճյուղավորված), այլ դեպքերում այլևայլ մեծության բծերի պես։ Առանձին օջախների միակցության հետևանքով երբեմն գոյանում են բավականին խոշոր բծեր, որոնք տարածվում են մաշկի ամբողջ տեղամասերի վրա։

Դրանց սկզբած տեղերն են մարմնի մակերեսի այն մասերը, որոնք բարակ ու քնքուշ մաշկով են ծածկված։ Ամենից հաճախ լինում են փորի վրա, ազդրերի ներսի կողմը, ընդում, կրծքի ու փորի կողմնակի մակերեսի վրա և այլն։ Քարակ արյունազեղումները կաթմրի կամ մուգ-կարմիր են, հետզհետե նրանք ավելի մուգ են դառնում և վերջ ի վերջո դառնում են գույլ-սև-կանաչավուն, դեղնավուն կամ կանաչավուն երբեմն։ Մաշկային արյունազեղումները ամենից հաճախ խոզերի ու շների վրա են հայտնաբերվում։ Խոզերի վրա հայտնաբերվում են ժանտասիրտ ու կարմրուկի, սիբիրախտի, անգլիկոնիայի ու սկորբուտի ժամանակ։ Շների վրա զարգանում են արյունաթրիծ (բծավոր) հիվանդության և մակերեսների ժանտասիրտ ժամանակ։ Ձիերի վրա երբեմն հայտնաբերում են Morbus maculosus-ի և ինֆեկցիոն անեմիայի դեպքում։

Մաշկի երևոյթ արյունազեղումներ լինելիս, դուրս հկած արյունը խառնվելով փոշու և մեխանիկական մասնիկների հետ, սրտով ջրանում է, դառնալով սև-կարմրագույն կեղևներ, որոնք շատ պինդ են լինում, սակայն, մաշկի մակերեսի հետ զոդված։

Հիպերեմիկ կաթմրացումները հաճախ ծավալուն են լինում և երբեմն մարմնի մակերեսի բնդարձակ մասն են գրավում։ Դրանց առաջացման պատճառ է մաշկային մազանոթների ցանցի լայնացումը, որոնց մեջ գրա հետևանքով բավականաչափ արյուն է հավաքվում։

Նայած արյան հատկություններին ու նրա քանակության, մաշկի ախտահարված տեղամասերը ցուցադրում են վարդ-ադույն, կարմիր, ալ կարմիր, կապտավուն կամ մուգ կապույտ գունավորում։ Սրանց տարբերությունը հեմորագիկ կաթմրացումից այն է, որ մատով ճնշում գործադրելիս կարմրությունը հետևությամբ անհետանում է, մինչդեռ հեմորագիկների դեպքում կարմրությունը կայունորեն մնում է։ Հիպերեմիկ կաթմրացումները ամենից հաճախ նկատվում են խոզերի բարակ ու քնքուշ մաշկի վրա, կարմրուկի, սնափքցնեմիայի, ժանտասիրտի, անթրաքսի և այլ հիվանդությունների ժամանակ։ Մաշկի հիպերեմիայի հաճախ պատճառ են լինում մաշկի իրեն հիվանդությունները։ Դրանց վերաբերում են հերպեսը

դանազան ցանկեր, որինակ՝ հնդկացորենի և եգիպտացորենի հիվանդությանց ժամանակ, կիզելիության, քոսի, շների ախտաբուծ և այլն։

Ջ ր ա ն ո ց։ Մաշկի ու լորձաթաղանթների կապտավուն գունավորությունը կիանոզ անունն է առացել։ Առանձնապես սուր աչքի է ընկնում խոլերի դեպքին, երբեմն և ախանջների կապտավուն գունավորությունը, քնչացնների կոտորի մուգ-կարմրագույն գունավորությունը։ Այդ անսովոր փոփոխությունների պատճառն է արյան ծանրարձանացած հեմոգլոբինով, որն իր հերթին պարզանում է որպես արյան անբավարար օքսիդացման հետևանք։ Օքսիդացման պրոցեսները ծանր խանգարումներ ստում են գալիս նախ և առաջ քոքերի պարենխիմատոզ հիվանդություններին, քոքերի արյունայլ սեռական բորբոքումներին, նրա լյարդացման և ատրոֆիաների ժամանակ, բնչպես նաև առաձանում ախտահարության, բորբոքման, պատռվածքի, ընչման և այլ դեպքերում։

Սրտի դոքտանելության խանգարումից կիանոզը զարգանում է միոկարդիտների, միոկարդիոպատիաների, էնդոկարդիտների, սրտի սուր լայնացման ժամանակ և սիրտը էքստրասիստոլով անցնելիս։

Մ ա շ կ ի դ ո ւ ն ա ա ո ւ թ յ ո ւ ն ը հաճախ է նկատվում խոլերի և ժանտախտի խոնկորների վրա, որոնց պաթոլոգիայում այդ գնահատում է որպես կարևոր կլինիկական սիմպտոմ։ Դեպքեր գունատությունն ստում բերող պատճառն ապղեցության աստիճության, մաշկը գունատ է դառնում, անփայլ գունատ կամ կաթնագույն ապիտակ։ Մաշկի արտագ հայտնվող մահացու գունատությունը—արյունհոսությունների ստիճորակման հետևանքն է։ Ջոնկորների ու քոչտների մեջ այդ լինում է նեկրոզի արյունհոսությունների դեպքում, անոքմների, պաթենխիմատոզ օրգանների պատռվածքների հետևանքով։ Մաշկի գանգրագրին զարգացող գունատությունները արյան սրտկանան փոփոխություններին՝ այլևայլ ծագում ունեցող անեմիաների հետ են սովորաբար կապված։ Ջոզուկների մաշկի հատկանան առանձնացող գունատությունը, երբեմն մատաղահան ատրոֆիան ձևով, նկատվում է խրոնիկական ընթացող ինֆեկցիաների՝ էնդոտաքի պնեումոնիայի, խրոնիկ ժանտախտի, պրոտոզոյների և դիֆտերիտի ժամանակ։ Երկու-երեք շաբաթական ծծկերների նկատմամբ այդ ցուցը է տալիս հեմոգլոբինի նվազումը արյան մեջ, որի պատճառն ամենից հաճախ հանքային սովածությունը, անբավարար կերակրումն է լինում, երբեմն էլ սինդրոմի հիվանդությունները, բնչպես սպիտակ ցուցը, մարսողության խանգարումները և այլն։

Ընհամենատ ասկով դեպքերում գունատության պատճառը մաշկի անոքմների ջղամկության մեջ է լինում, բնչպես օրինակ, անցկ ժամանակ՝ ջերմության բարձրանալու շրջանում, ընդհանուր ատեկցման և այլ դեպքերում։ Բացի դրանից, մաշկի մահացու գունատություն նկատում են սրտի թուլության դեպքում, շրջապատող արյան քանակի պակասության և մաշկի անոքմների համակշիռ նեղացման հետևանքով, կոլապսի ժամանակ, հոգեմարքի վիճակում, ուշազնացության ժամանակ և այլն։ Ընտանի կենդանիների ուրիշ անասնների մեջ համապատասխան փոփոխությունները ավելի հնչուն է նկատել լորձաթաղանթների վրա, որոնց հետազոտությունն այս առնակեսից առաջին տեղն է գրավում։

Դ ե ղ ն ա խ տ ը—կլինիկական սիմպատոմակոմպլեքս է, այսինքն՝ մի

շարք կլինիկական երևույթներ, որոնց մեջ ամենատպավորչականն է լինում մաշկի, լորձաթաղանթների և ներքաշվող բջջանքի գեղձի պռնավոտումը, հյուսվածքների լղոպիդինա ծծելու հատկանքով։ Դեղնախտի երկրորդ հիմնական սիմպտոմն է համաբջում բիլիրուբինի տոկոսային պարունակության բարձրացումն արյան մեջ բ ի լ ի ր ո ւ բ ի ն ա մ ի ք ա ն, որի քանիը չափազանց տարբեր կարող է լինել։ Ուշ սրտահարված, սրընթաց համար, տասներկումատնյա ապրքի կատարի պակասությամբ պարզացած դեղնախտի գեպքում, բիլիրուբինի քանակությունը 100 կ· սմ չիճուկի մեջ 0,5—1,0 մմ-ից բարձրանում է մինչև 1,5—2 մմ մինչև։ Մի քանի ինֆեկցիաների պատճառությամբ պարզացած դեղնախտի ժամանակ, բիլիրուբինեմիան ավելի ուժեղ է արտահայտված։ Ամենատպավորված դեղնախտը, երբ բիլիրուբինի պարունակությունը մինչև 4—5 մգ է բարձրանում, նկատվում է Morbus maculosus-ի ժամանակ, SO_2-ով թունավորվելիս, ձիամանով թունավորվելիս, պիրոպրոժոզի և նատալիոզի ժամանակ։ Քանդարումների ամենաբնորոշ տատհանը ծիների մեջ բնորոշում է ինֆեկցիոն վնասվածքի, որի ժամանակ բիլիրուբինի պարունակությունը 8—10—15 մգ է հասնում։ Մաշկի գեղին գունավորման աստիճանը ամբողջապես բիլիրուբինեմիայի քանիից է կախված։ Դեղնախտի արժեքը ինֆեկցիոն վնասվածքի վերաբերմամբ այն է, որ նա այն ամենավաղ սիմպտոմներից մեկն է, որոնք հայտնաբերվում են գեռ ներվային երևույթների կոմպլեքսը հայտնվելուց առաջ։ Բիլիրուբինի պարունակության տոկոսի յուրաքանչյուր բարձրացում՝ նորմայի մոտավորապես 100%-ից վեր՝ լղոպիդմիանների համար անցնում է երիկամային շեմքը, որի հետևանքով նրանց մեծ քանակությունն արտաքորվում է երիկամներից մեզի մեջ, որի հետազոտության ժամանակ գժվար չէ հայտաբերելը։ Բացառություն են կազմում հեմոլիտիկ դեղնախտերը միայն։

Ուժեղ դեղնախտի ժամանակ, լղոպանյութերի ներվային ապարատի վրա դրծած քունավոր ազդեցության հետևանքով առվորաբար նկատում են սիրտ-անոթային սիստեմի, շնչական ապարատի, մարսողության ու ներվային սիստեմի սրտանների մի շարք ֆունկցիոնալ խախտումներ։ Դրանց են վերաբերում սրտի գործունեության դանդաղացումը, որ առվորաբար կապված է լինում սրտի հարվածի ու տոնների, ինչպես նաև սուր արտահայտված առիսմիաների հետ, շնչառության դանդաղացումն ու խորացումը, ախորժակի քուլացումը, պերիստալտիկայի քուլացումը, փորկապությունները, կղկղանքի հատկությունների բնորոշ փոփոխությունները, ներվային սիստեմի կողմից՝ քնկոտությունը, քուլությունը, դյուրագրգռությունը և այլն։

Իր ծագումով դեղնախտը լինում է՝ մեխանիկական, հեմոլիտիկ և պարենխիմատյին։

Մեխանիկական դեղնախտը զարգանում է լղոանցքների լուսանցքի աղելայլ ոնոսկի նեղացումների հետևանքով, որից առաջանում է լղոու լճացում, հետագայի ներծծումով։ Այդ նկատվում է տասներկումատնյա ապրքի կատարների, լղոանցքների խցանումների ու նեղացումների ժամանակ, գրծից ճնշման ներքաշվելիս և այլն։

Պարենխիմատյին դեղնախտը լյարդի բջիջների ֆունկցիայի խանգարման

հետ է կապված, այդ նկատվում է լարդի բորբոքման, դեղնախտով կամ նեկրոտիկ բնույթ կրող այլևայլ ախտահարություններ ժամանակ։ Դրանց պատկանում են ինֆեկցիոն հեպատիտները, լարդի գնդիկն ատրոֆիան, լարդի սուր բորբոքումները և այլ գնդնախտները։

Հեմոլիտիկ գնդնախտն առաջ է գալիս արյան մեջ չբջջազատվող քուլներն ազդեցության հետևանքով անդի ունեցող հեմոլիզից։ Քանայած որ այս գնդքում լարդի բջիջները ամբողջապես պահպանում են իրենց գործունեության, այնուամենայնիվ, լարդի չեմքը անցնելու հետևանքով, լարդի, որը չի հասցնում արտաքնորիչ անտիկուլո–էնդոթելիալ ապառնում պրոցեսը բջիջները, առաջ է գալիս բիլիրուբինեմիա, որի պատճառով գարգանում է գնդնախտի համար բնորոշ երևույթները կամպլեքս։ Հեմոլիտիկ գնդնախտը նկատվում է ձիու ինֆեկցիոն անեմիայի, սուր խլամախտ, արհնապատրաստիոտ հիվանդություններ, Morbus maculosus–ի, անաֆիլակտիանների ժամանակ, օձի թունով թունավորվելիս և այլն։

ՄԱՇԿԻ ՊԱԹՈԼՈԳԻԱ (ԱՆՏԱՐԱՆԱԿԱՆ) ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Արյան մակարդման արագությունը ըստ Ֆիրորդտի։ Երկարությամբ 6 սմ և լուսանցքով 1 մմ վոքրիկ մազանոթում, օգտվելով մազանոթության օրենքով, ½—1 սմ բարձրության արյան սյունակ են հավաքում։ Այնուհետև մազանոթի լուսանցքով անցկացնում են ձիու պոչից վերցրած, լավ ճարպատած, ապիտակ մի մազ, մոտավորապես 10—15 սմ երկարությամբ և, մազի ազատ ծայրից բռնած, 30 վայրկյանը մեկ ½ սմ առաջ են տանում։ Քանի որ հեղուկ արյունը մազի մակերևույթը չի թրջում, ապա սկըզբում նա միանգամայն մաքուր է մնում։ Մակարդման սկիզբը հայտնաբերում են շնորհիվ մազին կպած արյան մակարդի կաթիլուկն դունավորվելուն, որը մակարդման զարգացումով գնալով հեղուկանա աստիճանում է։ Արյունը վերջնականապես մակարդվելուց հետո, մազը, ինչպես փորձի սկզբում, անցնելով արյան շերտով, չի թրջվում և իր դույնը չի փոխում։

Ավելի հարմար է հետևյալ սրիսկիչով եղանակը։ Լավ ճարպատած, միանգամայն չոր ապակու մակերևույթին, նրա եզրին մոտ, մի կաթիլ հետպոտնկի արյուն են կաթեցնում և խոչուն զարձնելով 60° քեքսությամբ են տալիս։ Կաթիլը հոսելով ապակու վրայով, նրա երեսին հետք է թողնում, որի վրայով 30 վայրկյանը մեկ գնդասեղի ծայրով չանգռում են։ Մակարդման սկիզբը հայտարերվում է գնդասեղի ծայրին ֆիբրինի քիչերի առկայությամբ։

Ամենից շուտ է մակարդվում շների և ոչխարների արյունը, ձիերինը, համեմատած մյուս ընտանի կենդանիների հետ՝ ամենից դանդաղ։ Մակարդման դանդաղացում պայմանավորող հիվանդություններից անհրաժեշտ է նշել նախ և առաջ Morbus maculosus-ը, հեմոռագիկ դիաթեզի խմբի հիվանդությունները, արյունայլ ծագում ունեցող անեմիաները, նեֆրիտները և այլն։ Ջախջախից արագ է մակարդվում արյունը հեմոդիլուրինեմիաների, կրուպոզ պնեմոնիաների և այլ հիվանդությունների ժամանակ։

Արյան մածուցիկությունը հեմոգլոբինի քանակությունից, էրիթրոցիտների քիչից ու ծավալից է կախված։ Որոշ պղնձագործություն են դրծում, համեմատելս, արյան զազային բաղադրությունը, ինչպես նաև լեյկոցիտների քանակության տատանումները։

Արյան մածուցիկությունը որոշելու բոլոր եղանակները Պուազեյլի օրենքի վրա են հիմնված, որի համաձայն հեղուկի հոսանքի արագությունը հակադարձ հարաբերական է մածուցիկության։ Ամենապարզ ու հարմարն է Դիտերիչիի եղանակը։ Արյան մածուցիկության պայմանական նշանն է հանդիսանում ղատաը։ Ըստ Շնեյդերի, ձիու արյան մածուցիկությունը միջինում 4,28 է, իսկ չափումի դ—1,65։ Հոմատակնների ու հզի դամբիկների՝ նշված միջինից քիչ բարձր է։ Առհասարակ առողջ կենդանիների դ ծայրահեղ տատանումները 12°-ից բարձր չեն։ Պաթոլոգիկ դեպքերում դրանք բավական հետու են գնում։ Մածուցիկության քիչ բարձրացումով ընթացող հիվանդություններից անհրաժեշտ է նշել թոքերի բորբոքումները, պնբիտները, անթափարարության հետ կապված արյան հիվանդությունները, ինչպես նաև թոքերի օդսիդացման ֆունկցիայի խանգարումները։

Սկրնական ու հաջորդական անեմիաների, ինչպես նաև սուր կախեքսիաների հետևանքն է լինում արյան մածուցիկության մի փոքր իջեցումը։

Արյան լերդի ռետրակցիան: Ռետրակցիա ասելով հասկանում են արյան չհունվի լիքթոթիք անջատումը լերդից, հանգիստ թողած վիճակում: Հետազոտության մեթոդիկան հետևյալն է- արյունը վերցնում են լավ լվացած, սպիրտով ու եթերով մաքրած, 1,5—2,0 սմ տրամագիծ ունեցող մի չոր փորձանոթի մեջ և անչարժ ջերմության պայմաններում 24 ժամ հանգիստ են թողնում: Ջիռ. արյան լերդի գոյացումը և չհունվի անջատումն սկսվում է սովորաբար 1—2—3 ժամից և վերջանում 12 ժամից: 24 ժամից անջատված չհունվին արտածվում են և որոշում նրա հարաբերությունը վերցրած արյան ամբողջ քանակության ծավալին նկատմամբ: Ռետրակցիայի ինդեքս ձիու համար միջինում 0,5 է: Հետազոտելիս անհրաժեշտ է խուսափել հնարանոթի մեթոդիկայի վրա, ապա թե ոչ, կատարված դիտողությունները համեմատելի, ելքը մեծ չափով փորձանոթի տրամագծից, նրա պերգից, ինչպես նաև նրա պատի հատկություններից է կախված:

Արյան ռետրակցիայի ասիմետրը լայն տարածվածության է տասանվում, հիվանդությունների տեսակի համեմատ: Քիթքինը սուր արտահայտություն ունի, խոշոր եղջ. անասուններ՝ շատ քիչ, իսկ հաճախ բոլորովին տեղը չի ունենում: Ռետրակցիայի քուլացումը արտերոցիտների քայքայման և տրների խուսքյան փոփոխությունների հետևանք է: Արյան լերդի ռետրակցիայի բացակայություն մենք դիտել ենք երբեմն ինֆեկցիոն անեմիայի, Morbus maculosus-ի, էքսուդատիվ պլևրիտի և տարախոխիկ պնևմոնիայի ժամանակ:

Էրիտրոցիտների օսմոտիկ կայունությունը (ռեզիստենտություն): Արյան կարմիր մարմնիկները մեծ կայունություն են ցուցաբերում իզոտոնիկ լուծույթների հանդեպ, որոնց մեջ նրանք երկար պահպանվում են, առանց հիմոլիզի ազդեցության ենթարկվելու, քանի որ նրա ու բջիջների միջև օսմոտիկ փոխանակություն տեղի չի ունենում: Հիպերտոնիկ լուծույթների մեջ անցավորած էրիտրոցիտները երենց ջուրը միջավայրին տալով, արագ կնճռոտում են, հիպոտոնիկ լուծույթներում դիտում են էրիտրոցիտների ուռչումը, բջիջ մեջ ջուր մտնելու հետևանքով, հեմոգլոբինի ելքը և, վերջապես, երենց ներկանյութը կորցրած էրիտրոցիտների կատարյալ քայքայում: Սակայն հիպոտոնիկ լուծույթի ազդեցությունը նրա խուսքյունից է կախված, որովհետև միևնույն ցածր իզոտոնության ժամանակ հավասար վիճակում գտնվող էրիտրոցիտների ամբողջ զանգվածի արագ ու կատարյալ հեմոլիզ է առաջվում: Իրենց խուսքյամբ իզոտոնիկ լուծույթներին մոտ գտնվող լուծույթներում քայքայիչ ազդեցություն են գործում անկայուն բջիջները միայն, առաջ բերելով մասնակի հեմոլիզ, մինչդեռ նրանց դիմադրող զանգվածը միանգամայն չի փոփոխվում: Այդպիսով, արյան կարմիր մարմնիկների կայունությունը հիպոտոնիկ լուծույթների հանդեպ այլևայլ բջիջներում միատեսակ չի արտահայտվում: Եթե գրանց մի մասը օսմոսի ազդեցությանը տատիկ դիմադրում է, մյուսները նրա ազդեցությունից արագ քայքայվում են: Հեմոլիզի այդ սկզբնական շրջանը, որը հեղուկի գնդանման երանգի երևալով է միայն արտահայտված, նշում են որպես է ր ի թ ր ո ց ի տ ն ե ր ի մ ա ս կ ա յ ի ն հ ե մ ո լ ի զ: Կատարյալ հեմոլիզ առաջ բերող լուծույթի խուսքյունը մ ա ք ս ի մ ա լ հ ե մ ո լ ի տ ի կ ն է

որոշում։ Մեկի ու մյուսի մեջև եղած տատանումները կ ա յ ո ւ ն ո ւ թ յ ա ն լ ա յ ն ո ւ թ յ ո ւ ն են կոչվում։

Էրիթրոցիտների կայունությունը որոշելու ամենապարզ մեթոդը Լ ի մ բ ո ք—Ռ ի բ յ ե ր ի եղանակն է։ Փակնգիայի համար պատրաստած մի շարք փորձանոթներում NaCl լուծույթի մի շարք չրախառնուրդներ են անում այնպիսի հաշվով, որ յուրաքանչյուր փորձանոթում հեղուկի խտությունը նախորդից 0,02-ով ցածր լինի։ Դրա համար, առաջին փորձանոթի մեջ լցնում են 0,6 խ. ամ NaCl-ի 1% հիմնական լուծույթ, երկրորդի մեջ՝ 0,58 խ. ամ, երրորդի մեջ՝ 0,56 և այլն, պակասեցնելով հիմնական լուծույթի պարունակությունը յուրաքանչյուր հետևյալ փորձանոթում 0,02-ով։ Վերջին փորձանոթը ընդամենը 0,3 խ. ամ հիմնական լուծույթ է պարունակում։ Այնուհետև յուրաքանչյուր փորձանոթի մեջ պիպետկայով քաշած ջուր են լցնում այն հաշվով, որ ամբողջ լուծույթի ծավալը 1 խ. ամ-ի հասնի։

Մի շարք չրախառնուրդներ պատրաստելուց հետո Մալիի հեմոգլոբինոմետրի պիպետկայով 20 մմ³ արյուն են վերցնում և խառնում այն առաջին փորձանոթի լուծույթի հետ։ Նույնչափ արյուն ավելացնում են մնացած բոլոր փորձանոթների մեջ։ Ետառնելով հեղուկը և թողնելով 10—15 րոպե, փորձանոթները 5 րոպեով ուղղակորում են, կենտրոնախուսափում և ստացված արդյունքները գրառում։ Այնտեղ, ուր լրիվ հեմոլիզ է տեղի ունեցել, հեղուկը ալ-կարմրագույն է լինում և միանգամայն թափանցիկ։ Մասնակի հեմոլիզի ենթարկված փորձանոթներում դունավորումն արդեն թույլ է արտահայտված և հատակին կարմիր—արյունագույն նստվածք կարելի է նկատել։ Միանգամայն անգույն լուծույթները հեմոլիզի հետքերը բացակայության ցուցանիշ է։

Այդպիսով, նորմալ արյունը հետազոտելիս, այն փորձանոթներում, որոնց մեջ լուծույթը մոտ է իզոտոնիկ լուծույթին, հեղուկը միանգամայն անգույն ու թափանցիկ է մնում։ Լուծույթի քիչիչ դեղնավուն դունավորումը՝ հեմոլիզի սկսվելու ցուցանիշ է (մինիմալ կայունություն), մինչդեռ քիչիչ կարմրացումը պարզ հեմոլիզի համար է ցուցադրական։ Սակայն հեմոլիզի դեպքում, չնայած հեղուկի մուգ-կարմիր գույնին, փորձանոթի հատակին քիչ նստվածք կարելի է նկատել։ Դատարկել հեմոլիզը, առանց մնացորդի քայքայելով բոլոր էրիթրոցիտները, առանց նստվածքի հետքերի, հեղուկը խիստ կարմիր է դարձնում (մաքսիմալ կայունություն)։

Առողջ մեծերի մինիմալ կայունությունը տատանվում է 0,54—0,66-ի սահմաններում, մաքսիմալը՝ 0,4 և 0,48-ի միջև։ Կայունության չափը՝ 0,4—0,66։

Հիվանդացին պրոցեսի ապրելության տակ էրիտրոցիտների փոփոխված կայունությունը որոշ դեպքերում շատ արժեքավոր դիագնոստիկ ցուցանիշ է տալիս։ Ներկայումս առաջ են քաշում այն որպես չափանիշ արյունաստեղծ ապարատի ռեգեներատիվ ընդունակությունները գնահատելիս։ Մասնավոր, արյան հոսանքի մեջ նոր մտած էրիտրոցիտները P_2O_5-ով ու լիպոիդներով ազգատ են, որի հետևանքով նրանք ամենատևական ձևերն են հանդիսանում և ֆոսֆորով ու լիպոիդներով հագեցած ծերերից բավականին առաջ են հեմոլիզի ենթարկվում։ Որքան մեծահասակ լինի բջիջը, այնքան ավելի սուր է արտահայտված լինում նրա կայունությունը հիպո-

ունիկ լուծույթների նկատմամբ։ Էրիտրոցիտների մագնիսական կայունության բարձրացումը, այդպիսով, ակնածության ռեզիստենտային պրոցեսների քայքայման հետևանք հանդիսանալով, ցույց է տալիս, որ էրիտրոցիտների մեծ մասը շատ պատկանելի հատուկ ունեցող բջիջներից է բաղկացած։

Որքան ցածր է լինում մթնոլորտային կայունությունը, որքան պակաս կայունություն են ցուցաբերում էրիտրոցիտները հիպոտոնիկ լուծույթների նկատմամբ, այնքան նոսրանում են արյան հոսանքին մասնակից, դեռ չհասունացած բջիջներ ավելի ռեզիստենտային պրոցեսները, այնքան մասնակից է էրիտրոցիտների կազմը։

Մթնոլորտային կայունության բջիջում հաստատվում են սառնակացած հեմոլիզով և հեմոլիզին դիմադրությամբ ընթացող հիվանդությունների ժամանակ։ Միանների դիմադրողության դեպքում կայունության երկու ձևն էլ աստիճանաբար պակասում է 0,02—0,04%-ով։

Հետազոտության այս մեթոդը չափազանց արժեքավոր է լինում նաև մեր երկրի փոքրանական առողջման ժամանակ, հաստատելով կենդանու մարդանցի առաջացը, նրա պատրաստությունը և որոշ աշխատանք կատարելու ընդունակությունը։ Ջամբզված մեջերի մագնիսական կայունությունը բարձր է և հետզհետե աշխատանքներով նրան կարելի է այն բավականին իջեցնել։ Լավ պատրաստված մեջերի մագնիսական կայունությունը նշանակալից չափով ցածր է։

Էրիտրոցիտների կյանքի ռեակցիա։ Էրիտրոցիտների բջիջի արագությունը in vitro կախված է բնախոսական և ախտաբանական մի շարք գործոններից, որոնք նրան այս կամ այն ուղղությունն են տալիս։ Դրանցից առանձնապես մեծ նշանակություն ունի էրիտրոցիտներին շրջապատող միջավայրի հատկությունը—ապիտակուցների պարունակությունը պլազմայում, հաբարկորպուսկուլների և ապիտակուցների այրումների ֆրակցիայի մեջ, արյան մակարդունակությունը, պլազմայի ապիտակուցների սոմատիկ ճնշումը և այլն։ Ջնայած որևէ մի գործոնի արտահայտված ազդեցության, վնրջնական արդյունքը բոլոր մոմենտների նկատմամբ համարյա է լինում, ընդ որում որոշ նշանակություն ունեն նաև զուտ արտաքին պայմանները—ցիտրատ լուծույթի խառնությունը, շրջապատող միջավայրի բաղնիսունությունը, արյան սյան ծավալն ու բարձրությունը, ինչպես նաև այն անոթի դիրքը, որի մեջ բջիջացումն է կատարվում։ Էրիտրոցիտների բջիջի արագությունը որոշող բազմաթիվ եղանակներից մեջ ամենացուցադրականն արդյունքն է տալիս Վ ե ս տ ե ր գ ր ե ն ի եղանակը։ Վ ե ս տ ե ր գ ր ե ն ի անակցիան ապրում է 30 մմ երկարությամբ, 2,5 մմ լայնությամբ և 1 խ. սմ ծավալ ունեցող հատուկ պիպետկաներում։ Կողմնային մակերևույթը 0-ից մինչև 200 աստիճանավորած է։ Պիպետկայի մեջ լցնում են արյան ցիտրատ և, նրա բարձրությունը 0-ի վրա բերելով, հատուկ սեղմիչով ամրացնում են հատուկ հենարանում։ Արյան ցիտրատ լուծույթը պատրաստում են ատրճանակավորած դրանում, խառնելով 1 խ. սմ չեզոնացված նատրիումի 3,8% լուծույթը 4 խ. սմ արյան հետ։ Պիպետկային դնելը տալուց հետո հետևում են անակցիայի ընթացքին, առաջին ժամվա ընթացքում, ե թողնում մեկ նշելով իջնող էրիտրոցիտների սյան բարձրությունը։ Առաջին ժամի ցուցմունքները առանձին նշանակություն ունեն անակցիայի ընթացքի ուսումնասիրության դեպքում։ Երկրորդ

ժամվա ընթացքում բարձրությունը նշում են արդեն 10 րոպեից։ Մասցված արդյունքներին միացնում են այն այն բարձրությունը, որի վրա է վերջացել իջումը 24 ժամից։ Առողջ ձիերի էրիտրոցիտների իջման ռեակցիան մթիննում, առաջին ժամվա ընթացքում հետևյալ արագությամբ է ընթանում՝ այսպես ուրեմն իջնում է՝

	I ժամից	24 ժամից
մինչև 18	48	70	73	103

Իջման ռեակցիան շատ մեծ զգայունություն ցուցաբերելով արյան կազմի ֆիզիկա–քիմիական փոփոխություններին նկատմամբ հետազոտություն է տալիս բորբոքական պրոցեսի ուժգությունը վաղ շրջաններում հայտնաբերել։ Այդ պատճառով, թեպետև ախցիֆիկություն սա չունի, բայց աշխատանքներով կլինիկական մեծ նշանակություն ունի։ Էրիտրոցիտների իջման ռեակցիայի արագացում նկատվում է ձիերի մեջ ատրոպինիկ պնեումոնիայի, վնգռամախտի, խլխտոցի, անգինայի, վերքին ընդուլինների կատարի և ուրիշ շատ հիվանդությունների ժամանակ։ Էրիտրոցիտների իջումը շատ արագ է անցնում ձիերի ինֆեկցիան անեմիայի և Morbus maculosus–ի ժամանակ։

Էրիտրոցիտների իջման ռեակցիայի բնականոնությունը ասելիքը, բայց հիվանդության քանակից, կախված է նրա խորությունից և ուժից, ինչպես նաև ինտոքսիկացիայի աստիճանից։ Ուստի, իջման ամեն մի նոր սրացումը որևէ հիվանդության ժամանակ պրոցեսի վատթարացման ցուցանիշ է և, ընդհակառակը, իջման արագությունը նվազումը բարենպաստ նիշատակ են համարում։

Էրիտրոցիտների իջման ռեակցիայի քիչին դանդազում մենք նկատել ենք ձիերի փորացավի որոշ ձևերի, դաստրոէնտերիտների և ուրիշ հիվանդությունների ժամանակ։ Ամենամեծ դանդազացումները հայտնաբերվել են ինֆեկցիոն էնցեֆալոմիելիտի ժամանակ։

Բացի դուռ դեպազնոստիկ նպատակներից, էրիտրոցիտների իջման ռեակցիան որպես օժանդակ մեթոդ փորձում են օգտագործել մեծ հոգնելու հատկությունը, նրա պիտանիությունը որոշ աշխատանքի համար, մարդանքի ազդեցությունը որոշելիս, աշխատանքի նորմաները սահմանելիս և այլն։ Այդ տեսակ հետազոտությունների ժամանակ չափանիշ է հանդիսանում կենդանու ընթացքի դանդազացումը, ընդ որում հոգնելիության աստիճանը յուրաքանչյուր կենդանու համար ուղղակի փորձով վաղօրոք սահմանված նորմայի չափով է որոշվում։ Էրիտրոցիտների իջման ռեակցիայի ընթացքում առանձնապես մեծ դանդազացում են տալիս չմարզված ձիերը։ Հետազոտ, որոշ քեզքի, աշխատանքի, աշխատանքի տեսակի վարժվելու հետ մխսին չեզումները զնալով պակաս են արտահայտվում։

Արյան օժանդակ ալկալիությունը։ Արյան օժանդակ ալկալիության, այսինքն CO_2 այն քանակության որոշումը, որը բիկարբոնատների հետ կարող է կապված լինել, կատարվում է օրգանիզմի քիմիա–ալկալիական հավասարակշռության փոփոխությունները պարզելու նպատակով։ Սակայն արյան օժանդակ ալկալիության որոշումը դեռ հնարավորություն չի տալիս խանգարման չափի մասին դատելու, քանի որ, մի կողմից, արյան և հյուսվածքների անակցիայի միջև խիստ գուգահեռականություն չկա,

մյուս կողմից՝ բացի ածանցյալ ալկալիությունից, անհրաժեշտ է որոշել նրա հետևյալ կատիոն-անիոնները՝ Cl_2, HCO_3, Na, Mg, Ca, Ka և այլն։

Արյան ածանցյալ ալկալիության գազոմետրիկ որոշումը (ըստ Վան-Սլայկի) և արյան pH-ի էլեկտրոմետրիկ որոշումը (ըստ Մ ի խ ա ե լ ի ս ի), մեթոդիկայի բարդության հետևանքով կլինիկական լայն տարածում չեն ստացել։ Արյան իրական ռեակցիան որոշելու համար հաճախ օգտվում են Մ ի խ ա ե լ ի ս ի կալորիմետրիկ եղանակով։ Հետազոտությունը կատարում են վերլուծի կոմպարատորում։ Կոմպարատորի փորձանոթի մեջ լցնում են 1 խ. սմ հետազոտելի շիճուկ և 5 խ. սմ թեթևատաքան լուծույթ։ Վերջինիս մշակում են մեթիանթորոֆենոլի 1 խ. սմ 0,3% լուծույթով, փորձանոթը դնում են կոմպարատորում և շիճուկի pH-ը որոշում են էտալոն լուծույթների հետ համեմատելով։

Արյան ռեակցիայի կլինիկական որոշման համար օգտվում են արյան բիկարբոնատային որոշելու մեթոդով։ Որոշման պարզ մեթոդիկան այն է, որ 20 խ. սմ 1/100 NHCl-ի վրա ավելացնում են 0,2 խ. սմ հետազոտելի արյուն։ Խառնուրդը թափահարում ու տիտրում են մեկընդհանրից 1/10 N ալկալիով մինչև հեղուկի պղտորվելն ու փաթիլների անջատվելը։

Եթե մինչև վերջնական ռեակցիան ծախսված ալկալու քանակությունը հաշվենք միավորից, ապա 20 գործակցի վրա բազմապատկած տարբերությունը ցույց է տալիս 100,0 խ. սմ արյան ալկալիությունը միլիգրամներով։

Առողջ տղամարդկանց ածանցյալ ալկալիությունը տատանվում է 620-ից մինչև 470 մգ
» կանանց » » » 540-ից » 409 »

Ածանցյալ ալկալիության բավականին ուշ իջեցում հայտաբերվել է վաղուկ մանկան մեջ, սակայն մի քիչ հանգստանալուց հետո կորագիծը հավասարվում է և նորմայի հարաբերությունը վերականգնվում։ Ածանցյալ ալկալիության ամենից ևս ուշ իջեցում հայտաբերում են տավարի ծննդաբերական պարեզի, ացետոնեմիայի, նեֆրիտների, ուրեմիայի, էկլամպսիայի և մանավանդ դիաբետի ժամանակ։

Արյան բազմացած ալկալիություն հայտաբերում են կրուպոզ պնեվմոնիայի, Morbus maculosus-ի, շոքի, սիրտպլազմոզի ժամանակ և այլ դեպքերում։ Ածանցյալ ալկալիության որոշման ավյալներով, բացի դրանից, կարելի է օգտվել պրոգնոզի համար, քանզի և, ինչպես, ամեն դեպքում չէ, որ դրանք բացարձակ նշանակություն են ունենում։ Համենայն դեպս, հավասար ազոտեմիաների դեպքում արյան ածանցյալ ալկալիությունը որքան ցածր լինի, այնքան պրոգնոզը վատ է։

Կալցիումի որոշումն արյան մեջ։ Ճ ո ն գ ե կ ի չնչառական արտահայտության համաձայն, կալցիումն ու կալցիումը՝ նրկու բևեռներ են, որոնց մեջև տեղի է ունենում բջջի փոխհարաբերությունը։ Դրանք—վեգետատիվ ներվային սիստեմի վիճակի բնախոսական ցուցանիշն են։ Կալցիումի անոտագոնիստը լինելով, կալցիումը սիմպաթիկ ներվային սիստեմն ակտիվացնում է։ Կալցիումը, ընդհակառակը, սիմպաթիկը, ակտիվացնում է պարասիմպաթիկ սիստեմը։ Այդպիսով, հիպերկալցեմիան n. sympathicus-ի տոնուսի բարձրացման ցուցանիշն է, իսկ կալցիումի ավե-

լացուման արյան մեջ՝ n. vagus-ի առնուազն բարձրացման հետ է կապված։

Կալցիումի քանակական որոշման ամենապարզ և հարմար մեթոդն արյան չիճուկում՝ դե-Վարդայի եղանակն է, որի հիմքն է կազմում չիճուկի ամբողջ կալցիումի տուգտումը քրքինուկաթթվական ամոնիումով և հետագայում պերմանգանատով տիտրելով։ Կենտրոնաթաթի վորձանոթի մեջ լցնում են 0,5 հետագոտելի չիճուկ և ավելացնում են նրա վրա 0,5 քրքինուկաթթվական ամոնիումի ջրային հագեցած լուծույթի, լավ խառնելուց հետո թողնում են պարզվելու կես ժամ և այնուհետև 10 րոպե կենտրոնաթաթվում են։ Զգուշությամբ քամելով հեղուկը, հատանում նստվածքի քրքինուկաթթվական կալցիումը 2—3 անգամ լվանում են ջրով, պղպջելով նատվածքը և յուրաքանչյուր անգամ հեղուկը կենտրոնաթաթելով։ Նատվածքը լավ մաքրելուց ու ջուրը հեռացնելուց հետո լուծում են այն ծծմբաթթվի մեջ, տաքացնում են ջրային բաղնիքի վրա մինչև 65° և տիտրում են, կաթիլներով ավելացնելով կալիումի պերմանգանատի n/100 լուծույթի մինչև կայուն, թառնելիս չանհետացող վարդագույն գունավորման հայտնվելը։

Քանի որ պերմանգանատի 1 խ. սմ տիտրած լուծույթը համապատասխանում է 0,2 մ կալցիումի, 100 խ. սմ չիճուկում պարունակությունը հաշվելիս, կալիումի պերմանգանատի ծախսված լուծույթի քանակությունը բազմապատկում են 2-ով։ Ստացված արտադրյալը 100-ով բազմապատկելուց հետո արտահայտում է կալցիումի պարունակությունը 100 խ. սմ չիճուկում, միլիգրամներով։

Կալցիումի տատանման տատանը ձիերի համար պետք է հաշվել 13—15 մգ, միջինում՝ 14,2 մգ—100 խ. սմ. չիճուկում։ Մեր լիլցումներ 14,2 միջինից 23 և անգամ 32%-ով հատատաքրքվել են սկզբնական ու հաճոբազմական անեմիաներով, տարափոխիկ պլևրոպնեումոնիայի, էքսուդատիվ պլևրիտների, քոքերի դանդրինայի, Morbus maculosus-ի և ինֆեկցիոն էնցեֆալոմիելիտի ժամանակ։ Հիվանդության բերի ելքը վերը, 10%-ից ոչ ավելի իջեցում են տալիս, մինչդեռ ծանր պրոցեսների ժամանակ կալցիումի պարունակությունը տատանի անկում է ցույց տալիս և կենդանու վիճակի բարելավման կապակցությամբ է միայն կանոնավորվում։ Այդպիսով ձիու հիպոկալցեմիան բավականին համարհակի սիմպտոմ պետք է համարել, հատկապես այն տարբեր բնույթ կրող հիվանդություններ հետ։ Տավարի համար ծայրահեղ տատանումներ են համարում 8,64—11,11 մգ կալցիում 100 խ. սմ արյան մեջ (միջինը 10 մգ հաշվելով)։ Ինդոպաթիական պարենի ժամանակ կալցիումի պարունակությունը նշանակալից չափով բնկնում է, ամենայն վիրատեսն կենդանու վիճակի բարելավումով, կամայն անհետացումով և այլն։

Կալցիումի ենթամաշկային ներարկումներից հետո նրա քանակությունն արյան մեջ ավելանում է չատ արագ՝ 2—3 ժամում, ընդ որում հիպերկալցեմիայի աստիճանը ներարկված պրեպարատի քանակությունից է կախված։ Կալցիումի մակարդակն այս դեպքում միայն 24 ժամից է կանոնավորվում։ Երակային ներարկումներից հետո 10 րոպեից արդեն կարելի է կալցիումի տատանային պարունակությունը բարձրացում հայտնաբերել, իսկ 2—3 ժամից՝ նորմայի վերականգնում։

կալցիումի ազնք կերցնելու միջոցով կայուն հիպերկալցեմիա առանաձ փորձնականորեն չի հաջողվել, քանի որ կալցիումի մի փոքր ավելացումն արյան մեջ, որ նկատվում է այս դեպքում, ազդեցնում արյան մեջ նատրիումի հետևանքով, 2—3 ժամ է միայն մնում։ Ուշադրության արժանի են Գ լ ա զ ե ր ի փորձերը մարդկանց վրա. հիպնոսի միջոցով նրան հաջողվել է առաջին հիպոկալցեմիա առաջացնել կալցիումի մինչև 2,16% մգ նվազումով։

Բիլիրուբինի որոշումն արյան մեջ։ Ինտենսիվ-էնդոթելիալ սեռանման օրգաններում գոյացող բիլիրուբինը՝ մարդկանց և շների արյան նորմալ բաղադրիչ մասն է։

Նրա մոլեկուլի կառուցման համար նյութ է հանդիսանում արյան քայքայված կարմիր մարմնիկների հեմոգլոբինը։ Ինտենսիվ-էնդոթելիալ սեռանմի օրգաններից արյան մեջ անցնելով, բիլիրուբինը լուծվում է պլազմայում և նրան գնդիկավոր կառուցվորում հաղորդում, որի բնականոնվելությունը գլխավորապես կախված է նրա մեջ լուծված լեղու պիգմենտի քանակությունից։ Բիլիրուբինի այս փոփոխակին Լ ե պ ե ն ն լ յ ա ր դ ի ց չ ա ն գ ա ծ բ ի լ ի ր ո ւ բ ի ն է անվանում։ Էրիտրոցիտների քայքայման առատացումով միաժամանակ բարձրանում է նաև չանցած բիլիրուբինի պարունակությունն արյան մեջ։ Նրա քանակության առատ ավելացում հաստատվում են հեմոլիտիկ դեղնախտերի ժամանակ։

Արյան մեջ շրջագայող բիլիրուբինը լուծվում է լորդի կոպիների բջիջներում, ուր նրա մոլեկուլում կատարվածքի ինչ որ փոփոխություններ են տեղի ունենում։ Կոպիների բջիջների արտազրած պիգմենտի արդեն նոր այս փոփոխակը, որը լ յ ա ր դ ա ծ ա ն գ կ ա գ ը ր ա ծ բ ի լ ի ր ո ւ բ ի ն է անունն է կրում՝ լեղու նորմալ բաղադրիչ մասն է հանդիսանում։ Լեղու հատանքը դեպի աղիների սկզբնական հատվածները, որի քանակական հետևանքն են լինում լեղածորանների մեջ տեղի ունեցող կաշկատումները, լեղին ներծծվում անցնում է արյան մեջ, ուր հետազոտելիս կարելի է հայտաբերել լեղագրիմինի երկրորդ փոփոխակը—լյարդով անցկացրած բիլիրուբինն։ Այս փոփոխակի հանդես գալն արյան մեջ՝ լեղու հոսանքի դժվարացման հետևանքով զարգացող դեղնախտերի բնական հետևանքն է հանդիսանում։

Դեղնախտերի դիֆերենցիալ դիագնոստիկայի համար օգտվում են վ ա ն-դ ե ն-Բ ե ր գ ի ռեակցիայից ո ւ ղ ղ ա կ ի և ա ն ո ւ ղ ղ ա կ ի ռ ե ա կ ց ի ա ն ե ր ո վ։ Առաջին միջոցով որոշում են լյարդով անցկացրած բիլիրուբինը, որի ներկայությունն արյան մեջ անկասկած պաթոլոգիկ սիմպտոմ է։ Չանցկացրած բիլիրուբինը հայտաբերելու համար դառնալում է անուղղակի ռեակցիան։

Բիլիրուբինի այս տեսակ որակական հետազոտության էական լրացումն է կազմում լեղու պիգմենտների պարունակության քանակական որոշումն արյան մեջ։ Նա պատկերացում է տալիս մեզ դեղնախտի չափի և այն խանգարումների քանի մասին, որոնք առաջ են բերել այն։

Բիլիրուբինը որոշելու համար գոյություն ունեցող քաշմաքիով եղանակների մեջ ամենաազդեցը և միևնույն ժամանակ բավականին վստահելի է հետևյալ մեթոդը, որի հիման է կազմում կոլորիմետրիայի սկզբունքը։

Ազդյուսինացման փոքրիկ փորձանոթի մեջ պիպետկայի միջոցով լցնում

են 0,5 խ· սմ արյան միանգամայն քայքայիչ և անզուգ չհնուկ և համեմատում են այն նույնպիսի փոքաքանքի մեջ լցրած սառնպաս հնդուկի հետ։ Հետազոտության ընդերքն է չհնուկը կերակրի ապի 10% լուծույթով նատրացնելու մեջոցով սառնպասրի հետ գունավորման կատարյալ նույնության սառնալ։ Հետազոտության արդյունքն արտահայտում են 0,5+x ֆորմուլայով, ուր 0,5-ը չհնուկի քանակությունն է արտում, իսկ x-ը— միանական գունավորում սառնալու համար ծախսված կերակրի ապի լուծույթի քանակությունը խորանարդ սանտիմետրերով։

Սառնպասրի կազմը՝ երկքրոմաթթվական կալիում 0,1, քորած ջուր 200,0 խ· սմ, ծծմբաթթու 3,0 խ· սմ։

Բիլիրուբինի պարունակությունն առողջ մեզու արյան մեջ տատանվում է 0,5+0 և 0,5+1 սահմաններում։

Ճանկացողները հետազոտության արդյունքները հնչասությամբ կարող են Մ և յ լ և Նգ ր ա խ ա ի միավորների վերածել։ Քանի որ սառնպասր հնդուկը 5 միավորի է համապատասխանում, բիլիրուբինի պարունակությունը առողջ մեզու արյան մեջ քան Մ և յ լ և Ն գ ր ա խ ա ի հաշվելիս տատանվում է 1 և 15 միավորների միջև։

Մ և յ լ և Ն գ ր ա խ ա ի մի միավորը համապատասխանում է 200 չափ ջրում լուծած 0,5 մմ բիլիրուբինի գունավորմանը։

Այդ նպատակի համար առաջարկվածը նզանակներից ամենահշգրիտը վ ա Ն-գ և Ն-Մ և ր գ ի նզանակն է։

Սպիտակների ասղամման և բիլիրուբինի էքստրակցիայի համար 2 խ· սմ արյան չհնուկը մշակում են 4 խ· սմ ապիրտով և կենտրոնաքաշում են մինչև հնդուկի կատարյալ պարզվելը։ Կենտրոնաքաշելուց հետո 3 խ· սմ ցենտրիֆուգատի վրա ճարպաթթուները լուծելու համար ավելացնում են 1,5 խ· սմ ապիրտ և մշակում են է ք լ ի խ ի քարմ պատրաստած դիազոռեակտիվներով 0,75 խառնուրդով*)։

Բիլիրուբինի դիազոմիացության գոյացման հետևանքով վարդագույն ներկված հնդուկը լցնում են կոլորիմետրի բաժակի մեջ ու կոլորիմետրում են։ Որպես սառնպասր գործադրում են ծծմբաթթվական կոբալտի լուծույթ՝ 100 խ· սմ ջրում 2,61 գ խառնյան։

Հաշվում են հետևյալ ֆորմուլայով՝

$$X = \frac{0,8 \cdot 5 \cdot Y}{Z},$$

ուր Y-ը սառնպասրի հաչիվն է, Z-ը՝ հետազոտվող հնդուկի հաչիվը։

Բիլիրուբինի պարունակությունը, վ ա Ն-գ և Ն-Մ և ր գ ի նզանակով որոշվելիս, մեզի մեջ տատանվում է 0,3 և 1 սահմաններում, միջին՝ 0,8։ Կատարյալ գեղնախտանիքի ժամանակ նրա պարունակությունը ընդհանրապես քիչ է բարձրանում, մինչև 1,8—2 մմ 100 խ· սմ չհնուկի դիմաց։

Ամենից ուշ բիլիրուբինամիա հայտաբերում են ինֆեկցիոն հիվանդու-

---

*) Բիլիրուբինի դիազոռեակտիվները կազմը—1-ին ռեակտիվը՝ սուլֆանիլաթթու 0,5, ազոթթու (տես. կշիռը 1,19) 3,0, քորած ջուր 300,0։ 2-րդ ռեակտիվը՝ ազոտաթթվական նատրիում 0,5, քորած ջուր 100,0։ Որոշելուց առաջ նշված ռեակտիվներից պատրաստում են ex tempore խառնուրդ, 10 խ. սմ առաջին ռեակտիվի վրա ավելացնելով 0,3 երկրորդից։

քյունների՝ ինֆլյուենցայի, կրուպոզ ու պրխպոզ պնևմոնիայի, գնդամախտի, անգինայի և այլ հիվանդությունների ժամանակ։ Մեր անփոփոխ պիոոգենքյունների համաձայն բիլիրուբինի քանակությունն այս հիվանդությունների ժամանակ մինչև 2,0—2,5 մմ է բարձրանում։ Ամենաարագ քվինը հայտարերել ենք մենք Morbus maculosus-ի ժամանակ, SO_2-ով ու ձիաձնաով քուռամորթվելիս, երբ նրա պարունակությունը մինչև 4 մմ է աճել։

Առավելագույն փոփոխությունները հայտարերվել են ինֆեկցիոն էնդոքարդիտի ժամանակ, որի համար մեր արած դիտողություններով մինչև են հանդիսանում բիլիրուբինի 4—8 մմ տատանումները 100 խ. սմ շիճուկում։

Ջնայած որ բիլիրուբինեմիան, ըստ էության, հատ հիվանդությունների համար մի ընդհանուր սիմպտոմ է, այնուամենայնիվ խոշոր կլինիկական նշանակություն ունի։ Մուր բիլիրուբինեմիաները վնաս պիգմենտների 4 մմ ավելի պարունակությամբ հայտարերվում են շատ փոքր քվով հիվանդությունների ժամանակ, որոնք, բացի դրանից, իրանց կլինիկայով հազիս տարբերվում են իրարից։ Կլինիկական պատկերը հաշվի առնելիս, կարելի է այն օգտագործել ուրեմն ոչ միայն պրոգնոստիկ, այլ և դիագնոստիկ անհրաժեշտ։

ԱՐՅԱՆ ՁԵՎԱՎՈՐ ՏԱՐՐԵՐԸ

էրիտրոցիտները։ Արյան ձևավոր տարրերի դիմավոր զանգվածը արյան կարմիր մարմնիկներից է բաղկացած։ Դրանք—կլոր, անկորիզ կազմություններ են դիանիկամեն հատատացած եզրերով և երկկոնքիարդ կենտրոնով։ Ուշադիր էրիտրոցիտները երկարած էլիպսաձև են, քոչուններինը՝ կորկոտած են։ Նայած կենդանու անասկին և արյան օսմոտիկ ճնշման, արյան կարմիր մարմնիկների մեծությունը տատանվում է։ Ձիու և տավարի համար ծայրահեղ տատանումները համարվում են 5,1—5,6 միկրոն, խոզի՝ 6,3—6,2 միկրոն, մռակներինը՝ 6,2—7,3 միկրոն։

էրիտրոցիտների հիմնական կենսաբանական հատկությունն այն է, որ նրանք գազափոխանակության մեջ են հանդիսանում մարմնի հյուսվածքների և միջավորի միջև։ Բացի դրանից, նրանք մասնակցում են արյան քիմիա-ֆիզիկական հավասարակշռության կարգավորման մեջ։ էրիտրոցիտների քաղանքից քիմիական նյութերը չեզոքացվում են նրանց մեջ կալիումով, կազմելով ապակ և ածանխով հեմոգլոբինը։ Դրա հետ միասին նրանք ծծում են սպիտակուցային քայքայման արգասիքը, ամինոքիոններ, բազմասեռակ տոքսիններ և մասնակցում են հյուսվածքների ինքնապաշտպանության կազմակերպման և իմունիտետի մշակման մեջ։

Արյան կարմիր մարմնիկների գումը կախված է նրանց ատրոմայում պարունակվող հեմոգլոբինի քանակությունից, որի շնորհիվ կենսաոնական բարակ մասը միկրոսկոպի տակ ավելի բաց է երևում, քան պերիֆերիկ ավելի մասով բաժինները։ Ջմշակված պրեպարատներում նրանք գնդիկանաձևանում են, ընդ որում բջջի մեջտեղի ավելի գծգուն մասը պարզ երևացող կենտրոնական կոչված գոտին է կազմում, որը համապատասխանում է կենսաոնի երկկոնքիազությանը։ Ներկող լուծույթներով մշա-

կելիս նոթամալ զարգացած էրիթրոցիտները մեծ քանակությամբ ներկվում են ընդունակ, ապրելու ազդեցիկներ են։ Ըստ Դեմզայի՝ մշակված պրեպարատներում նրանք վարքա-դեղնավուն գույներ են ստանում լավ զարգացած կենտրոնական գոտով։ Այս դեպքում, ինչպես մեջտեղի գոտու լայնությանը վերջին տատանումներին, ստացվ կենդանիների էրիթրոցիտների ոչ մասնան գունավորման մեծությունը տարբեր (նորմալ) է տալիս։ Էրիթրոցիտների համասեռ քանակությամբ քանակությունը կլանելու և մեծության գունավորում տալու այս անասելիքին համակցությունն անվանում է օ ր տ ո խ ր ո մ ա զ ի ա։

Հեմոգլոբինի պարունակությունը նշանակալից չափով պակասելու դեպքում, բջջի առանձին մասերի գունավորման տարբերությունը դժվարի չափով ավելի ուժեղ է երևում։ Կենտրոնական գոտին ավելի լայնացած լինում, որ էրիթրոցիտի համարյա ամբողջ մակերեսն է ծածկում և բարակ պերիֆերիկ շերտը մնալն, որ ծնելու ընդունակությունը պահպանած է լինում, ներկված է լինում, շրջապատելով նեղ պակի պես կենտրոնական գոտին։ Նորմալ երանգների օ լ ի գ ո խ ր ո մ ա զ ի ա անուն ստացած նման ընդունակները գունավորման մեջ անհամեմատ, բնագրական հեմոլիզների, և որևէ պարտիական հիվանդությունների հետևանք են։

Պալիխրոմազիա։ Բացի ազիդոֆիլ էրիթրոցիտներից, արյան մեջ հաճախ հանդիպում են ավելորդ մեծեր, որոնք դեռ պահպանել են ազիդոֆիլական ներկելով ներկվելու ընդունակությունը։ Այդպիսի երևույթը կոչվում է պոլիխրոմազիա։ Պոլիխրոմատոֆիլ մեծերը բավականին բազմազան, մեծ մասամբ խոշոր գունավորում են տալիս, ամենից հաճախ՝ մոխրավուն, մեղմ-մանիշակագույն, բաց-կապտագույն կամ կեղտոտ-կապտագույն։ Միատեսակ արտահայտված պոլիխրոմատոֆիլ դեպքում էրիթրոցիտները երբեմն մուգ-կապտագույն կամ կանաչավուն-կապույտ գունավորում են ընդունում։ Առանձին պոլիխրոմատոֆիլներ հաճախ հանդիպում են մասրաշ կենդանիների ճագարների, խոզերի ու շների արյան մեջ. մեծերի մեջ պոլիխրոմազիան հազվագյուտ է լինում։ Պոլիխրոմազիան՝ բջջի անբավարար հասունացման նշան է. նման մեծերի հանդիպումն արյան մեջ՝ ոսկրածուցիկի պրոցեսների ուժեղացման ցուցանիշ է։

Պոյկիլոցիտոզ։ Լավ պատրաստած պրեպարատներում էրիթրոցիտները մեկնելով կլոր մարմիններ են, համաչափ, չբջջացված եզրով։ Անշնորհք պատրաստած քսուկների մեկրոսկոպիկ հետազոտության ժամանակ հանդիպում են տարօրինակ փոփոխված բջիջներ, մերթ ատամնիկաձև, երկարավուն կամ ասեղաձև, մերթ մանգաղաձև, կիսալուսնաձև կամ երկարած-ձվաձև։ Դրանց մեջ երբեմն հանդիպում են նկուղաձեր, կնդրոտանի բջիջներ։ Սակայն տղոպիսի երևույթներ ամեն անգամ կարելի չէ որպես արտեֆակտ, այսինքն՝ պրեպարատի անշնորհք և անփույթ պատրաստման հետևանք համարել։ Շատ դեպքերում, ինչպես քսուկի բնորոշիչ պատրաստման, այնպես էլ ենթարկելով էրիթրոցիտները ատամնիկ փոփոխված են քսուցվում։ Այդպիսի ապլանդակված ձևերը պոյկիլոցիտ են կոչվում, իսկ բջիջների նշված ուղղությամբ փոփոխվելու հենց ընդունակությունը՝ պոյկիլոցիտոզ։ Էրիթրոցիտների հետևությամբ փոփոխվելու պատճառը՝ առաձգականության կորուստն է բջիջների կողմից, հիվանդագին պրոցեսի ազդեցության հետևանքով։ Ամենամեծ արտահայտված պոյկիլոցիտոզ-

ներ չինում են անեմիաների և նաեր անպոկիկ հիվանդությունների ժամանակ։

Անիզոցիտոզ։ Միևնույն կենդանու միևնույն ժննուքյան էրիտրոցիտներ մեջ համարե պատահում են այնպիսի բջիջներ, որոնց տրամագիծը 0,5—0,8—1 միկրոնով մեծ կամ փոքր է ամենատարածված ձևերի տրամագծից։ Այդպիսի փոքրիկ տատանումներին՝ միջինից 0,5—1 միկրոնից ոչ ավելի՝ պաթոլոգիկ նշանակություն չեն տալիս։ Քանուկը հետազոտելիս երբեմն հանդիպում են ընդունված նորմաների սուբ չնչում (խախտում), երբ նորմոցիտների հետ միասին հանդիպում են մանր ձևեր (միկրոցիտներ) կամ խոշոր բջիջներ (մակրոցիտներ)։ Այդպիսի փոփոխություններ անիզոցիտոզ անուն են ստացել։ Քիչ տրտահայտված անիզոցիտոզը սովորաբար պոլիքրոմատոզի և էրիտրոցիտների նորմալ ընդունակության քայքայման կապակցությամբ, հանդիպում են անեմիաների, ինչպես նաև անպոկիկ որոշ հիվանդությունների ժամանակ։

Գեոիկուլոցիտոզ (Substantio granulo filamentosa)։ Նորածինների արյունը Brillant - Kresilblau-ով ներկելիս գտնվի կ նկատել էրիտրոցիտների բազոֆիլ ցանցավորություն, որ կատուցված է չինում բարակ, իրար հետ կապակցված թելերից։ Այդ համարում են substantio granulo filamentosa կամ ռետիկուլոցիտոզ։ Առանձին ռետիկուլոցիտներ մեծահասակ կենդանիների արյան մեջ էլ են պատահում։ Արյան ռենտգենոգրաֆիկ պրոցեսները ստուգանալիս՝ ռետիկուլոցիտների քիվը խիստ չատանում է։

Բազոֆիլոպիլի պունկտացիա։ Պոլիքրոմատոֆիլ ձևերում համաձ, իսկ երբեմն նաև նորմալ էրիտրոցիտներում նկատվում է բազոֆիլային հատիկավորություն, որը բաղկացած է տարբեր մեծության ու ձևի, մերթ փոշու նման մանր ու բարակ, մերթ ավելի խոշոր անկյունավոր կամ կլոր բազոֆիլային հատիկներից, որոնք անկարգ կերպով այս ու այն կողմ են ընկած էրիտրոցիտի մակերևույթին։ Քիչերի համար բազոֆիլային պունկտացիան պոլիքրոմատոզիկի հետ միասին համաձայնի պատահող սիմպտոմ է հաշրոպական անեմիաների, ռետմատիկ հեմոգլոբինեմիկի և որոշ ոչպոկիկ պրոցեսների ժամանակ։

Ջ ո լ ի (Jolly) մարմնիկները՝ ալ-կարմիր ներկվող կլոր կամ ձվաձև գոյացություններ են, որոնք էրիտրոցիտի մակերեսին խիստ նկատելի են։ Հանդիպում են գլխավոր անեմիաների ժամանակ, կարմիր արյան ուրիշ փոփոխությունների հետ զուգընթաց։

Կ ա բ ո տ ի (Cabot) մարմնիկները բաղկացած են առանձին հատիկներից, որոնք օղակի, ութնյակի, կրկնակի կամ եռակի անկերի, ձվարդի ձևով չղթաներ են կազմում։ Կ ա բ ո տ ի, երբ նրանց հետ միասին նաև Ջ ո լ ի մարմնիկները համարում են որպես կորիզային քայքայված սուբստանցի մնացորդ։ Հանդիպում են գլխավոր անեմիաների ժամանակ և դնահատվում են միևնույն կարգով, ինչ և կորիզավոր ձևերը։

Կորիզավոր էրիտրոցիտներ։ Կենդանիների մեջ որոշ տեսակների (խոզ, հաստ, կատու) նորմալ արյունն է պարունակում կորիզավոր եղջիւր ձևեր, որոնք իրենց մեծությամբ նորմալ էրիտրոցիտներից (նորմոցիտներից) չեն տարբերվում։ Նորմոցիտների գլխավոր առանձնահատկությունն է պարզ արտահայտված կատուցվածքով կլոր կամ ձվաձև կորիզը, որը ոքիֆիլ պրոտոպլազմայում է տեղավորված։ Մեգալոցիտները տարբեր-

վում են պրանցից ոչ միայն մինուճյամբ, այլ նաև իրենց կառուցվածքով։ Արժամանի պահասուիյան և նրա թաղիման առանձնահատկություններից հետևանքով, մեզալորյատի բացարձակ մեծ կորիզը ավելի մեզմ է նկրկվում, բարակ ցանցավոր կառուցվածք է ստանում և պրանով խիտ տորթերվում է նորմորյատի անվանի կորիզից։ Մեզալորյատանների նկրկատուքյունը դնահատում են որպես ոսկրածուխի փոշեկցիայի սուր փոփոխուքյան հետ կապված պաթոլոգիկ մի նշան։ Պատահում է այդ անհիմանների և արյան կարմիր մարմնիկների ատոմիկ քայքայման հետ կապված ինֆեկցիան և ինվազիան շատ հիվանդուքյունների ժամանակ։

Արյան սպիտակ մարմնիկները։ Սպ ա յ ն ց ա ն ի 1786 թ. արյան մեջ հայտաբերած սպիտակ մարմնիկները վ ի ր խ ո վ ը բաժանել է լիմֆոցիտների ու լեյկոցիտների։ Ե ր լ ի խ ը՝ սպիտակ արյան բջիջների ուսումնասիրության համար որքայնիչ անունն առացած նկրկն առաջարկելով, բավականին ընդարձակել է վ ի ր խ ո վ ի հկլասիֆիկացիան։ Հատիկավոր ձևերը՝ վ ի ր խ ո վ ի լեյկոցիտները՝ իրենց հատիկավորուքյուն ան կամ այն գույն նկրկվելու հատկուքյան համեմատ, նա բաժանել է երեք դասի—բազոֆիլների, էոզինոֆիլների ու նեյտրոֆիլների։ Անհատկի ձևերի մեջ Ե ր լ ի խ ը տարբերում է լիմֆոցիտներ ու մոնոնուկլեարներ։ Հետազոտում Ա ր ն ե տ ը արյան սպիտակ մարմնիկների տարբերակման իր սնվական սխեման որպես հիմք է վերցրել Ե ր լ ի խ ի հկլասիֆիկացիան։ Սակայն Ա ր ն ե տ ի սխեման որպես չափազանց մանրամասնված, լայն տարածում չի գտել և փոխարինվել է Շ ի լ ի ն գ ի հկլասիֆիկացիայով, որը միայն լրացրել է Ե ր լ ի խ ի հկլասիֆիկացիան, առարկաժանելով նեյտրոֆիլների դասը իջնուրուն չորս դասի՝ միելոցիտների, պատանի, ցուպիկակորիզավոր և սեգմենտակորիզավոր նեյտրոֆիլների։

Իր կառուցվածքով չափազանց պարզ այս սխեման, որն Ե ր լ ի խ ի և Ա ր ն ե տ ի հկլասիֆիկացիաների ձևափոխուքյուն է միայն, նկրկայուքյան լայն տարածում և ընդհանուրի հավանուքյուն է ստացել։ Այդպիսով, Շ ի լ ի ն գ ի սխեմայի մեջ են մտնում ուղիղ իջնուրուն դաս—բազոֆիլներ, էոզինոֆիլներ, միելոցիտներ, պատանի, ցուպիկակորիզ և սեգմենտակորիզ նեյտրոֆիլներ և, վերջապես, լիմֆոցիտներ ու մոնոցիտներ։ Մի շարք հիվանդուքյունների ժամանակ սպիտակ արյունը ցուցաբերում է շատ հետաքրքրական փոփոխուքյուններ, որոնց նկրկայուքյան պրոգնոստիկ ու պրոգնոստիկ մեծ նշանակուքյուն են տալիս։ Սակայն, սպիտակ արյան ցուցմունքներով օգտվելու համար անհրաժեշտ է սպիտակ արյան բջիջները ուրիշ դասերի բջիջներից տարբերելը սովորել։ Բջջային ձևերի քանակին դնահատման ժամանակ ուշադրուքյուն են դարձնում՝ ա) բջջի մեծուքյանը, բ) կորիզի հատկուքյանը և գ) պրոտոպլազմայի դանազանմանը։

Լեյկոցիտի մեծուքյունը որոշելու համար օգտվում են նրան էրիտրոցիտի հետ համեմատելու մեթոդով, նշելով, որ բջիջն էրիտրոցիտից չափ և կամ նրանից 2—3 անգամ մեծ։ Բջջի կորիզը դնահատելիս ուշադրուքյուն են դարձնում՝ ա) ձևին, բ) մեծուքյանը, գ) տեղադրուքյանը, դ) գունավորման առանձնահատկին և ե) նրա կառուցվածքին։ Պրոտոպլազմայի հատկուքյունները որոշելիս ուշադրուքյան առնում են՝ ա) պրոտոպլազմայի

խոռվի լայնությունը, բ) նրա զունավորումը, գ) հատիկավորության բնույթը և, վերջապես, դ) նրա կառուցվածքը:

Առանձին դասերի բնութագիրը: Ընտանի կենդանիների որոշ տեսակներ ն ե յ ր ո ֆ ի զ ն ե ր ը ապիտակ արյան բջիջների զգալի մասսան են կազմում: Կենդանիների տեսակների համեմատ, բջիջի մեծությունը տատանվում է 7—15 միկրոնի սահմաններում, միջինում՝ մոտ 10—13 միկրոն:

Պրոտոպլազման բաց-վարդագույն է, խոտակերներինը՝ նկատելի կապտավուն երանգով: Կորիզն ամեն կողմից չբջիջատոր պրոտոպլազման լցված է մերթ փոքր պես, մերթ նուրբ, մերթ բավական հզոր ն ե յ ր ո ֆ ի լ ա յ ի ն հատիկավորություններ, որն առանձնապես աչքի է ընկնում արհեստական ներկելիս: Նեյրոֆիլները ունեն տարբեր չափսեր, միջուկային հատկություններ, պարունակում են օքսիդազա, պրոտեազա և այլ ֆերմենտներ և հակամարմիններ կրող հանգիստանալով՝ մասնակցում են իմունիտետի առաջացման մեջ: Կորիզի ձևի և զտնավորման տատիճանի համեմատ, Շ ի լ ի ն գ ը նեյրոֆիլները բաժանում է չորս ենթատեսակի:

Մ ե զ ի ն ա ա կ ո ր ի զ ա վ ո ր ն ե ր ի կորիզը բաժանված է բարակ թելակերպ կապով իրար միացած առանձին կտորների միմյանց համ անցնելով: Նրանց քիվը տարեցց հաճախ 3—ից մինչև 5—ի սահմաններում է տատանվում. ոչխարները երբեմն ունենում են 6—8 անկմենատվոր բջիջներ, որոնք (անկմենտները) անցավորված են մերթ շղթայի օղերի պես, մերթ խիտ իրար վրա են ընկած: Քրոմատինով հարուստ կորիզը լավ է ներկվում մուգ-մանիշակագույն գունդ: Կառուցվածքը լավ է արտահայտված:

Ծ ո ւ պ ի կ ա կ ո ր ի զ ա վ ո ր ն ե ր ի ամրոցիկան, անկմենտներ չբաժանված կորիզը մերթ ցուպիկի պես երկարաձգված է, մերթ պարկի պես կլորացած համ կիսալուսնաձև և համ S տառի նման: Մեծ մասամբ կորիզը իր ամրոցի տարածության վրա մեծնուն լայնություններ ունի, երբեմն բևեռներում զնգասեղաձև լայնացած է, ունի նեղ ա ց ո ւ մ ն ե ր:

Պ ա տ ա հ ի ն ե յ ր ո ֆ ի լ ն ե ր ն ունեն լայն, կճնապոտում վրա ընկած (բակլայաձև), երբեմն քիչ երկայնած երբեմն կորիզ, որն ավելի քիստլ է ներկվում, քան մեծահատատիկներինը և ավելի փխրուն է երևում: Իրենց մեծությամբ ու ներկվելու հատկությամբ, ցուպիկակորիզավորներից քիչ են տարբերվում:

Մ ի կ ր ո ց ի տ ն ե ր ը մեծությամբ նեյրոֆիլների մյուս ձևերից խոշոր չեն: Պրոտոպլազման վարդագույն, բաց-կապտավուն կամ ծխագույն է, մանր, նուրբ և անհամասեռ բաշխված հատիկավորություններով: Հյուծվելի, մասնիվ կորիզը մեծ մասամբ անկանոն կլոր, երբեմն՝ բակլայաձև է լինում: Ներկվում է անհամասեռ. բաց գույնի բծերի պես հանդես են գալիս կորիզի վատ ներկվող մասերը, որոնք հերքիափոխվում են մուգ ներկվածների հետ:

Է ո զ ի ն ո ֆ ի լ ն ե ր ը երբեմն մեծությամբ մոտ են կանոնավոր նեյրոֆիլներին: Մեզմ ներկվող պրոտոպլազման լավ լեցուն է աքիզոֆիլ, բաց-կարմրավուն, առատիկ լուսարձակ, խոշոր հատիկավորություններով:

մերքի կլոր կամ ձվաձև, մերքի անկյունավոր, անգամ ցուպիկաձև հատիկները սերտ են տեղավորված։ Նրանց մեծությունը տարբեր է կենդանու տեսակի համեմատ։ Ձիերինը՝ խոշոր ու հրուքային են, մյուս կենդանիներինը՝ նշանակալից չափով մանր։ Կորիզը մեծ մասամբ անզգենասվորված է, երբեմն երկարաձգված, երշիկաձև և հաճախ հատիկավորությամբ է ծածկված։ Ներկվում է ծավալուն կերպով մուգ-մանիլակագույն, կատուզմունքը չավ չի արտահայտված։

Բ ա զ ո փ ի լ ն ե ր։ Բազոֆիլը համարյա անկախ պրոտոպլազմական տեղավորված հատիկավորություններ են։ Մերքի խոշոր, կլոր, մերքի մանր, անկյունավոր, երկարաձգված հատիկները փերուն կերպով այս ու այն կողմ են ընկած պրոտոպլազմայում։ Երբեմն նրանք հավաքվելով կույտ են կազմում որևէ մի տեղամասում։ Մանր հատիկավորությունը սովորաբար ամբողջ պրոտոպլազման է լցնում, ավելի խոշորը՝ նրա մակերեսի մի մասն է միայն ծածկում։ Բազիլը մշակելիս հատիկները ջրում հեշտությամբ են լուծվում։ Մեզի գունավորման հետևանքով կորիզը վատ է ներգծված, ներկվում է մեծ մասամբ ծավալուն կերպով մանիլակագույն։

Լ ի մ ֆ ո ց ի տ ն ե ր։ Լիմֆոցիտների մեծությունը տատանվում է 7–ից մինչև 19 միկրոնի սահմաններում։ Տարբերում են մեծ, միջակ ու մանր ձևեր։ Կորիզը մեծ մասամբ տեղավորված է արտակենտրոնաբար և ներկվում է քանոք մուգ-մանիլակագույն, կազմվածքը լավ է արտահայտված։ Իր ձևով կլոր կամ ձվաձև լինելով, նա լիմֆոցիտի մեծ մասն է կազմում։ Աշքատ պրոտոպլազման չրջապատում է նրան բարակ ու նեղ չրջանակի պես, նրա պլխավոր զանգվածը հաճախ մի կողմ է մղված և կիսալուսնի պես է տեղավորված։ Քանի որ պրոտոպլազմայի պերիֆերիկ մասերը սովորաբար ավելի ուժեղ են ներկվում, քան կորիզի սահմանակից կենտրոնականները, կորիզի երկարությամբ հանդես է գալիս պարզ երևացող բաց գույնի մի չերտ—պերինուկլեար գոտի։ Երկնագույն ներկվող պրոտոպլազման հատիկավորություններից զուրկ է։ Երբեմն հայտաբերում են մանր, ալ-կարմրագույն առանձին հատիկներ (ազուրոֆիլ հատիկավորություններ)։

Մ ո ն ո ց ի տ ն ե ր ը— ամենամեծ արյան ամենախոշոր բջիջներն են։ Նրանց մեծությունը տատանվում է 12–ից մինչև 24 միկրոնի սահմաններում։ Լայն խառով կորիզը ծածկող պրոտոպլազման ներկվում է մոխրագույն, բաց-մանիլակագույն կամ կապույա-մոխրավուն։ Գունավորումն ավելի մեղմ է, քան լիմֆոցիտներինը, պերինուկլեար գոտին բացակայում է։ Պրոտոպլազմայում երբեմն հայտաբերում են ազուրոֆիլ հատիկավորություններ և վակուոլներ։ Ակոցին կորիզն ավելի մեղմ է ներկվում, քան լիմֆոցիտներինը և իր ձևով չափազանց բազմազան է, մերքի ձվաձև կամ կլոր, մերքի փիլ կամ շատ խոր փոսերով, որից նա բակլայաձև տեսք է ընդունում։

Տ յ ո ւ ր կ ի բ ջ ի ջ ն ե ր ն իրենց ձևով ու մեծությամբ նման են մեծ լիմֆոցիտներին։ Ավելի սակավ են հանդիպում էրիտրոցիտներից քիչ մեծ բջիջներ։ Ձևն՝ ամենից հաճախ կլոր է, երբեմն ձվաձև, սակավ դեպքերում՝ անկյունավոր։ Պրոտոպլազման ներկվում է մուգ-կապտագույն, ավելի ուժեղ ու սուր, քան լիմֆոցիտներինը։ Շատ բջիջներում պերինուկ-

ԱՐՅԱՆ ԿԱՐՄԻՐ ՄԱՐՄՆԻԿՆԵՐ

ԷՐԻՏՐՈՑԻՏՆԵՐ



Նորմալ



Հիպոքրոմ

Պոյքիլոցիտոզ



Ժուլիի մարմնիկներ

Անիզոցիտոզ

Պոլիքրոմազիա

Կաբոյի մարմնիկներ

Բազոֆիլ պունկտացիա

Մեգալոբլաստներ

Կորիկի վտարուժը

Նորմոբլաստներ

չափ պտույտ չավ է նկատվում։ Մեծ մասամբ կլոր կամ ձվաձև կորիզը անշարժորեն է մերթ բջջի մեջտեղում, մերթ մի կողմ է տղված։ Ներկվում է անհամաչափ մանրէշոկապուկն։ Կաղմվածքը լավ է արտահայտված։

Լեյկոցիտների կենսաբանական նշանակությունը շատ մեծ է—նրանք որպես ակտիվ պաշտպաններն են տյուսլլ ինֆեկցիաների և թնավոր ների դեմ և նրա չարագույն քիմիատաքհերը։ Վնաստիք ազդեցություն ներ դեմ պայքարելիս որպեսիմբը լեյկոցիտների կենսաբանական հատկությունները, նրանց ամբոխման շարժումները, ֆագոցիտոզը, պրոտեոլիտիկ և օքսիդացնող ֆերմենտների առկայությունը, անտիտոքսին և արնֆոն-նյութեր կազմելու ընդունակությունը, որոնք մ ա բ ե լ ի նորագույն աշխատություններին համաձայն, նպաստում են հյուսվածքների ամեն։

Տ ր ո մ բ ո ց ի տ ն ե ր ը — արյան քիմիական— կլոր, ձվաձև, երբեմն ձվաձև կաթե ցուպիկի պես կամ կիսալուսնի ձևով կորացած պրոցեսներ են։ Նրա մեծությամբ տարբերում են մանր, միջակ (2—3 միկրոն) և մեծ արոմբոցիտներ։ Առողջ մեծերի արյան մեջ երբեմն հանդիպում են հսկայական ձևեր, որոնք լիմֆոցիտից ոչ պակաս։ Մեծ քանակությամբ են գտնվում արյան ապրելուց հետո։

Քներկված պրեպարատներում երբեմն խոշոր կուլտերով անցավորված արոմբոցիտները—մոխրավուն փոքրիկ պրոցեսներ են մուտ կենսաբանով և թաց դուլնի պերիֆերիայով։ Նրա ֆիկսիտոն մշակելիս նրանք ազգի են ընկնում երանց վատ-մանրէշոկապուկն գունավորությամբ։ Բջջային կազմվածքը սովորաբար քուլլ է արտահայտված։

ԱՐՑԱՆ ՁԵՎԱՎՈՐ ՏԱՐՐԵՐԻ ՀԱՇՎԱՐԿՈՒՄԸ

Վերյան ձևավոր տարրերի քանակի որոշումը կատարվում է այդ տարրերը հաշվիչ խցիկում հաշվելով։ Ամենահարմար լայն չափով է տարածված Թոմա-Ցեյսի խցիկը, որը բաղկացած է հաշվիչ խցիկից ու նրան խառնիչ-



Նկ. 104. Թոմա—Ցեյսի խցիկը

ներից, որոնցից մեկով օգտվում են էրիթրոցիտները հաշվելիս, մյուսով՝ լեյկոցիտների քիմը որոշելիս։

Թոմա-Ցեյսի խցիկը (կամերան)—առարկայական մասիվ մի ապակի

է, որի մեջտեղում հիմնովին կլորով ամրացրած է մի մեծ ծածկապակի կլոր անցքով, լայնությամբ մոտ 1,2 սմ հիմնատրոնում։ Շնորհիվ պրան գոյացած փոսի հատակում ամրացրած է կլոր, տրամագծով մոտ 1 սմ ապակյա մի քիչիկ (կլորակ), որը 0,1 սմ բարակ է իրեն շրջապատող առաջկա ապակուց։ Կլորակի եզրերի և առաջկա ապակու միջև առացված է փոքրիկ օդակի պես մի ակոս 0,1 սմ լայնությամբ, որի հատակն է կազմում առաջկա ապակը։



Նկ. 105. Բամա—Ձերսի ցանցը

Կլորակի վրա փորագրված ցանցը բաղկացած է 16 իրարից կրկնակի գծերով բաժանված 16 մեծ քառակուսիներից։ Ուղղանկյուն մեծ քառակուսին բաժանված է 16 փոքրերի, որոնք անդամավորված են չորս կարգի իրար վրա։

Փոքրիկ քառակուսու լուրաքանչյուր կողմը հավասար է $^1/_{10}$ մմ բարձրությունը՝ $^1/_{10}$ մմ, ծավալը՝ $^1/_{1000}$ խ. մմ։ Այսուն վերցնելու և համապատասխան նոսրացում պատրաստելու համար օգտվում են խառնիչներով։ Էրիտրոցիտների խառնիչում, որի մազանոթը 10 մասի է բաժանված, արյունը կարելի է առաջացնել 1:100—1:200 և նվազի, լեյկոցիտների խառնիչում (մելանժերում)՝ 1 : 10։





Նկ. 106. Բյուրկերի ցանցը

Էրիտրոցիտաների Ճշգրիտ հերպով հաշվելու համար անհրաժեշտ է ճշտությամբ վերցնել արյան մի որոշ ծավալ, ճշտությամբ նոսրացնել այն թեախոտական լուծույթով կամ Գ ա յ ե մ ի հեղուկով, կանոնավորապես լցնել խցիկը, ճշտությամբ հաշվել 3—5 մեծ քառակուսիներում գտնվող բոլոր բջիջները, և, վերջապես վերահաշվել նրանց քիվը 1 խ. մմ շնորհացված արյան մեջ։

Հետազոտության տեխնիկան։ Ծակելու միջոցով առացված մի կաթիլ արյունը քաշում են մազանոթի մեջ մինչև 0,5 կամ 1,0 նշանը և

աշխատանք մինչև 101 նշանը ծնում են Գայեմի հեղուկը*) կամ բնախտահան լուծույթը։ Սեղմելով խառնիչի ծայրերը մատներով և զգուշությամբ պահելով այն հորիզոնական դրությամբ մեջ, հեղուկը խառնում են մի քանի րոպե, մինչև համասեռ խառնուրդ ստացվելը։ Աշխատանք, հեռացնելով մազանոթի ներսի պարունակությունը, նախապես սրսկան մի փոքրիկ կաթիլ վչում են խցիկի ցանցի վրա և զգուշությամբ ծածկում ծածկապակիով։ Ճշգրիտ արդյունք ստանալու համար, ծածկապակին պետք է այնպես դնել, որ խցիկի բարձրությունն իրենք 0,1 մմ լինի։ Դրա համար ապակին մատների ծայրերով սեղմելով խցիկին և քնքշակի տեղափոխելով հարմարացնում են մինչև մանրադիտակային սերտ լվծելը։ Նյուտոնի օղակների հայտնվելը ցույց է տալիս, որ խցիկը կանոնավոր է լցված։

Մուտքելով, արդյոքում, ցանցը ծածկող խոշի հաստությունը, խցիկը տեղափոխում են մեկրոտակոպի տակ և, մի քանի րոպե հանգիստ թողնելուց հետո, մինչև որ էրիտրոցիտները հատակը նստեն, սկսում են հաշվել։



Նկ. 107. Էրիտրոցիտներ հաշվելու սքեմաը

Երբ խցիկը կանոնավոր է լցված, էրիտրոցիտները բավականին համաչափ են բաշխվում ցանցի մակերեսին, ընդ որում նրանց քիչն առանձին քառակուսիներում համեմատաբար փոքրիկ սահմաններում է տատանվում։ Իսկ այն դեպքերում, երբ ընդունված մեթոդիկայի չեղումներ են արված, բջիջները տեղափոխում են շատ քանդեր, կուլտերով և հաշվելիս, քիվերի մեջ խոշոր տարբերություններ են առաջվում, որոնց անհամաչափ բաշխման հետևանքով։

Հաշվումն սկսում են առվորաբար մեծ քառակուսու վերևի ձախ անկյունում գտնվող փոքրիկ քառակուսուց, այնուհետև հերթով անցնում են երկրորդ, երրորդ ու չորրորդը վերի կարգում։ Վերին կարգը հաշվելուց հետո անցնում են նրա տակ գտնվող երկրորդին, բայց գալով արդեն հակառակ ուղղությամբ, ինչպես նկարում ցույց է տրված, այսինքն՝ աջից դեպի ձախ։ Ամեն կարգում ուղղությունը փոխելով, հաշվումը վերջացնում են վարի ձախ քառակուսում։

Մինչև բջիջը երկու անգամ չդրանցելու համար հանձնարարում են մշտապես հետևել մեթոդիկայով առաջնորդվել։ Փոքրիկ քառակուսու մեջտեղում տեղափոխված էրիտրոցիտները հաշվելուց հետո, ավելացնում են նրանց քիվ վրա քառակուսու վերևն ու ձախ գծերին կպած, ինչպես նաև ձախ վերի ու վարի անկյուններում գտնվող բջիջները։ Ամբ գծին կպածները քողնում են գծի աջ գտնվող հետևյալ քառակուսու, վարի

*) Գայեմի հեղուկի կազմը—Hydrarg. bichlorati 0,5, Natr. sulfur. 5,5, Natr. chlorati 1,0, Aq. destil. 200,0.

պծին կպածները՝ վարի քառակուսու վրա։ Այդպիսով, միանգամայն ուշադրությունն չեն դարձնում, քե որ քառակուսու մեջ է պատկում բջջի մեծ մասը։ Կարևորն այն է, քե որ պծին է նա կպած։ Որքան շատ քառակուսիներ են հաշվված, իհարկե, այնքան էլ ճշտությունն են հետազոտության արդյունքները։ Ճշգրիտ ավյալներ ստանալու համար պետք է հաշվել առնվազն հինգ մեծ քառակուսի։ Այն դեպքերում, երբ մոտավոր ավյալներ են միայն պետք, սահմանափակվում են 2—3 մեծ քառակուսի հաշվելով։

Հաշվելիս որոշում են միջինը՝ բոլոր հաշված բջիջների քիվը բաժանելով նրանց պատապարող քառակուսիների քիվի վրա։ Միջինը ցույց է տալիս էրիտրոցիտների քիվը նոսրացրած արյան $^1/_{4000}$ խ. մմ-ում։ Բազմապատկելով ստացված միջինը 4000-ով և նոսրացման ստուգանակով (100 կամ 200), որոշում են էրիտրոցիտների քիվը արյան 1 խ. մմ։ Եթե վերցնենք 1:200 նոսրացում, ապա հաշվի արդյունքն ստանալու համար բավական է մեծ քառակուսու բջիջների քիվը բազմապատկել 50·000-ով։ 1:100 նոսրացման դեպքում որոնելի քիվն ստացվում է բազմապատկելով 25·000-ով։

Էրիտրոցիտների քիվն ընտանի կենդանիների արյան մեջ բավականին տատանումներ է ցուցաբերում մի շարք ոչ միայն մշտական (կենդանու տեսակը, սեռը, տիզը, հասակը և այլն), այլև ժամանակավոր պրոցեսների առնչությամբ։ Մ ա ր դ ը հետևյալ վերջնական քիվերն է տալիս.

Կենդանու տեսակը	Էրիտրոցիտների քիվը միլիոն-ներով	Կենդանու տեսակը	Էրիտրոցիտների քիվը միլիոն-ներով
Քինը միլիոնում	7—9	Նժույգը	5—6,5
Հոտատուկները	8—10	Հորթերը	5—8,5
Ջամբռներները	6—7,5	Ոչխարները միլիոնում . .	8—11
Ամերձատուները	7,5—8,0	Ուղերը	5,5—8
Միևնույն 1 տարեկան մզուկները	9	Եզները	5—8
		Կատուները	9
Տավարը միլիոնում . . .	5—7	Ձագաքները	4,5—5
Նույն քիվում		Ծովախոզուկը (ըստ Կրիժանովսկի)	4,7—6,7
Նժույգը (ցուլերը) . . .	6,5—7	Նապը (ըստ Ջայցևի)	3—5
Ջոմիները	5—6		

Փոփոխություններին մեջ էլեկտիկական առանձնապես մեծ նշանակություն են տալիս էրիտրոցիտների քիվի պակասեցման (օլիգոցիտեմիա)։ Նրանց քիվի քանակական ավելացում (պոլիցիտեմիա) ընտանի կենդանիների մեջ սակավ դեպքերում են միայն հանդիպում։

Պ ո լ ի ց ի տ ե մ ի ա յ ի պատճառն է լինում տվյալ արյան քանձրացումը, մեծ քանակությամբ ջուր կորցնելու հետևանքով։ Պատահում է այդ ատամնիկ փորլուծի, համառ փսխումի ժամանակ, էքսուդատների ու տրանսուդատների դուրսցման պահին, ծավալուն արտուցների, ատամնիկ քրտինքի դեպքում, տենդային և ինֆեկցիոն պրոցեսների սկզբնական շրջանում։

Տարբեր ատեճանի օ լ ի գ ո ց ի տ ե մ ի ա ն ը պատահում են արյան մեջ չբջջազոյգ տոքսիններ ծծած էրիտրոցիտների քայքայման

հետ կապված ինֆեկցիոն հիվանդություններով, ինչպես օրինակ, ինֆլուենցայի, կրուպոզ պնևմոնիայի, խլամոթի և այլ հիվանդություններով ժամանակ։ Ամենից նշանակալից փոփոխություններ հայտնաբերում են հաճախական անոմալիաների, օրինակ, ոչխարների քոտային հիվանդության, աղջամուղների հերմինոզների, քորամիջատային հիվանդության ժամանակ և այլ դեպքերում։ Բանակության առանձնապես մեծ պակասություն հաճախ հայտնաբերում են մի չարք պրոտոզոյ հիվանդություններով՝ պիրոպլազմոզի, նուտալիոզի, սրիպանոզոմոզի ժամանակ։ Առանձնապես խոշոր նշանակություն են տալիս օլիգոցիտեմիային ձիերի ինֆեկցիոն անեմիայի դիագնոստիկայում, որտեղ սա կլինիկական պատկերում ամենատիպիկավոր սիմպտոմներից մեկն է կատարում։

Լեյկոցիտոզների իմաստը։ Արյան նորացում պատրաստելու համար օգտվում են արյան կոպիկը մարմնիկներով հեմոլիզող լուծույթներով։ Սովորաբար գործադրում են քացախաթթվի 2% ջրային լուծույթը մեթիլենի կապույտի կամ հենցիանմիոլանի լուծույթով ներկած։ Արյան նորացումը լեյկոցիտների խառնելուց են կատարում։ Վերցնելով մինչև 1 նշանն արյուն, նորացնում են այն մինչև 11 նշանը քացախաթթվի ներկած լուծույթով և խնամքով ու զգուշությամբ, ինչպես էրիտրոցիտները որոշելիս, խառնում են։ Այնուհետև, սովորական ձևով լցնում են խցիկը (կամերան) 2—3 րոպե սպասելուց հետո, որ լեյկոցիտները ժամանակ գտնեն խցիկի հատակը իջնելու, հաշվում են ցանցի մեջ անզավթվածը բոլոր բջիջները։ Ամենից ճշգրիտ արդյունք համար կամերան, առաջին հաշվարկումից հետո մի-երկու անգամ էլ են լցնում, յուրաքանչյուր անգամ նրանց հաշվելով լեյկոցիտները։ Այս դեպքում ստացված արդյունքը—բոլոր հաշվարկումների միջին թվաբանականն է արտահայտում։ Հաշվարկումը կատարում են հետևյալ ֆորմուլայով՝

$$X=\frac{n\cdot 4000\cdot y}{400}$$

ուր n—ամբողջ ցանցի մակերեսին (400 փոքրիկ քառակուսիներում) հաշվարկված բջիջների քանակն է, 4000—նորացման աստիճանը։ Վերջնական թիվը բոլոր բնատուն կենդանիների մեջ նույնպես մեծ տատանումներ են ունենում։

Կենդանու անունը	Լեյկոցիտների քիվը 1 խ. մմ արյան մեջ
Ձի	7000—11000
Տավար	7000— 9000
Ոչխար	9000—10000
Խոզ	11000—18000
Շուն	8000—10000
Կատու	5000—15000
Ճագար	6000— 8000
Հավ	20000—35000—45000

Տրոմբոցիտների իմաստը։ Տրոմբոցիտների հաշվարկումը կատարվում է քսո Ա ն ի ս յ ի միացված արյան քսուկներում։ Քսուկը

պատրաստելու մինչդեռ բիբիճղիների հոմոպոլացիայից ձերժելու համար, մաշկի ծակումը կատարում են նրա վրա կաթեցրած ծծմբաթթվական մագնեզիումի 14% լուծույթի կաթիլի միջով։ Դուրս ելած սրյունն խմելուն և նրի խառնվում է լուծույթին, որից հոտոպոլացիան անհնարին է դառնում։ Թեսի պատրաստելու համար հղված ապակու կողով վերցնում են մի փոքր խառնուրդ, քսում են այն առարկայական ապակու վրա սովորական ձևով, քսուկ պատրաստելու կանոնով։



Նկ. 108. Ծակիչի հավելվածանոցներ

Այդ ձևով պատրաստած պրեպարատները արագ կերպով չորանում են. փիքսում են հետևյալ կազմի լուծույթում՝ սուլեմա 0,1, ատոցային քացախաթթու 6 կաթիլ, քացախ սպիրտ 100,0 ք. սմ։ Ներկում են Գիմզայի լուծույթով 1—2 ժամ։ Տրոմբոցիտները հաշվելիս նրանց քիմն արտահայտում են բիբիճղիների և էրիտրոցիտների միջև եղած հարաբերակցությունը որոշող թվով, որը ցույց է տալիս, թե 3000 հաշված էրիտրոցիտին քանի տրոմբոցիտ է բնկնում։ Բայց միաժամանակ էրիտրոցիտների որոշում կատարվի ըստ Թոմա—Ցեյսի, ապա համապատասխան վերահաշվում անելով աչքատանքի արդյունքները կարելի է արտահայտել 1 ք. մմ արյան մեջ արյան բիբիճղիների քանակությունը ցույց տվող թվերով։ Հաշվելիս օգտվում են ամպարտաճիճից կտրած հավելվածանոցով, որը ներացնելով տեսադաշտը, հեռադրությունը զգալիորեն հեշտացնում է։ Ընդհանուր առմամբ առողջ մեծ 3000 էրիտրոցիտի դիմաց միջինում 50 տրոմբոցիտ է գալիս, 1 ք. մմ—մոտ 35000 է լինում։

Տրոմբոցիտների թվի ավելացում (տրոմբոցիտոզ) հայտաբերում են մեծերի ինֆլուենցայի, ջեղմախտի, պլևրիտի, հեմոգլոբինեմիայի, օրգանների սարկոմատոզ ախտահարումների ժամանակ։

Նրանց թվի պակասեցումը, որը տրոմբոպենիա են անվանում, հայտաբերվել է մեծերի ինֆեկցիոն անեմիայի, Morbus maculosus-ի, ինֆեկցիոն բրոնխիտի և այլ հիվանդությունների ժամանակ։

Ազդեցության արդյունքը սուր տրոմբոցիտոզ է առաջացնում, ընդ որում բիբիճղիների պարունակությունը նորմայից մի-քիչ անգամ չատանում է։

Հեմոգլոբինի (*Hb*) որոշումը։ Հեմոգլոբինի պարունակությունը որոշելու ամենահատարակ և ամենատարածվածն է *Ա ս լ ի ի* առաջարկած եղանակը, որի հիմքը հելոլրիմետրիայի սկզբունքն է կազմում։ Հետազոտելի արյունը համեմատում են ազաքիվական հեմատինի ստանդարտ լուծույթի հետ համապատասխան գույնի ներկած ապակյա ձողիկների հետ, ընդ որում հեմոգլոբինի քանակությունն արտահայտում են տոկոսներով հետ *Ա ս լ ի ի* միավորներով։ Որոշումը կատարում են Սահլի հեմոգլոբինոմետրում, որը բաղկացած է արյուն վերցնելու մազանոթից՝ 20 մմ երանով, ստանդարտից, 10-ից միջին 140 թաժանումներ ունեցող գործածոթից ու պատմանդանից։ Հետազոտելի արյունը մշակելու համար

պոթնոցում են ազաքթվի n/10 լուծույթ ու թորած ջուր, մազանոթը մաքրելու համար՝ ամիակ, սպիրտ ու եթեր։

Որոշման անխնիկան շատ պարզ է։ Առաքճանավորած փորձանոթի մեջ, ուր կատարվում է հեմոգլոբինի արյան մշակումն ու նոսրացումը, նույն պոթնոցի հետ միասին զանված պիպետկայով վերցնում են մինչև 10-րդ բաժանումը ազաքթվի n/10 լուծույթ։ Այնուհետև մազանոթում ծծում են արյան մի օյուն մինչև նշված կետը (20 մմ) և, զգուշությամբ մաքրելով նրա ծայրը, անցկացնում են այն ազաքթու լցրած փորձանոթը։ Մազանոթին խոնուլն լվանում են ազաքթվի զրո մաքուր լուծույթով, հեռացնելով փորձանոթի մեջ պատերին կպած արյան մնացորդները, և այնուհետև, ծանկելով այն ռետինե փորրիկ խցանով, զգուշությամբ, ալխատելով հեղուկը չփրփրացնել, 40—60 վայրկյանի ընթացքում շուռ են տալիս։ Այդ ժամանակամիջոցում էրիթրոցիտների քայքայման միջոցին կազմված ազաքթվական հեմատինից հեղուկը քաոնձ-գնդաձույն է դառնում. խնդիրն այն է, որ պատրաստած հեղուկը հետագնան նոսրացնելով թորած ջրով, առանձ խոկ և խոկ այն գունավորումը, ինչպիսին առանգատրան ունի։ Հեղուկի քարձրությանը համապատասխանող քիվը փորձանոթում, ցույց է տալիս հեմոգլոբինի քանակությունը տոկոսներով ըստ Մ ա լ ի ի։ Որոշումը, հնարավորին չափ շուտ պետք է կատարել, ոչ ավելի, քան 5—7 րոպեում, ապա քի ոչ ազաքթվով մշակված արյունը քերնկվա լուսյն ազդեցությանից սկսում է (Մ ա ե յ ե ի ի սկզբնագոչ ֆենոմենը), որի հետևանքով առաջվում են ավելի խոշոր քիվը, որոնք Hb իրական պարունակությանը չեն համապատասխանում։ Մալիի հեմոմետրի ցուցմունքները՝ մարդու մոտ 100 համարվող նորմային նկատմամբ տոկոսներով արտահայտված հարաբերական մեծություն է։ Hb իրական պարունակությունը 100 ք. սմ արյան մեջ ցույց տվող էրյացարձակ քիվին տառնալու համար, Մալիի հեմոմետրի ցուցմունքները (տոկոսներով արտահայտած) պետք է բազմապատկել 0,17-ով (Ա ռ ա ն ց ի ա)։ Ուշադրանչյուր նոր ձեռք բերված հեմոգլոբինոմետր, նախ քան աշխատանքի գնելը, անհրաժեշտ է ստուգել և որոշումների ժամանակ համապատասխան ուղղումներ մացնել։



Նկ. 109. Մալիի հեմոգլոբինոմետրը։

Hb պարունակությունն ընտանի կենդանիների արյան մեջ տատանվում է հետևյալ սահմաններում՝

Կենդանու անունը	Hb պարունակությունը %
Ձի (ըստ Մալքմուսի)	53—84
Տավար	65
Ոչխար	47—58
Խոզ	54—61
Շուն	55—60
Կատու	70—100
Ճագար	60—69
Հավ (ըստ Ջայլսի)	58—80

Hb չատացումը (պլեոխրոմիա)—ոչ բիվածնի պարզիակ ճնշման պայմանների (նորմային հիվանդությունն) կամ սրյան շատ լուր կորցնելու հետևանք կարող է լինել տատրկ փոքրության ժամանակ, մշտապես քրոնիկա, համառախոտի փոխանցիա, միջարտաքինության ուժեղանալիս և կարտաքանքի տրանսուդատների գոյացնելիս։ Այդ հոդի մեջ զարգացած պլեոխրոմիան հաճախ հայտաբերվում է մինչի հեմոպլաստիկայի, տարափոխիկ պլեոպաշնամունիայի, Morbus maculosus-ի, ինտոքսիկացիաների և որոշ քունամորուսների միջոցին։ Ձինչի մեկանային գերհագնատության դեպքում Hb քանակը նույնպես բարձրանում է, ցուցաթվային մինչև 25 % ավելացում։ Առոդի մեջ տատրկ պլեոխրոմիան փորձնական տատրման միջոցին՝ կենդանու անթարմարար պատրաստման ցուցանիշ է։ Մեռած համարին վարժնցնելիս Hb քանակն աշխատանքից հետո անփոփոխ է մնում։

Hb պարունակության նվազումը—օլիգոխրոմեմիան—պատահում է անեմիայի հետ կապված խիստ շատ հիվանդությունների ժամանակ։ Հաճախ հայտաբերվում է այն ախտահյուծիների և ինֆեկցիոն հիվանդությունների ժամանակ, արյունհոսությունների, հյուծման, սուր քունամորուսների միջոցին և այլ դեպքերում։ Օլիգոխրոմեմիան—ամենատարբեր ծագում ունեցող անեմիաների ռոմորական սիմպտոմն է։

Օլիգոխրոմեմիան ինքնըստինքյան, անկախ էրիտրոցիտների պարունակության ու գունավոր ցուցանիշի հետ, կլինիկական մեծ նշանակություն չունի, հանդիսանալով մի սիմպտոմ, որի մեկնաբանությունը մեծ դժվարություններ հետ է կապված։ Իսկ էրիտրոցիտների հաշվարկումի ավյալների և գունային ցուցանիշի մեծությանը կապակցությամբ դնահատելիս՝ նրա նշանակությունն աճում է, քանի որ այն ժշտապես կապված է լինում կամ էրիտրոցիտների քիչ պակասեցման կամ նրանց մեջ Hb պարունակության նվազեցման հետ։ Ապա ուրեմն, օլիգոխրոմեմիան համարին օգտագործելիս որոշում է անեմիայի ոչ միայն ատաճանը, այլև նրա բնույթը։

Գունային ցուցանիշի որոշման մեթոդը պատկերացում է տալիս այն մասին, թե որքանով հագեցած են արյան կարմիր մարմնիկները Hb։ Նա տալիս է մեզ ավյալներ, որոնցով որոշվում է նորման կամ այս ու այն կողմ նզած ընդունները։ Եթե, ենթադրենք, նորմայում գունային ցուցանիշը 1 լինի, ապա երկու պայմաններից յուրաքանչյուրի փոփոխությունը՝ էրիտրոցիտների պակասեցումն արյան մեջ կամ Hb ռոկոսային պարունա-

հումքյան բարձրացումը՝ առաջ կբերի արդեն չնչումներ, ցույց տալով 1-ից ավելի համ պակաս քիմք։ Կոնցենտրացիաների այդ տեսակ փոփոխությունները՝ սխեմատիկական չափազանց կարևոր նշանակություն են համարվում։

Դանային ցուցանիշի հաշվարկումը կատարվում է հետևյալ ֆորմուլայով—

$$\frac{Hb^2}{Hb^1} : \frac{E^2}{E^1} = \frac{Hb^2 \cdot E^1}{Hb^1 \cdot E^2},$$

ուր Hb^1 և E^1 ցույց են տալիս հեմոգլոբինի և էրիտրոցիտների քանակությունն առաջ կենդանիների արյան մեջ, Hb^2 և E^2—հիվանդի արյան մեջ հայտարարության նշանակությունի և կարմիր մարմնիկների պարունակությունը։ Եթե Hb 75% և էրիտրոցիտները 8 մլն պարունակությունը վերցնենք որպես միու, դանային ցուցանիշի միավոր, ապա հիվանդի արեկ պարունակ փոփոխությունը կանգրադառնա հունֆիցիենտի վրա, առաջ բերելով ավելացում (1-ից ավելի) կամ նվազում (1-ից պակաս)։ Դանային ցուցանիշի փոփոխությունները՝ արյան անգիներացիայի պրոցեսի խանգարման ցուցանիշ են։ Այսպես, օրինակ, անգիներացիայի առատկանալիս, երբ տեղափոխը թույ է քոզնում մատղաշ, գեռ և չհասունացած էրիտրոցիտներ Hb նվազ պարունակությամբ, դանային ցուցանիշը 1-ից պակաս է լինում։ Արյունատարության նորմալ ընթացքում դանային ցուցանիշը նորմային է մոտենում։ Դանային ցուցանիշը մեծ նշանակություն ունի անեմիաների դիֆերենցիալ դիագնոստիկայում։ Միևնույն հավասար է լինում այն հետարյունհոսական անեմիաները մինչև, երբ էրիտրոցիտները ու Hb քանակությունը բացարձակապես պակասած է։ Միևնույնից բարձր է լինում դանային ցուցանիշը հեմոլիտիկ անեմիաների, միևնույնից ցածր՝ հաչորդական անեմիաների մեջ։

ԱՐՅԱՆ ՓՈՍԻԿՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՈՒՄՆ ՈՒ ՄԵԱԿՈՒՄԸ

Արյան մեկրոսկոպիկ հետազոտության համար օգտվում են սովորական առարկայական ապակուց վրա պատրաստած պրեպարատներով։ Այս դեպքում սովորաբար վերազատում են գեռ չզտրծածված ապակիները հավասար, հարթ մակերևույթ, առանց քերծվածքների, ուռուցիկությունների ու խորտուբորտությունների։ Բոլոր այս թերությունները անխուսափելիորեն քսուկի վրա են անդրադառնում, առաջացնելով ձևավոր տարրերի բաշխման անհամաչափություն, ներկի նատվածք և այլն։ Կարելի գեպքում օգտվում են երբեմն նաև հին, զտրծածված ապակիներով լավ մաքրելուց, լվանալուց և անգիներելուց հետո։

Լավ քսուկ պատրաստելու համար անհրաժեշտ են թեմամքով պատրաստած, լավ հարպատած, քիմունների և ալկալիների հետքերից մաքրած ապակիներ։ Նոր, գեռևս չզտրծածված ապակիները փուշուց ու մեխանիկական մանրիկիներից մաքրում են առաջ ջրով, այնուհետև խոզանակով չիում են առաջ ջրում և գրանից հետո 2—3 ժամ լվանում են բավականին ուժեղ հոսանքով, քիմունների և ալկալիների հետքերը հեռացնելու համար։ Լվանալուց հետո ապակիները սրբում են լոր ու փափուկ կտավից կտորով և պահում լաքնամիջ ապակյա անոթներում ապիրտե ու եթերի հավասարչափ խառնուրդում։

Թաթախված ապակիները, եղևնու յուղը բենզինի մեջ քրքված բամբակով հեռացնելուց հետո մաքրում են սաք ջրով և օճառով և ջրային բաղնիսում 50—70°-ի տակ տաքացնելուց հետո մի քանի օր պահում են քրոմի խառնուրդում*), որից հետո ողողում են հոսուն ջրով։

Թաթախելուց առաջ ապակիները ունելիով (պինցետով) հանում են անոթից և առանց մեջքով նրանց մակերեսին դիպչելու, մաքուր շորով սրբում են։

Մեծ նշանակություն ունի նաև ապերացիոն գաշտի պատրաստումը։ Այս տեսակետից ցուցաբերված անփութությունը քսուկի հատիկություններին վրա նմանապես անդրադառնում է։ Օպերացիայի տեղը պատրաստելու համար մաշկի բավականին մեծ մակերեսը հարթ խուզում են, որպեսզի սրբելու միջոցին ապակին առանձին մազերի հետ չշփվի։ Մաշկը քիչ տրորում են, մեխանիկապես մաքրելու, մաշկի ճարպը հեռացնելու համար հիմնովին սրբում են ապերտով և այնուհետև ղեզուրությամբ մաքրում են եթերով։ Բոլոր կենդանիների վրա օպերացիայի ամենահարմար տեղն են համարում ականջի արտաքին կամ ներքին մակերեսը։ Անոթների տեղական կարկամության դեպքում, որ բավականին հաճախ է պատահում տեղի ժամանակ, սրբում են վերջում են վերի կամ վարի շրթունքի մաշկը ձակիտով։

Արյան կաթիլ ստանալու համար սովորաբար օգտվում են ձակիտ դրծիքներով՝ ծայրի պատվաստելու ասեղով, ջննելի ասեղով, երբեմն՝ Ֆլեցով, հեմոգլոբինի ծայրով, մանր կենդանիների համար շատ հարմար է Ֆրանկի ասեղը։ Գործիքները, իհարկե, պատշաճ մաքրության մեջ պետք պահվեն։ Ֆրանկի ասեղները մաքրում են սովորաբար ապերտով կամ եթերով, մնացած գործիքները մեխանիկական մաքրումից հետո լավ է ամլացնել։

Մաշկը ձակելուց հետո գործ ենկած արյան կաթիլը սովորաբար բամբակով սրբում են։ Երկրորդն օգտագործում են քսուկ պատրաստելու, հեմոգլոբինը հեռացնելու, էրիտրոցիտները հաշվելու համար։ Արյան ձևավորված կաթիլը որքան կարելի է շուտ պետք է օգտագործել, քանի նա իր ֆիզիկական հատկություններն մի մասը դեռ չի կորցրել։ Արյան շուտ վրա հասնող մակարդումը՝ լավ քսուկ պատրաստելը միանգամայն անհնարին է դարձնում։

Քսուկի հենց պատրաստման պրոցեսը, այսինքն՝ արյան վերցնելն ու ապակու մակերեսին քանը՝ նույնպես արժանի է ուշադրության։ Այլևայլ սխալները և ընդունված մեթոդիկայից արված շեղումները պրեպարատի (պատրաստուկի) վրա ասատիկ անդրադառնում են, հետազոտության համար հաճախ միանգամայն անպետք դարձնելով այն։ Ուստի զարմանալի չէ, որ լավ քսուկ պատրաստելու համար ուսանողի արած առաջին փորձերը սովորաբար անհաջող են լինում։

Նյութը վերցնելու պահին առարկայական ապակին, որը պահում են ալ ձեռքում, քիմոմատի ու ցուցամատի մեջքին նրա կողերից անգամ և ա-

---

*) Քրոմի խառնուրդի կազմը՝ 100,0 քրոմաթթվական կալիումը լուծում են մի լիտր սաք ջրում և հետևյալ, մեծ զգուշությամբ ավելացնում 100,0 խ. ա. խտացրած ծծմբաթթու։

ատաղ մանկրնակին դիպչելու, զգուշությամբ արյան կաթիլին են դպցնում։ Հենց որ կաթիլն ապակու մանկրնան անցնի, ապակին խոշոր ձախ ձեռքն են փոխանցում և բութ մասի ու ցուցամատի միջև են պահում ապակու կարճ կողերից սեղմելով, բնչպես ցույց է տրված 110 նկարում։ Այնուհետև ալ ձեռքով վերցնում են դանկապակին կամ հղկված նեղ ապակի, դնում են այն առարկայական ապակու վրա արյան կաթիլին մոտիկ 45° անկյան տակ և զգուշությամբ դպցնում են արյանը, որը կպցված անկյունում մի ընթա է կազմում։ Աչխատելով չվիրավորել (չվնասել) պատրաստվող քսուկի բջիջները, զգուշությամբ, բայց քիչ սեղմելով և բավականին արագ ալ ձեռքը դնցի հակապիր դարձրած դարձնում։ Արյունը հեռանալով ձեռքի չորանալիքն, առարկայական ապակու մանկրնակը դանդնում է համարյան ու բարակ ընթով։

Պատրաստված պրեպարատները դնահատելիս, անպնաքները խոտանելու նպատակով, ուշադրություն են դարձնում քսուկի երկարությանը, լայնությանը, քանձրությանը և, վերջապես, արյան բաշխման համաչափությանն ապակու վրա։ Լավ քսուկը բավականին երկար, բարակ, բայց հնարավորության համաչափ պիսի լինի, լուսանցքներ ու դատարկություններ չպիտի ունենա։ Բացի դրանից, այդպիսի քսուկը առարկայական ապակուց նեղ պիսի լինի, եզրերն ու ծայրերը՝ հավասար։



Նկ. 110. Քսուկ պատրաստելու ձևը

Ամենն ու աչնանը նոր պատրաստած պրեպարատները չրի զուրբինների ազդեցությունից պնոց է պաչտպանել, ապա քի ալ ապակու առաջ մանկրնակին խոտացող չրի զուրբինները արագ հնմոչիզում են նրանց։ Ամառը քսուկները փչանում են ճանճերից, որոնք ագահաբար հարձակվում ու լափում են քարմ արյունը։

Աղքին չորացած պրեպարատները համարյակում են, նչելով ամոնաքիվը և քղքի եղկար ժապավենների մեջ են փաթաթում կամ հատուկ պահարանում, արկղներում կամ քղքապատնականներում են պահում։ Համարն ու ամոնաքիվը նչվում է ասվորական պրիչով կամ գնդատեղով քսուկի մեջառում։ Ուրիչ եղանականները՝ ապակու վրա հատուկ մատիանոցով ու քանարով նչելը, քղքի վրա արած գրանցումն ապակուն կպցնելը—այնքան էլ հարմար չեն։

Հաջող պատրաստած քսուկների հետագա մչակման ու պահպանման ժամանակ անհրաժեչտ է նրանց պահպանել մրջյառներից, խոնավության ազդեցությունից, լարորատորիաների համար ասվորական գուլորչիներից, քիմնականներից և ալկալիներից, ինչ-զանազան գազերի և այլ ազդեցություններից։ Քսուկի պահպանման այս բոլոր կերպությունները սատիկ անգրագետում են ներկնկիս, երբեմն անպետք գործելով անգամ լավ պատրաստած պրեպարատները։

Դնդազանու մի չարք գուտ բնախոտական վիճականները՝ աչխատանքը, ատհանգստությունը, մարտղության պրոցեսը և այլն՝ անգրագետում են

արյան պատկերի վրա, երբեմն մացնելով նրա մեջ բավականին հակառակ փոփոխություններ։ Արյան պատկերի հիշյա գնահատումը դժվարացնող այդ պրոցեսների ազդեցությունը որոշ չափով վերացնելու համար, հանձնարարում են արյան նմուշ վերցնելու մերթնապ մեքենիկա մշակել։ Քաուհենը պատրաստում են օրվա որոշ ժամանակ, ամենից լավ է առավոտյան, հենց առաջ առաջ։

Քաուհի ֆիբռոպլաստիան։ Պրեպարատի ամրապնդման ամենավատահելի միջոցը՝ նրա ֆիքսումն է մեքիլի սպիրտով։ Ֆիքսելու համար արյան քաուկը ընկղմում են մեքիլի բացարձակ սպիրտ լցրած քաղիկի մեջ, կափարիչը ծածկում ու քողնում են 3—5 րոպե։ Քաղիկի մեջ ֆիքսելը հարմար է, որովհետև հնարավոր է լինում միաժամանակ մի քանի (մինչև 4) պրեպարատ մշակել։

Բացի մեքիլի սպիրտից, որպես ֆիքսող նյութ օգտագործում են նաև ուրիշ հեղուկներ՝ էքիլի բացարձակ սպիրտ (20—30 րոպե), մաքուր ացետոն (5 րոպե), սպիրտի ու եթերի հավասարաչափ խառնուրդ (10—20 րոպե), ամբիքիվի 10% լուծույթ (½—1 ժամ)։

Տարբերման մեջոցով ֆիքսում է պահանջում Է ր լ ի խ ի մեթոդով հատարվող ներկումը միայն։ Ընտրված պրեպարատները մշակումը կատարում են չորացնող պահարանում, որի ջերմությունը հնարավոր է մինչև 120°, 1—1½ ժամվա ընթացքում։ Որոշ փորձառություն ունեցողները կարող են ֆիքսել սպիրտի այրելով։

Ներկումը Մ ա յ Հ Գ ր յ ո ւ ն վ ա լ դ ի ո ւ Լ ե յ շ մ ա ն ի մեթոդով նախնական ֆիքսում չի պահանջում, քանի որ պրեպարատն ամրապնդող ստրները հենց ներկում են պատրաստվում։

Քաուհի ներկումը մեծ ուշադրություն ու փորձառություն է պահանջում հետազոտողից։ Պետք է հիշել, որ լավ պատրաստած ու պատշաճ կերպով ֆիքսած քաուկը ներկելիս կարող է միանգամայն փչանալ։ Անհաջողությունների պատճառները են մերթ ներկի ցածր որակը, մերթ ներկման մեթոդիկայի սրոշ սխալները։

Ներկումն ըստ Պիմզայի։ Լատ Գ ի մ զ ա յ ի ներկելիս օգտվում են ներկի ալկալն պատրաստ լուծույթով, որը վաճառքի է հանվում Գիմզայի ներկ անունով։ Մի պրեպարատ ներկելու համար վերցնում են 5 մլ ից-ում ջուր, ավելացնում են նրա վրա 5 կաթիլ Գիմզայի լուծույթ և անոթն ղգուշությամբ ճոճելով խառնում են ամեմսին պատի ներկվող հեղուկը։ Ներկը պատրաստելուց հետո պրեպարատը դնում են քաղի վրա տեղավորած ապակյա ձողիկների վրա քաուկով դեպի վեր և նրա ամբողջ մակերեսը ծածկում են պատրաստված լուծույթով։

Ներկը հնարավոր քայքայվում է, անջատելով մուգ-մանիշակագույն նատվածք, որի հետևանքով հեղուկը դանդաղորեն գունաթափվում է։ Ներկումի տևողությունը ներկի որակից, լուծույթի խտությունից, ոչ ջերմությունից ու խառնվածքներից, բնչպես նաև ջրի որակից է կախված։ Սովորը քաուկներն ավելի արագ (15—20 րոպե) են ներկվում, ձվինը՝ քիչ դանդաղ (20—30 րոպե)։ Նշված ժամկետը լրանալուց հետո որպեն բավականին քայքայված ներկի լուծույթը լվանում են ջրի մեծ հոսանքով, առանց պրեպարատին ձեռքով դիպչելու։ Այդ ձևով մեքան կարելի է խուսափել քաուկը քայքայված լուծույթի նատող մասնիկներով փչանալուց։

լավ լվացած պրեպարատը չորացնում են ուշադիր զրուքյամբ և ամփոփում, մի քանի վարկյանով ընկղմում են սպիրտի մեջ՝ նրբիկի ամենալավ պիճնելիության համար։ Ապակյա սպիրտը լվանալուց, պրեպարատն արագ չորացնում ու հետազոտում են միկրոսկոպով։

Կանոնավոր ներկած քսուկը նուրբ հարթաթաղանթանյութային քանոց է ստանում։ Գերներկված քսուկները՝ քանձր մուգ-մանիշակագույն են։ Նուլյորիկ լրանդները և սալիս ալկալիական ներկումը։ Թերի ներկված, ինչպես նաև քիմիկ հետքեր պարունակող. քսուկ չլավ մշակված քսուկները ճանաչվում են իրենց մակերևույթի կոպիտ կարմրագույն երանգից։ Գերմայի ներանյութը, որ բավականին պարզ ավելիկա ունի, լավ պահպանվում է սալիս սպիտակ արյան բոլոր ձևերին, խիստ երանգավորելով նրանց առանձնահատկությունները։

Ներկումն ըստ Մայ—Գրյունվալդի։ Քսուկի մակերևույթը ծածկում են Մայ—Գրյունվալդի 20—25 կաթիլ լուծույթով, որն արագ՝ 3 րոպեում քսուկը ֆիքսում է, բայց պետք է հետևել, որ քսուկի մակերևույթը չորանա, ապա թե ոչ ներկն արագ գոլորշիանում է։ Ապակը րոպեից ներկը նոսրացնում են ավելացնելով նրա վրա 3—5 կ. սմ ջուր և ներկում են մի րոպե։ Մի րոպեից ներկի ջրային լուծույթը քաշում են, առանց քորած ջրով լվանալուս ներկի մնացորդը զգուշությամբ հեռացնում են ծծան թղթով և քսուկի մակերևույթը ծածկում են Գիմզայի լուծույթով, սովորական ձևով նոսրացնելուց հետո։ Քսուկն րոպեից ներկը լվանում են ջրի հոսանքով և պրեպարատը չորացնում սովորական ձևով։



Նկ. 111. Լվացարան

Ներկումն ըստ Լեյշմանի (Leichmann)—ամենահարմարը և արագ միքռոզնեղիցս մեկն է։ Նախնական ֆիքսում չի պահանջում։ Պրեպարատը ծածկում են Լեյշմանի լուծույթով (15—20 կաթիլ) 5 րոպեով, այնուհետև, առանց ներկը լվանալու, զգուշությամբ, կաթիլ-կաթիլ ավելացնում են նատրիումի քանակությամբ քորած ջուր (կաթիլը կաթիլի վրա) և հզոտկը ժամիով զգուշությամբ խառնում են։ Տաս րոպեից ներկի լուծույթը քորած ջրի հոսանքով հեռացնում են։ Մաքրելով սրտպիսով պրեպարատը, 2 րոպե ջրի տակ պահելուց հետո, օդազում ու չորացնում են սովորական ձևով։

Ներկումն ըստ Էրլիխի հիմնային գունավորում է տարբեր կեղծիանների հատիկավորությանը։ Պրեպարատները ֆիքսում են չոր ջերմությամբ 110—120°-ում մի ժամվա ընթացքում և ներկվում են 10—15 րոպե Էրլիխի սրիացիով։ Ներկը քորած ջրով լվանալուց հետո պրեպարատները չորացնում են օդում։

Ներկումն ըստ Շիլլերի հիմնային կերպով հայտնաբերում է substantio granulo—filamentosa-ն էրիտրոցիանոցում։ Ներկելու համար գործածում են Brillant Kresilblau-ի հագեցած լուծույթը բացար-

ձավ սպիրտում (1,0:80,0)։ Ներկի մի կաթիլը դնում են սպիրտի մյրինի վրա փռված առարկայական ապակու վրա և սրունհանա քսում են մինուճի ձևով, ինչպես արյան քսուկ պատրաստելիս։ Ապակու վրա տարածվելով, ներկը մոխրավուն-մանիշակագույն գույն է կազմում նրա մանիքներին։ Այդ ձևով մշակված ապակիները բավականին երկար պահպանվում են և անհրաժեշտության դեպքում մի քիչ կարող են օգտագործվել։

Արյան քսուկ պատրաստելիս, չորացած ներկով ծածկված ապակու վրա մի կաթիլ արյուն են կաթեցնում, սովորական ձևով քսում են և սրունհանա արագ, քանի քսուկը դեռ չի չորացել, անզգուշորեն են այն 5—10 րոպեով խոնավ խցիկ՝ substantio granulo-filamentosa-ի ներկելու համար։ Ներկից զուրս բերված քսուկը չորացնում են օդում, 3 րոպե ֆիքսում են մեթիլի սպիրտով և սրունհանա լրացուցիչ կերպով ներկում են սովորական ձևով բաա Գ ի մ զ ա յ ի։

Հատո կաթիլ պատրաստելի ու ներկելը։ Հատո կաթիլը հետազոտում են արյան մեջ պարազիտներ հայտաբերելու նպատակով, մանավանդ ենթատուբ, ինչպես նաև խրոնիկ ձևով ընթացող պրոտոզոյ հիվանդությունների ժամանակ, երբ սովորական ձևով պատրաստած քսուկի հետազոտությունն անհրաժեշտ արդյունք չի տալիս։ Հետազոտության այս մեթոդը, բացի դրանից, շատ հարմար է էոզինոֆիլների



Նկ. 113. Հատո կաթիլ

քիվը որոշելու համար։ Երբեմն օգտվում են սրանով արտոթրոցիտները հաշվելու համար, ինչպես նաև արյան բջիջների մի քանի թերթ առանձնահատկությունները (էրիտրոցիտների պոլիխրոմազիա) հայտաբերելու նպատակով։

Պրեպարատ պատրաստելու համար առարկայական ապակու վրա կաթեցնում են արյան մի խոշոր կաթիլ, անմիջապես քսքսում են այն սովոր մինչև 10-կոպեկանոց զրամի չափ և մի քանի ժամ օդում լավ չորացնում են։ Ներկելու համար զործածվում են սովորական ձևով պատրաստած Գ ի մ զ ա յ ի լուծույթը, որով ծածկում են լավ չորացրած, չֆիքսած քսուկը։ Ներկն էրիտրոցիտներին արագ հեմոլիզում է և, ինքը քայքայվելով, հեղուկի երանգն կարմիր ամպիկ է տալիս։ Որպեսզի նատռիումի չհագեցվի, Գիմզայի լուծույթը նրանք բողնից, այլ նրանցից հեմոլիզը վերջանալուց հետո, զգուշությամբ քամում են քսուկի մի եզերքը քիչ բարձրացնելով։ Ներկի առաջին բաժնի մնացորդները հեռացնում են, կոդերից զգուշությամբ ամբողջությամբ նոր պատրաստած Գիմզայի քաոմ լուծույթ (1 կ. սմ ջրում՝ 1 կաթիլ), սրունհանա քաոն իր տեղը դնելով քսուկին հորիզոնական դիրք են տալիս, նրա մանրերանը զգուշությամբ ծածկում են քաոմ լուծույթով 25—30 րոպեի ընթացքում ներկում։ Միևնույն զգուշություններով, այնասանով չխոխանել հատո կաթիլի մանրերանը, ջրի մեջ

հատանքով վնջվածես քսվում են նեղկը և պրեպարատը չորացնում, ապա նրան ուղղաձիգ դիրք։

Հաջող մշակումից կաթիլի մեջտեղը կապտավուն կամ կրնագույն է գտնում, մինչդեռ նրա եզրերը կարմրա-մանիլակագույն երանգ են ստանում։ Կնգատա-մանիլակագույն գունավորում է ստացվում չափազանց նրբակար նեղկած պրեպարատներում, ինչպես նաև ջրի ալկալիական ռեակցիայի դեպքում։

Կանանավոր նեղկված հատա կաթիլում յուրաքանչյուր բջջի բնորոշ առանձնահատկությունները բավականաչափ պարզ արտահայտված պիտի լինեն։ Վատ նեղկվելու դեպքում պարզ պատկեր չի ստացվում։ Բջիջների կորիզները վատ են արտահայտված լինում, հատիկավորությունը պարզ չի, արտաթոցիանները հազիվ նշմարելի են։

ԼԵՑԿՈՑԻՏԱՐ ՖՈՐՄՈՒԼԱՆ

Արյան ապիտակ մարմնիկների առանձին խմբերի ռեակցիայով արտահայտված քանակական հարաբերակցությունը լեյկոցիտար ֆորմուլա ասում է ստացել։ Լեյկոցիտար ֆորմուլան բազոֆիլների, էոզինոֆիլների, չորս խմբի նեյտրոֆիլների, լիմֆոցիտների ու մոնոցիտների վոխհարաբերություններն է։ Առհասարակ շատ սահմանափակ քվով հանդիպող բազոֆիլները հաշվի մեջ մեծ նշանակություն չունեն, քանի որ նրանց ավելացման կամ պակասեցման, արյան ֆորմուլան ախտահանչիվ նշանակություն չի ունենում։

Առողջ կենդանիների արյան մեջ միելոցիտներ միանգամայն չեն լինում, մասուլաները հանդիպում են չափազանց սահմանափակ քվով, 0,5%-ից ոչ ավելի, բազոֆիլների քիվը նույնպես երբեք չի գերազանցում 0,5—1%։ Այդպիսով, առողջ կենդանիների լեյկոցիտար ֆորմուլայում լավ են նեղկավորված նրա միայն հինգ հիմնական տարրերը՝ էոզինոֆիլները, ցուպիկակորիզ ու սեգմենտակորիզ նեյտրոֆիլները, լիմֆոցիտներն ու մոնոցիտները։ Սակայն լեյկոցիտար ֆորմուլայի այս հիմնական տարրերի քանակական հարաբերակցությունը առողջ կենդանիների մեջ էլ բավականին մեծ տատանումներ է ցուցաբերում ցեղի, սեռի, հասակի, կազմվածքի և մի շարք ժամանակավոր ազդեցությունների առնչությամբ։ Բայց ախտահանչիվ նշանակություն ունեցող քիվերը կամ, ինչպես անվանում են, միջնուշ կենդանու ա բ յ ա ն ա ա ա

ապխտակ արյան ֆոսֆոլյան գնահատելիս նշանակություն ունեն ոչ միայն քվլերը, այլև հաշվարկումով հայտնաբերվող ապխտակ արյան ֆոսֆոլիպիդների հարաբերությունները, ապա հնարավոր է որոշ տեսակի գինովանիների համար ժամկետին ցույց տվող ընդհանուր ախտանիշերի պարզաբերությունը: Ժամկետով արտահայտված լեյկոցիտոզը ֆոսֆոլյան, իհարկե, դեռ աշխատանքային ֆոսֆոլիպիդների և անհրաժեշտության հավասարություն չունի. սրա առավելությունն այն է, որ հիշողության մեջ լավ է գնահատվում, իսկ պրակտիկ արժեքը—որ լավ է հայտնաբերում ֆոսֆոլիպիդների պակասած մշտական տեղեկությունը:

ՁԻՄԻ, Ա. ՆԿԱ. ԱՆԱՁՈՒՆԻ ՈՒ ԵԱՆ ՍԳՈՏԱԿ ԱՐՅԱՆ ՖՈՍՖՈՒԼԻՆ

	Ֆրակցիաներ						Լիպիդներ	Ֆոսֆոլիպիդներ
	Բազոֆիլներ	Լեյկոֆիլներ	Նեյտրոֆիլներ					
			է	պ	ց	մ		
Քիչը, միջինում, ըստ միջինի . .	0,5	4	—	0,5	8,5	55	33	3,5
				59				
Տարբը, ըստ միջինի	0,5	6,5	—	—	6	23	57	7
Փոփոխման սահմանները . . .	—	4,5—8,5	—	—	4,5—8,5	19—30	47,0—64,5	5—10,7
Շատը, ըստ միջինի	1	6	—	—	3	61	23	7
Փոփոխման սահմանները . . .	0—0,75	2,5—9,5	—	—	1—6,5	41—71,5	17—32	4,5—10

Լեյկոցիտային ֆորմուլան որոշելիս, ճիշտ և արագ հաշվելու կարևորության պայմաններից մեկը միջոցիկային խիտ ճշտապահություն է: Միայն այդ պայմանում կարելի է հուսալ, որ արյան մինչև ֆուսկի վերահաշվարկումները միատեսակ արդյունք կտան: Այս անհամեմատ ամենավստահելի եղանակով է տալիս Շ ի լ լ ի ն գ ի ա ն ա ց ք ի փոփոխված մեթոդը: Այս եղանակով լեյկոցիտային ֆորմուլան որոշելու համար 200—300 բջիջ է պահանջվում հաշվել, իսկ քանի որ ֆուսկը պատրաստելու մեթոդիկայի բոլոր պահանջների ճշտապահ կատարման դեպքում անգամ լեյկոցիտները նրա մակերեսին համասեռ չեն բաշխվում, Շ ի լ լ ի ն գ ի հանձնարարում է հաշվումը կատարել քառանկյա մեթոդով: Դրա համար ֆուսկի եզրերին ընտրում են չորս անգամատ, երկուսը՝ ներքևի մասում մեկը մյուսի դեմ, և երկուսը՝ վերևում: Նշելով ընտրված կետերը եզրերում մատիտով, պրեպարատը անցավորում են միկրոսկոպի չորեական անգամի վրա և ամբացնելով այդ անցքերի միջոցով, ստանում են բնորում վերին ձախ անգամատը: Հետագոտելիս պրեպարատը շարժում են դեպի ձախ: Ընդհանրությունը բնվիռում պետք է հաշվել 50—75—ական բջիջ:

Մ ի ա ն գ ի ա ն մեթոդն այն է, որ հաշվումը կատարում են Պ ատոի նամանոգ կոպտացով, քանակի եզրից ատանց հետանալու: Դրա համար պրեպարատն այնպես են դնում, որ տեսադաշտում երևա քանակի ազատ եզրը: Սպիտակ արյան բջիջները սրատես հաշվել վերջացնելուց հետո,

ՁԻՒԻ ՍՊԻՏԱԿ ԱՐՅԱՆ ԲՋԻՋՆԵՐԸ



Նէյտրոֆիլ միելոցիտներ



Պասոֆիլներ նէյտրոֆիլներ

Մուլտիսեգմենտոյիտներ նէյտրոֆիլներ



Մեգակարիոցիտներ նէյտրոֆիլներ



Էոզինոֆիլներ

Բազոֆիլներ

անցնում են մի անասպարեզ գնդի քաշվի խորքը և համապատասխանորեն հաշվվելուց հետո, էլի մի անասպարեզ։ Այնուհետև պրեպարատը տեղափոխում են մի կողմ—տեղում մի անասպարեզ, այնուհետև՝ էլի մեկ և վերջացնում են այնուհետև կրկին քաշվի հզորը։ Անցնելով հզորով էլի երկու անասպարեզ, երեք անասպարեզ խորքն են գնում, այնուհետև պրեպարատը երկու անասպարեզ մի կողմ են քաշում և կրկին վերապատնում են քաշվի հզորը։ Այս ձևով վերջի ի վերջո հավաքում են 50—75 բջիջ և անցնում են երկրորդ քանակի հաշվմանը։

Այն դեպքերում, երբ անատանալուծի ձևերի տակ չարժուն տեղան չի լինում, հաշվումը հարմար է կատարել կիսապինով, անցնելով 3 դաշտ խորը քիչ գնով, այնուհետև կրկին վերապատնելով քաշվի հզորը։

Հաշվմանի երրորդ հիմնական կանոնը—յուրաքանչյուր հայտաբերված բջիջ անհապաղ գրանցումն է։ Այստեղ հիշողության չպետք է վստահել, քանի որ աշխատանքի ընթացքում բավականին մխոցինակ է, մանավանդ օրական մի քանի քաշվի հաշվվելիս, աստիճան հոգնեցնում է, որի հետևանքն են լինում սխալները, վրիպումները և այլն։ Գրանցումն ամենից հարմար է կատարել ընդորմի առաջարկած սխեմով, հատուկ ապյուռակներ վրա։ Սրա առավելությունն այն է, որ նա թույլ է տալիս հիմոգրաֆի վրա մի հայացք գցելով խնդրի ենթ, առանց ձանձրալի վերահաշվումների, հայտաբերված բջիջների քիվը որոշել ապյուռակի յուրաքանչյուր ուղղածիգ սյունակում գրանցում են առանձին բջիջներ ևն, տեղավորելով նրանց համապատասխան բջիջների համեմատ։ Գրանցումը կատարում են գծիկներով։ Որոշ



Նկ. 113. Հաշվարկումն ըստ Մեանդրի։

ձևի առանձին բջիջը նշում են ուղղածիգ գծով, նույն ձևի երկրորդը՝ առաջինի հետ՝ ուղիղ անկյունիկազմող հորիզոնական գծով, երրորդը—առաջինի դուրահետ ուղղածիգ գծով և այլն։

Լեյկոցիտար պրոֆիլ։ Սպիտակ արյան ֆորմուլայի կլինիկական գնահատման ժամանակ պետք է հիշել, որ նա հարաբերական մեծություն է և յուրաքանչյուր զանազան բջիջների քիվը որոշող բացարձակ քիվը չի ասում։ Նա ցույց է տալիս արյան առանձին խմբերի միջև եղած տոկոսային հարաբերակցությունը միայն։ Սակայն լեյկոցիտների հաշվառումով ըստ Թոմա—Ցեյսի հավասարելով միավոր ծավալում նրանց բացարձակ քիվը 1 խ. մմ, լեյկոցիտար ֆորմուլայի այս հարաբերական ավյալները կարելի է արտահայտել ավելի հշգրիտ քիվերով, որոնք որոշում են յուրաքանչյուր զանազան բջիջների պարունակությունը արյան 1 խ. մմ։ Այդպես ստացած որոշման այս մեթոդը՝ լեյկոցիտների բացարձակ հաշվման պատկերը՝ լեյկոցիտար պրոֆիլ անունն է ստացել։

Լրիվ պրոֆիլը որոշելու համար լեյկոցիտար ֆորմուլայի յուրաքանչյուր զանազան բջիջային ձևերի քիվը պետք է բազմապատկել ըստ Թոմա—Ցեյսի հաշվարկելիս լեյկոցիտների ընդհանուր քիվը որոշող մեծությամբ ստացին արդյունքներով։

Այդպիսով, արյան ատաուսը կարելի է արտահայտել հարաբերական (լեյկոցիտար փորմուլա) և բացարձակ (լեյկոցիտար պրոֆիլ) թվերով։ Ինչպես վերևն է ցույց տալիս, երկու մեթոդների ավյալները կհամընկնեն այն դեպքերում միայն, երբ լեյկոցիտների թիվը նորմայի սահմաններում է տատանվում։

Լեյկոցիտար փորմուլայի փոփոխությունները։ Բազմազան պաթոլոգիկ պրոցեսները, նայած նրանց բնույթին և ուժին, լեյկոցիտար փորմուլայի էական փոփոխություններ են առաջ բերում։ Հիվանդին հետազոտելիս կլինիցիստի խնդիրն այն է, որ այդ փոփոխությունները նկատի և նրանց համապատասխան գնահատական տա։

Լեյկոցիտար փորմուլայի նորմայի շեղումները էական արժեք հիմնական մոմենտից են կազմվում՝ ա) որևէ գոտի բջիջների տոկոսային պարունակության ավելացում (նվազում), բ) մատղաշ, չհասունացած ձևերի հայտնվելը և գ) բջջի՝ իրեն կատուցվածքի փոփոխություն։

Քանի որ լեյկոցիտար փորմուլան տոկոսներով արտահայտված հարաբերական մեծություն է, ապա որևէ գոտի բջիջների քվի ավելացման հետևանքով ուրիշ գոտիի տոկոսային պարունակությունը համապատասխանորեն պակասում է։ Օրինակ, արյան մեջ լիմֆոցիտների պարունակության չափազանց զնգում նեյտրոֆիլների քիվը պակասում է, էոզինոֆիլների խիստ չափազանցումը լիմֆոցիտների ու նեյտրոֆիլների վրա է անդրադառնում և այլն։ Այդպիսով, փորմուլայի մի անկյունում տեղի ունեցող փոփոխությունները նրա մյուրների խիստ վերարմարվորում են պայմանավորում, տվյալական հարաբերակցություններ շեղումներ առաջ բերելով։

Տատանումների սահմաններից դուրս տեղի ունեցող շեղումներին՝ բուշ գոտիի բջիջների ավելացման կամ պակասեցման հետևյալ անուններն են տալիս՝

Բջիջը	Ավելացում	Պակասեցում
Բ 0,5	Բազոֆիլիա	—
Է 4	Էոզինոֆիլիա	Էոզինոպենիա
Մ —		Անէոզինոֆիլիա
Պ 0,5		
Ն 3,5	Նեյտրոֆիլիա	Նեյտրոպենիա
Ն 55		
Լ 33	Լիմֆոցիտոզ	Լիմֆոպենիա
Մ 3,5	Մոնոցիտոզ	Մոնոցիտոպենիա

Մատղաշ ձևերի՝ միելոցիտների, պատանի ու ցուպիկակորիզավորների հայտնվելն արյան մեջ սովորաբար ուղեկցվում է անզմենատակորիզավոր նեյտրոֆիլների աստիճ պակասեցումով։ Այդպիսի դեպքերում փորմուլայի հաշվարկի ժամանակ ուշադրություն են դարձնում սովորական հարաբերակցությունների խոշոր փոփոխությունները նեյտրոֆիլների միելո—մատղաշ, դեռահաս ձևերը երբեմն ավելի շատ են, քան անզմենատակորիզավորները- նեյտրոֆիլների հոն քիվը խաթարված է թաժանվում, քիվերը դեպքի ժամ են տեղափոխվում։ Ա ր ն ա ը, նման շեղումների պրակտիկ նշա-

նախադիրները չհաշտվելով, **ձ ո ր ի ղ ի ս ա ղ ա շ ա ր ժ ը պ ե պ ի ա ռ ջ** պատկերավոր անունն է ստվել։

Ինֆինիտիվ հիմնաձայնիններին ժամանակ, երբ բարձր դիֆթերոնգված լիկվոցիանների արագ մաշվելու հետևանքով ձևավոր տարրերի պակասը, շնորհիվ նրանց քաշքշման պերիֆերիկ արյան մեջ, սհագին չափերի է հասնում, ոսկրածուծը ձգտելով գոյացած բացը լցնել, փոխարինել անոզ կորստյանը, իր ֆունկցիան ուժեղացնում է։ Սակայն ծանր պրոցեսների ժամանակ, շնորհ սաստիկ լուրմոծության, արյունարար ապարատն ի վիճակի չէ սհագին կորստյանը փոխարինել կատարելապես ձևավորված բջիջներով։ Պահասի լրացման համար պերիֆերիկ արյան մեջ մտած են զարձում մասագետ դեռահաս ձևեր, որի շնորհիվ հանդես են գալիս պատերի տիպիկ բջիջներ, որոնք նորմալ վիճակում չեն լինում նրա մեջ, այսինքն՝ **ա ր յ ա ն և ր թ ա ն ա ա ր գ ա ց ո ւ մ** է կարծես տեղի ունենում, պահասի լրացման այդ պրոցեսը ոսկրածուծում մատղաշ նոր ձևերի գոյացման միջոցով, անվանում են **ո ւ ն գ ի ա ն ե ր ա ց ի ա** , իսկ ֆորմուլայով նշված կորիզի անգալարժը դնդի ձևի՝ **ո ւ ն գ ի ն ե ր ա ա ի վ ա ղ ա շ ա ր ժ**։

Բացի արատահայտված հիպերլիկոցիտոզից, անգիներատիվ անգալարժը բնորոշվում է մեծ քանակությամբ ցուպիկակորիզավոր և պատառի նեյտրոֆիլներով, իսկ երբեմն՝ նաև միելոցիտներով հարստվելով։ Այդ անգալարժը բնորոշող բոլոր փոփոխությունները տեղի են ունենում ոսկրածուծում, քանի որ արյան հատանքը մտած գործող բջիջը, անկախ նրա հատակից, լիովին ավարտված ձև է հանդիսանում։ Այդպիսով, անգիներատիվ անգալարժերից անդրադարձած արյան պատկերի պոլիոզիկ փոփոխությունները ոսկրածուծի՝ տոքսիններին և փոխանակության նյութերի դեզիոն ազդեցության տակ ընթացող կենտրոնական անգիներացիայի հետևանք են հանդիսանում։ Տարբերում են՝ ա) պարզ անգիներատիվ անգալարժ, որը բնորոշվում է ցուպիկակորիզավորների փոքրիկ (13%-ից ոչ ավելի) չատացումով, ընդ որում անգիներատիվորիզավորների քիվը, շնորհիվ սուր նեյտրոֆիլյայի, նորմայի մոտ է մնում։

բ) հիպերանգիներատիվ անգալարժ, որը պերիֆերիայում տեղի ունեցող սաստիկ քայքայման և կենտրոնական ապարատում՝ ուժեղ զրգռման ցուցանիշ է։ Ընթանում է այն մեծ քիվով ցուպիկակորիզ ու պատառ նեյտրոֆիլների, ինչպես նաև առաձգին միելոցիտների հայտնվելով։ Անգիներատիվորիզավորների պարունակությունը երբեմն նորմայից բավականին ցածր է իջնում։

գ) հիպերպլաստիկ անգիներացիա։ Այս ձևն հատուկ բնորոշ է ատիպիկ ձևերի հայտնվելը։

Դեռահաս ձևերի հայտնվելը արյան մեջ, resp· կորիզի անգալարժը որևէ (անպտիկ) հիվանդության անկասկած նշան է համարվում։

Բացի արյան ֆորմուլայի resp· լուկոցիտար պրոֆիլի փոփոխություններից, քաղցկեղ հաշվվելիս ոչդպիսի պերիոդում աչքի են ընկնում բջիջների դեռահասության և բջիջային ձևերի կառուցվածքի առանձնահատկությունները։ Նեյտրոֆիլների կորիզները հյուծված են ու փխրուն, ավելի մեծ են ներկվում։ Կորիզի կառուցվածքը խրոմատինի պակասության հետևանքով պարզ չի արտահայտված, հաճախ կորիզի կազմափոխման երևույթ է նկատվում։

Պրոտոպլազման ամենից բազոֆիլային է, հյութային, նուրբ հատիկներ է տալիս, բազմաքիմ վակուոլներով է լցված։ Լիմֆոցիտների մեջ պատահում են կորիզի նուրբ կառուցվածքով մինչև ուռած միջուկներ։ Որքան ուժեղ է լինում բջիջների քայքայումը պերիֆերիայում, որքան սուբ է կորիզի տեղաշարժը, այնքան հեշտ է նկատել կառուցվածքի ավյալ վիճակների և տիպական արյան բջիջների դասակարգման համար տիպիկ փոփոխությունները։

Այդպիսի դեպքերում պաթոլոգիկ որևէ գործոնի անկասկած ազդեցությունը հաստատելու համար, բավական է քսուկի քանակի աուգում կատարել։

Հիստոգրամմայի կլինիկական նշանակությունը։ Արյան ֆորմուլան մինչև փոխանակության ակավոր փոփոխությունները և ինֆեկցիայի առաջին ազդեցության արտահայտության հանդիսանալով, ընդգծում է այդ փոփոխությունների խորությունը և ուժը, պատասխան ռեակցիայի բնույթն ու ատիճանը արյունաստեղծ ապարատի կողմից ամող գրգիռի դեմ։ Ըստ էության սա բնորոշում է իրոք արյունաստեղծ ապարատի ֆունկցիոնալ վիճակը և նրան կարելի է, արդյոք, ընդունել որպես արյունաստեղծ օրգանների կենսատանական ռեակցիա, բայց իր բնույթով ոչ էլ այնքան ոպեցիֆիկ։ Իրոք, մի շարք ըստ էության չափազանց տարբեր հիվանդություններ՝ գեղձախտ ու վզակոթի ջարդվածք, կրուպոզ պնեմոնիա և ոսկրածուծումներ՝ տալիս են ըստ էության միևնույն փոփոխությունները արյան ֆորմուլայի կողմից, և այնուամենայնիվ նա կլինիկական խոշոր նշանակություն ունի, ներկայացնելով չափազանց նուրբ մի մեթոդ, որն իր զգայունությամբ շատ դեպքերում հետազոտության ուրիշ մեթոդներից առաջ է անցնում։

Հիվանդության վուլկուսում, երբ, օրինակ, կլինիկական հետազոտությունը միանգամայն որևէ փոփոխություն չի գտնում, հեմոգրամման հաճախ անկասկած տեղաշարժեր է հայտաբերում և, մյուս կողմից, հաճախ լինում են դեպքեր, երբ հեմոգրամման ուշանում է, հայտաբերելով նորմայի չեղումներ տվնտեղ, ուր հիվանդությունը կլինիկապես արդեն վերջացած են համարում։

Հեմոգրամման զգահատելիս չպետք է մոռանալ, որ այդ նախ և առաջ կլինիկական հետազոտության մի մեթոդ է հանդիսանում։ Հեմոգրամման ճշգրիտ կերպով կարելի է մեկնաբանել ավյալ հիվանդության վերաբերող բոլոր մանրամասները կլինիկական հաշվառման ենթարկելով միայն։ Այդպես, չի կարելի այն համարել որպես յուրաքանչյուր պաթոգնոմոնիկ մի տեսակ, որն իրոք բնորոշում է հիվանդագին պրոցեսը, որպես հիվանդության միակ ճանապարհը։

Լեյկոցիտոզի ձևերից ոչ մեկը ինքնըստինքյան չի կարող ոպեցիֆիկ գործոնի կոչման համարձակություն ունենալ։ Այդ՝ հիվանդի հետազոտության մեջոցին հայտաբերված երևույթների շղթայի օղակներից մեկն է միայն։

Հեմոգրամմայի կլինիկական նշանակությունն այն է, որ նա հնարավորություն է տալիս՝ ա) բացառել արյան այլ պատկեր ավող մի շարք հի-

ՁԻՈՒ ՍՊԻՏԱԿ ԱՐՅԱՆ
ԲՋԻՋՆԵՐԸ



ՄՈՆՈՑԻՏՆԵՐ ԵՎ
ԱՆՑՈՂԻԿ ՁԵՎԵՐ

Ցրտաբեր բջիջներ

Լեմֆոցիտներ

վանգուքյուններ, բ) հայտարարել հիվանդապահին պրոցեսի ընթացքում լուսաններ, այլևայլ թարգուքյուններ, նրա ստրատեգումը և այլն, գ) հաշվառել արյունարյուր ապարատի ռեակցիան, իսկ դրա հետ միասին նաև միքսակտ փոխանակության ուղղությունը, դ) որոշել ինֆեկցիայի սկիզբն ու վերջը, ինչպես նաև նրա տոքսիկ ազդեցության ստեպհանը։

Հիմնարարության այլևայլ փոփոխականները տուբ ինֆեկցիաների միջոցին, որ խիստ չատ կարող են լինել, կարելի է ամփոփել հետևյալ հիմնական տիպերի ստահմանումների՝ նեյտրոֆիլ լեյկոցիտոզներ, լիմֆոցիտոզներ, էոզինոֆիլիաներ և մոնոցիտոզներ։

ՆԵՑՏՐՈՖԻԼ ԼԵՑԿՈՑԻՏՈԶՆԵՐ

Սուբ ինֆեկցիայի զնպքում պաշտպանության կազմակերպելիս արյունատար ապարատը առաջ է քաշում նախ և առաջ նեյտրոֆիլներին այն նպատակով, որ օգտագործի նրանց հզոր զինքը—պրոտեոլիտիկ և օքսիդացնող ֆերմենտները։ Այդպիսով, որպես տոքսիկ գրգիռ պատասխան առաջ է գալիս սուբ նեյտրոֆիլիա, որին հաճորդում են լիմֆոպենիան և անէոզինոֆիլիան, արատահայտված հիպերլեյկոցիտոզով։ Կոքիչ տեղաչարժով ու հիպերլեյկոցիտոզով ընթացող նեյտրոֆիլիան՝ արյան մեջ տեղի ունեցող ֆերմենատիվ պրոցեսների տատիկ զորեզացման ցուցանիշ է։

Ինֆեկցիայի զեմ պայքարի այս սկզբնական շրջանը Շ ի լ ի ն պ ն անվանել է Ն ե յ տ ր ո ֆ ի լ պ ա շ պ ա ն ո ւ թ յ ա ն փուլ։ Բնորոշվում է այն տատիկ նեյտրոֆիլիայով կորիզի ռեգեներատիվ տեղաշարժով, հետաշխատ աճող հիպերլեյկոցիտոզով, էոզինոֆիլների քշացումով, երբեմն՝ կատարյալ անհետացումով, արատահայտված լիմֆոպենիայով և մոնոցիտների պակասեցումով։ Այս տիպի բնորոշ թոլոր նշված զծերը ցույց է տալիս ձիու հետևյալ հեմոգրամման (կրուպոզ պնեմոնիա)*)։

Հիպերռեգեներատիվ տեղաշարժով ընթացող նեյտրոֆիլիա հայտարերում են դանը, համախ մահվամբ վերջացող ինֆեկցիաների, օրինակ, խլտխոի, տարափոխիկ պլևրոպնեմոնիայի, տավարի պերիպնեմոնիայի, գնգռախտ, դանը փարիզիաների, խոզերի կարմրուկի, խոճկորների էնզոոտիկ պնեմոնիայի, շների ժանտախտ և ինֆեկցիոն թարմաթիվ այլ հիվանդությունների ժամանակ։

Հատարակ տեղաշարժով ընթացող նեյտրոֆիլիա հայտարերում են խոշնիկ, վիրուլենտ, դանդուկ ընթացող ինֆեկցիաների (օրինակ՝ խոշնիկ խլտխոը, երբեմն տուբերկուլյոզը), տնտանուտի, ինֆեկցիոն էնդոկարդիտի, թարախակալման քիչիկ պրոցեսների, ինֆեկցիաների քիչիկ ձևերի ժամանակ և այլ զեպքերում։

Նեյտրոֆիլիան զնահատելիս անհրաժեշտ է հաշվի առնել նրա թափը, տեղաշարժի ծեծուքյունը, հիպերլեյկոցիտոզի աստիճանը, էոզինոֆիլների և լիմֆոցիտների քիվը։ Նեյտրոֆիլիայի, տեղաշարժի թուլացման, էոզինոֆիլների երևման ու լիմֆոցիտների քվի ավելացման հետ կապված պակասեցումը, հիպերլեյկոցիտոզի տահմանափակման պայմաններում՝ բարենպատա սիմպտոմ է հանդիսանում։ Իվ, ընդհակառակը, տեղաշարժի

---

*) Բ է Մ Մ Տ Մ Լ Մ
1 — 2 8 20 52 15 2
62

ամեն մի զորեղացում, վերջին էոզինոֆիլների անհետացումը, լիմֆոպլազմայի խորացումը՝ հիվանդագին պրոցեսի ապաքինում է նշանակում։

Նեյտրոպենիան սուր ինֆեկցիաների միջոցին ոսկրածուծի ընկճման ու անբավարարության պրոցեսների թուլացման ցուցանիշ է։ Ոսկրածուծի անբավարարության հետևանք հանդիսանալով, նա՝ անբարենպաստ պրոգնոստիկ սիմպտոմ է։ Միակտն չդնելը մոռանալ, որ կան նեյտրոպենիկ տիպի մի շարք ինֆեկցիաներ, որոնք բնորոշվում են արագահոսությամբ կոլիկի անգոլչարժով ընթացող նեյտրոպենիաներով։ Սրանց են վերաբերում խոզերի ժանտախտը, ձիու ինֆլուենցան և այլն։

Լիմֆոցիտոզ։ Նեյտրոֆիլների անասպոնիաը լինելով, լիմֆոցիտները որոշում են ընտանի կենդանիների օրոշ տեսակների լեյկոցիտար ֆորմուլայի բնույթը, հազորդելով նրան բնորոշ անկայունություն։ Դրա հետևանքով մի շարք զուտ բնախոսական վիճակներ, ինչպես օրինակ, լիմֆոցիտար սիստեմի քնքուշ զրգիռը չարժվելիս, մարսողության միջոցին, օրգանիզմի կոնստիտուցիոնալ առանձնահատկությունները ամենից առաջ այս խմբի վրա են անդրադառնում, առաջացնելով պարզ լիմֆոցիտոզ։ Ախտաբանական լիմֆոցիտոզներ շատ հազվաթ են պատահում։

Բ ա կ տ ե ր ի քնորհյալ համաձայն, լիմֆոցիտները օրգանիզմի ինքնապաշտպանության գենքն են հանդիսանում լեպտիդ թունքի կրող վիրաների դեմ, որոնք կամ մուտք են գործում կամ պայմանում են ենդոգեն ճանապարհով, բջիջների քայքայման հետևանքով։ Ինչ էլ որ լինի, օրոշ ինֆեկցիաներ բավականին հազվա լիմֆոցիտոզով են ընթանում. դրանք են՝ տուբերկուլյոզը, խոզերի ժանտախտը, ձիու ինֆեկցիոն անեմիան և ինֆլուենցան, իսկ մարդկանց մեջ՝ որովայնային տիֆն ու պիֆիլիսը։ Այս հոգսակի լիմֆոցիտոզները դիագնոստիկ կարևոր նշանակություն ունեն, հնարավորություն տալով ինֆլուենցան դիֆերենցնել կրուպոզ պնեմոնիայից, խոզերի ժանտախտը՝ կարմրուկից։ Ինֆեկցիոն անեմիա տարածված շրջաններում կայուն լիմֆոցիտոզները լուրջ կասկած են զարթնեցնում հնասպոսոզ ձիու վարակված լինելու առնսակցությամբ։

Բացի դրանից, մինչև մեջ լիմֆոցիտոզներ պատահում են պերոտլազմոզի, այրվածքների, երյուծի՝ տոսմոզա-պիքսային տրոպիկ կատարների ժամանակ և այլ դեպքերում։

Լիմֆոցիտոզի հակոդիր վիճակ—լիմֆոցիտոպենիա լեյկոցիտների բացարձակ քանակության տատանվի ավելացումով՝ նեյտրոֆիլիաների տվորական ուղեկիցն է հանդիսանում։ Էոզինոֆիլների տոկոսային պարունակության բարձրացումը նուլնպես անդրադառնում է լիմֆոցիտների վրա, սուր էոզինոֆիլիաների ժամանակ առաջ բերելով բավականին նշանակալից լիմֆոցիտոպենիաներ։

Դրանք մեծ մասամբ վերացող երևույթներ են, քանի որ նրանց բացարձակ քիվը, ընորհիվ սուր հիպերլեյկոցիտոզի, անգամ ավելացած է լինում։ Պրոգնոզի տեսակետից լիմֆոցիտոզը բավականին նենգ սիմպտոմ է, որի ճշգրիտ գնահատումը մեծ փորձառություն է պահանջում։

Նեյտրոֆիլիաներով ընթացող ինֆեկցիաների ժամանակ լիմֆոցիտների քանակության աճումը և միաժամանակ անգալչարժի թուլացումն ու հիպոլեյկոցիտոզի նվազումը—բարենպաստ սիմպտոմ է, իսկ լիմֆոպենիայի վերածումը (փոխանցումը) լիմֆոցիտոզի՝ առոգլացման ազդանիշ է։

Նեյրոպեպտիդներով ընթացող ինֆեկցիաներ, օրինակ, ձիու ինֆլուենցայի ժամանակ լիմֆոցիտոզը հիվանդության սկզբնական շրջանում է վկայում։ Այս դեպքում հաճախակի նկատվող փոխանցումները լիմֆոցիտային դեպի լիմֆապենիաները բարդացման, հաղորդման ինֆեկցիայի ցուցանիշ են և անբարենպաստ սիմպտոմ են համարվում։ Որոնիկ ինֆեկցիաներ, օրինակ, տուբերկուլյոզի ժամանակ լիմֆոցիտոզն ընդգծում է օրգանիզմի պատրաստակամությունը ինքնապաշտպանության համար։ Լիմֆոցիտոզի քանակացումը և միաժամանակ կորիզի անզավակի դրսեվորումը վկայում է ինքնապաշտպանության քանակման և պրոցեսի ակտիվության բարձրացման մասին։

Էոզինոֆիլիաներ։ Իրենց քանով, էոզինոֆիլիաները նշանակալից չափով բարձր են նեյտրոֆիլիաներից ու լիմֆոցիտոզներից, որոնց մեջոցին ավելի դասի բջիջների քիվը կարող է ավելանալ ընդամենը մի քանի տասնյակ տոկոսով։ Կլինիկան դեռ ամբողջ էոզինոֆիլիաներ, երբ էոզինոֆիլների պարունակությունը նորմայի դեմքց մինչև 700% է բարձրանում։

Այդպիսի չափազանց բարձր տեղաշարժեր պատահում են մի շարք ինվազիոն հիվանդությունների ժամանակ, որոնց մեջ հատուկ պետք է նշել ֆասցիոլոզը, էխինոկոկոզը, տրիխինոզը, ֆիլյարոզն ու կոկցիդիոզը։

Բավականին բարձր էոզինոֆիլիաներ առաջանում են այնուհետև, երբ նրանց ընթացքի փոխված ուղի ինֆեկցիաները, օրինակ, տուժվարի հանրահաճախ քոքատոզի, ինֆեկցիոն անեմիայի և ուրիշ հիվանդությունների մեջոցին։ Նշում են այնուհետև էոզինոֆիլիայի կապը վիզնատոտիվ սիստեմի խանգարման, n. vagus-ի տոնուսի բարձրացման և լորձաքաղանքների հիպերսեկրեցիայի հետ։ Փոքր էոզինոֆիլիաներ հայտաբերել են մենք քրոնիկ ալկոհոլիզմի, բրոնխիաների և ատամոքսի կատարների ժամանակ։ Բացի դրանից, պատահում են նրանք անաֆիլաքսիաների և մի քանի ենդոկրին հիվանդությունների ժամանակ։

Նկատելի էոզինոֆիլիայով ընթացող ինֆեկցիաներից կարելի է նշել խոզերի կարմրուկը։ Հիպերպլազիոգիտոզի, քանակում կորիզ պարունակող էրիթրոցիտների և նեյտրոֆիլների նորմայի սահմաններից չանցնող հարաբերության լիմֆոցիտների նկատմամբ հնարավորության կապակցությամբ, կարմրուկը ժանտախտից դիֆերենցող շատ արժեքավոր սիմպտոմ են համարում այդ։ Մուր անգային ինֆեկցիաների ժամանակ առաջին էոզինոֆիլների նկատ գալը արյան մեջ հիվանդության ընթացքում բարենպաստ բնույթի չափազանց արժեքավոր սիմպտոմ է համարվում։ Վերաշրջացման արշալույսին հանդես եկող նման էոզինոֆիլիաները սովորաբար քարձր վերջ չեն ունենում։ Սակայն էոզինոֆիլիայի կլինիկական գնահատման ժամանակ լուրջ դժվարություններ են հանդիպում։ Նախ և առաջ էոզինոֆիլիաները՝ այնքան էլ ճշտական սիմպտոմ չեն։ Մարդկի նեկրոզը կարմրուկի ժամանակ, փտմփուշտի քարախտակարումը էխինոկոկոզի դեպքում ոչդում է էոզինոֆիլիան, որը, ընդհանուր կլինիկական, կարծես, պարզ պատկերին, կարող է բացահայտել։

Միայն կողմից, վատ որակավորված նեյտրոֆիլիայով և կորիզի տեղաշարժով ընթացող կարմրուկի դեպք ձևերը սովորաբար էոզինոֆիլների պակասեցումով հետ անգամ կատարյալ բացահայտությամբ են ընթանում։

էպիդեմիկների մեծ պակասության պատահում է ուժգին անպակաս հիվանդությունների ժամանակ, որոնցից զորպատման չընկնում։

էպիդեմիկների կատարյալ բացակայություն հայտնաբերում են նաև անպակաս պրոցեսների, քամվող վիրուսից առաջացած հիվանդությունների, պրոտոզոյ հիվանդությունների, ինտոքսիկացիաների, ուրեմիայի ժամանակ, կինգ-ասու հոգնածից վիրահատում և այլ դեպքերում։

Նման անոմալի կայուն էպիդեմիկին ամենամեծ նշանակությունը մնում է համարվում, որ ցույց են տալիս արդարիզմի ընդունակության կորուստը դիմադրության դեմ։

ԳԼՈՒԽ 10

ԱՆԱՍՆԱԲՈՒԺԱԿԱՆ ՌԵՆՏԳԵՆՈԴԻԱԳՆՈՍՏԻԿԱ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՌԵՆՏԳԵՆՈԴԻԱԳՆՈՍՏԻԿԱ

Ռենտգենյան ճառագայթների ծագման մեխանիզմը։ *Որպես ռենտգենյան ճառագայթների գեներատոր ներկայումս օգտվում են կուլիջի խողովակով։ որը երկու էլեկտրոդ ունեցող ապակյա մի անոթ է։ Անոթից օդը հանված է այնքան, որքան այդ հնարավոր է կատարել ժամանակակից հանոցներով։ Խողովակի մի էլեկտրոդը զոդված է վոլֆրամի պարույր, մյուսին զոդված է մետաղյա էլեկտրոդ, որը վերջանում է խողովակում քիչ տեղավորված մակերեսով (ամենից հաճախ խողովակի երկարությանը նկատմամբ՝ 45° անկյան տակ), որի հետ միանում է անտիկատոդ անունը կրող ոլորված մի քիվետ։*



Նկ. 114. Կուլիջի խողովակի միացման սխեման։

